ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(74-րդ տարի) **Թիվ-5** (1639) — *Մայիս 2020*

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

Շապիկի 4-րդ էջին՝ Գր. Խանջյան <<Հայաստանի վերածնունդը>>

1- Առաջնորդող

Վաչէ Բրուտեան
Միացեալ Հայաստանի գաղափարը իտէալ եւ ուժի աղբիւր միաժամանակ (էջ 1-2)

2- Հարցազրույց

Պատասխանում է Հրանտ Մարգարյանը
Հայոց ազատամարտի դրոշը շատ վաղուց այդքան հպարտ չէր ծածանվել (էջ 3-6)

Պատասխանում է Աշոտ Մելքոնյանը
Մեր անկախությունը ծնվեց Մայիսյան հերոսամարտերի բոցերում (էջ 7-8)

3- Պատմության լուսարձակ

Միքայել Հաջյան
Շուշիի ազատագրումը. <<Հարսանիք լեռներում>> ռազմագործողությունը (էջ 9-13)

Արարատ Հակոբյան
Հայաստանի Հանրապետության պետաիրավական կառուցվածքի ազգային-ժողովրդավարական բնույթը (1918-1920 թթ.) (էջ 14-17)

4- Դեմքեր և դեպքեր

Արմեն Ասրյան
Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման պատմությունից. Արամ Մանուկյանի դերը (էջ 18-21)

Վարդան Պետրոսյան
Իրական և վիպական Դրոն (էջ 22-25)

5- Քաղաքական

Սեդօ Պոյաճեան
Վտանգուած անկախութիւնը (էջ 26-27)

Տիգրան Չանդոյան
Ինչո՞ւ Հայաստանում չի ձևավորվում քաղաքական էլիտա (էջ 28-29)

6- Հասարակություն

Սիւզան Խարտալեան
Համաճարակէն վերջ. յեղափոխութի՞ւն, թէ՞ նորաստեղծութիւն (էջ 30-31)

7- Դաշնակցական բեմ

Աւօ Գաթրճեան
«Դրօշակ»ը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան վավերագիր (մաս 3-րդ) (էջ 32-35)

8- Հայրենի եզերք

Վրեժ Նահատակյան
Ջավախքի հիմնահարցերը (Մաս 4-րդ եւ վերջին) (էջ 36-41)

9- Սփյուռք

Մկրտիչ Մկրտիչեան
Հայաստան – ՀՅԴ – Սփիւռք (5) (ժամանակակից շրջան – 4) (էջ 42-44)

Միացեալ Հայաստանի գաղափարը իտէալ եւ ուժի աղբիւր միաժամանակ

Վաչէ Բրուտեան

«Անդրկովկասի քաղաքական ամբողջութեան լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախութեան հռչակումով ստեղծուած նոր կացութեան հանդէպ, Հայոց Ազգային խորհուրդը իրեն յայտարարում է հայկական գաւառների գերագոյն ու միակ իշխանութիւն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մօտիկ օրերում կազմել Հայոց Ազգային Կառավարութիւն, Ազգային խորհուրդը ժամանակաւորապէս ստանձնում է կառավարութեան բոլոր ֆունկցիաները հայկական գաւառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»:

Ստորագրութիւն՝ «Հայոց Ազգային Խորհուրդ, 1918, Մայիս 30»:

Ահաւասիկ հայոց պետականութեան ծնունդը աւետող յայտարարութիւնը, ուր, բնականաբար, ոչ մէկ խօսք կար սահմաններու մասին: Կը խօսուէր միայն «հայկական գաւառների» մասին՝ առանց նոյնիսկ նշելու այդ գաւառները, թողելով, որ նորաստեղծ պետութեան ղեկավարութիւնը, օգտագործելով յարափոփոխ պայմանները և միջազգային իրադրութիւնը, իրականութիւն դարձնէ այն, ինչ որ անհրաժեշտ է մեր մանուկ պետութեան լինելիութեան և բարգաւաճումին համար:

Տարի մը վերջ արդէն՝ 1919 մայիս 28ին, մեր պետութեան կառավարութիւնը Հայաստանը կը հռչակէ Ազատ, Անկախ և Միացեալ: Քանի մը ամիս վերջ ՀՅ Դաշնակցութեան 9րդ Ընդհանուր ժողովը կ՚որդեգրէ այդ բանաձևը՝ իբրև ծրագրային առաջադրանք-նպատակ: Այս մէկը անփոփոխ կը մնայ մեր ծրագրին մէջ մինչև այսօր՝ Սևրի դաշնագրի և Ուիլսընի իրաւարար վճիռի իրաւական բաղադրամասերով:

Անկախութեան սերունդի տեսլականը իրականութեան վերածելու կարելիութիւնը ստեղծուեցաւ Արցախեան շարժումով, Արցախի ազատագրումով և պետականութեան ստեղծումով: Եթէ Շուշիի ազատագրումը խորհրդանիշը համարենք ատրպեճանական լուծէն Արցախի ազատագրումին, դժուար չէ եզրակացնել, որ ատիկա լուրջ և շօշափելի քայլ մըն է Միացեալ Հայաստան ստեղծելու ճամբուն վրայ: Փաստօրէն, Արցախի ազատագրումով հողահաւաքի գործընթացը ճամբայ ելած պէտք է համարել:

Արդարև, Միացեալ, Ազատ և Անկախ Հայաստանի իտէալը ոչ միայն գաղափարական, այլ նաև շեշտակիօրէն քաղաքակա՛ն արժէք է: Մեր պետութեան համար անիկա ունի ռազմավարական նշանակութիւն, եթէ, անշուշտ,

Սևրի պայմանագրի ստորագրման պահը: Սեղանի մոտ, ձախից առաջինը կանգնած է Ավետիս Ահարոնյանը

ՀՀ իշխանութիւնները քաջութիւնը ունենան զայն որդեգրելու:

Ո՞րն է, սակայն, այս իտէալին քաղաքական-ռազմավարական արժէքը:

Առաջին՝Սևրի դաշնագրով Հայաստանի նորաստեղծ պետութիւնը օրինական ճանաչման կ՚արժանանար ազգերու միջազգային ընտանիքին կողմէ, իսկ Ուիլսընի իրաւարար վճիռը իր կարգին կը յստակեցնէր Հայաստան-Թուրքիա սահմանագիծը: Իրաւարար վճիռները (բոլոր նման վճիռները) միջազգային օրէնսդրութեամբ ունին պարտադիր բնոյթ խնդրոյ առարկայ երկու (կամ աւելի) կողմերուն համար: Այն պահէն, երբ տուեալ կողմերը կը համաձայնին դիմելու իրաւարար վճիռի, սկիզբէն իսկ կ՚ընդունին այդ մէկուն իրաւացիութիւնը և պարտաւոր են գործադրելու զայն:

Երկրորդ՝ Արևմուտքը (օրին՝ դաշնակիցները) օրինական առումով մասնակից և յանձնառու եղած է թէ՛ Սևրի դաշնագրի տրամադրութիւններուն և թէ՛ Ուիլսընի իրաւարար վճիռին նկատմամբ: Այդ յանձնառութիւնը անժամանցելի է օրինականօրէն: Հայկական կողմին, ՀՀ պետութեան համար կը մնայ զայն անժամանցելի համարել նաև քաղաքականօրէն, եթէ ցուցաբերուի համապատասխան կամքը: Այս կէտը կենսական է, որովհետև Արևմուտքը, մասնայատուկ կերպով Եւրոպական միութիւնը և Ամերիկայի Միացեալ Նահանգները, հայ ժողովուրդին պարտական են վերոնշեալ յանձնառութեան բերումով: Պաշտօնական Երևանը իր արտաքին յարաբերութեանց օրակարգի սեղանին

անպայման պէտք է դնէ պարտապանութեան այս հարցը, որովհետև ատիկա հենքն իսկ է մեր պետականութեան լինելիութեան: Մեր կողմէ այս հարցի օրակարգի վրայ պահուիլը մեզմէ կը վանէ նաև այն անհարկի ճնշումները, որոնց կ'ենթարկուի մեր երկիրը ամէն քայլափոխի, Արևմուտքէն ըլլայ ատիկա թէ հիւսիսէն: Հայաստանով ու տարածաշրջանով շահագրգիռ ուժերը ոչ միայն «պահանջ» չեն կրնար ունենալ մեզմէ, այլև իրենք են, որ պիտի դրուին պարտապանի դիրքերուն: Հայաստանը կարիքը ունի իր կենսական (ու արդա՛ր) տարածքին, այն տարածքին, որմով կը բնութագրուի Միացեալ Հայաստանը, որպէսզի կարենայ գոյատևել ու բարգաւաճիլ:

Երրորդ՝ վերանկախացած Հայաստանի պարագային Լևոն Տէր-Պետրոսեանի վարչակարգը Հայոց ցեղասպանութեան ճանաչման գաղափարին մէջ կը տեսնէր միայն ու միայն ատոր բարոյական բաղադրամասը, և նոյն այդ ճանաչումը մաս չէր կազմեր վարչակազմի արտաքին քաղաքականութեան: Յաջորդող երկու նախագահներու՝ Ռոպերթ Քոչարեանի և Սերժ Սարգսեանի պարագային ճանաչման հարցը ոչ միայն մաս կազմեց երկրի արտաքին քաղաքականութեան, այլև հարստացաւ «հետևանքներու վերացում» հասկացութեամբ, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ հայութեան բազմամակարդակ ու արդար պահանջատիրութեան դիւանագիտական բանաձևումը՝ իր բոլոր բաղադրամասերով: «Հետևանքներու վերացում» տարազը նաև ամրագրուեցաւ ցեղասպանութեան համազգային հռչակագրով (յունուար 2015): Ն. Փաշինեանի իշխանութեան օրով ցարդ «հետևանքներու վերացումի» գաղափարը հնչեղութիւն չէ ստացած

Հայ-թրքական սահմանն ըստ Ուիլսընի իրաւարար վճռի



TRAITÉ

ENTRE

LES PRINCIPALES PUISSANCES ALLIÉES

ET L'ARMÉNIE

SIGNÉ

LE 10 AOÛT 1920

À SÈVRES

Սեւրի դաշնագրի բնօրինակը

միջազգային հարթակներու վրայ: Ոչ միայն այդ, այլև վերջերս նոյնիսկ փորձ կատարուեցաւ 2015ի համահայկական հռչակագրին մէջ ամրագրուած «Յիշում ենք և պահանջում» տարազը փոխարինել միայն ու միայն... «Յիշում ենք»ով:

Այս վարքագիծը կը յանգեցնէ հայկական դիրքերու տկարացումին: Փաստօրէն, այսօր Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Լաւրովի յուշումով Արցախի կապակցութեամբ բանակցութիւններու սեղանին դրուած է տխրահռչակ «փուլային» տարբերակը, որ էապէս անընդունելի է ՀՅ Դաշնակցութեան համար: «Փուլային» տարբերակին սեղան բերուիլը ինքնին հետևանք է մերօրեայ պաշտօնական Երևանի դիւանագիտական միտքին մօտ Միացեալ Հայաստանի գաղափարի բացակայութեան:

ՀՅ Դաշնակցութեան համար, կը կրկնենք, Արցախի ազատագրումը Միացեալ Հայաստան կերտելու ճամբուն վրայ գոյութիւն ունեցող փուլերէն մէկն է: Մենք խնդիր ունինք առաջին հերթին տիրութիւն ընելու Սևրով և նախագահ Ուիլսընի վճիռով ամրագրուած մեր իրաւունքներուն: Այս ընելով՝ իր տրամաբանական պարունակին մէջ զետեղած կ'ըլլանք նաև ազատագրուած Արցախին տիրութիւն ընելու մեր վարքագիծը, որովհետև, ինչպէս ըսինք, Արցախի ազատագրումը մենք կը համարենք կենսական քայլ մը, փուլ մը Միացեալ Հայաստան ստեղծելու մեր ճիգերուն մէջ:

Հետևաբար դժուար չէ նկատել, որ Միացեալ Հայաստանի իտէալը ոչ միայն գաղափար, այլև ուժի անսպառ աղբիւր է մեր երկրի լինելիութեան, կենսունակութեան և բարգաւաճումին համար, եթէ մեր պետութիւնը ցուցաբերէ անհրաժեշտ կամքը:

Պաշտօնական Երևանը պարտաւո՛ր է ցուցաբերել այս կամքը՝ ի խնդիր մեր ազգի ու պետութեան ապագային: ■

Հայոց ազատամարտի դրոշը շատ վաղուց այդքան հպարտ չէր ծածանվել

Հարցազրույց Արցախյան ազատագրական պայքարում ՀՅ Դաշնակցության մարտական գործունեության կազմակերպիչ և պատասխանատու Հրանտ Մարգարյանի հետ

- Ընկեր Հրանտ, մայիսը իրավացիորեն համարվում է հայության հաղթանակների ամիս: Այդ հաղթանակների շարքում իր փառավոր տեղն ունի Շուշիի ազատագրումը: Ի՞նչ նշանակություն ունեցավ այն Արցախյան ազատագրական պայքարի համար:

- Շուշիի ազատագրումը բազմակողմանի և շատ խոր ազդեցություն ունեցավ թե՛ Արցախյան ազատագրական պայքարի, թե՛ Հայաստանի անկախ պետականության կերտման ընթացքի վրա: Այն չափազանց կարևոր էր նաև մեր ժողովրդի ոգու ամրապնդման ու մեր պետության քաղաքական հեռանկարի առումով: Առանց Շուշիի ազատագրման՝ ազատ Արցախ, ազատագրված Արցախ, անկախ Արցախ պատկերացումն անգամ հնարավոր չէր:

Հիշում եմ՝ նախքան Շուշիի ազատագրումը ՀՀ-ում Արցախի շտաբի այդ ժամանակվա պատասխանատուն ինձ և լուսահոգի ընկեր Վահան Հովհաննիսյանին հանդիպման հրավիրեց՝ զրույցի: Նա փորձում էր քննարկել մեզ հետ, թե արդյոք հնարավո՞ր չէ խուսափել Շուշին ազատագրելու մտքից: Ապշեցի՝ ինչպես կարող էր մարդը, ով Արցախի շտաբի պետն է, այդպես մտածել: Անկախ ինձանից հարցրի՝ Դուք եղե՞լ եք Արցախում: Պատասխանը «ոչ» էր: Այդ մարդուն առաջարկեցի՝ նախ կարդացեք Ռաֆֆի, ով ասում է՝ եթե մեկը չի եղել Արևմտահայաստանում, նա չի կարող ծրագրել Արևմտահայաստանի ազատագրումը, հետո Արցախ գնացեք, Ձեր աչքով տեսեք Արցախը, Շուշին և ստեղծված վիճակը ու դրանից հետո մտածեք՝ Դուք Ձեր տեղո՞ւմ եք, թե՞ ոչ:

Չազատագրված Շուշին նստած էր Արցախի շնչի վրա: Առանց Շուշիի մենք ոչ միայն ազատագրված Արցախ չէինք ունենա, այլև հավանաբար հայաբնակ Արցախ էլ չէինք ունենա: Շուշիի ազատագրմամբ ունեցանք ազատագրված Արցախ, և հնարավոր եղավ վերականգնել Արցախի և մայր հայրենիքի կապը:

9 դար շարունակ մենք կորուստների պատմություն ենք ունեցել, և Շուշիի ազատագրումով մենք բան փոխեցինք, ու մենք փոխվեցինք, ամրացրինք մեր ազգային արժանապատվությունն ու ինքնավստահությունը: Դա հիրավի մեծ շրջադարձ էր մեր կյանքում: Մեր պետականությունը սկսեց կամա-ակամա ազգային նկարագիր ձեռք բերել, իսկ հայ ժողովուրդը՝ իր սեփական ուժերի և իր լուսավոր ապագայի հանդեպ հավատ ու վստահություն:

- Մինչ Շուշիի ազատագրումը այս բերդաքաղաքն

Հրանտ Մարգարյանը ՀՅԴ պահեստազորայինների հետ հանդիպման ժամանակ. 2019թ. հոկտեմբեր

անառիկ էր թվում, բայց հայկական մարտական ուժերը տիրացան նրան թերևս հնարավոր նվազագույն կորուստներով: Նույնիսկ ասվում էր, թե Շուշին հեշտ ազատագրվեց: Որտեղ է թաքնված այդ հաջողության գաղտնիքը՝ լավ մշակված ռազմական մարտավարությա՞ն մեջ, հայ մարտիկի քաջությա՞ն, ժողովրդի ոգո՞ւ, թե՞ այլ տեղ: Ի վերջո ի՞նչ գործոններ կատարեցին որոշիչ դերը:

- Շուշիի ազատագրումը շատ համարձակ գործ էր թե՛ ռազմական առումով, թե՛ քաղաքական իմաստով: Բայց առաջին հերթին դժվար և պատասխանատու հարց էր հենց ազատագրելու որոշումը: Ենթադրվում էր՝ մեծ են լինելու մարդկային կորուստները, իսկ ցանկալի արդյունքը չապահովելու դեպքում նույնքան մեծ ու անկանխատեսելի էին լինելու հետևանքները՝ թե՛ ներքին, թե՛ արտաքին առումով:

Նաև կար այն հանգամանքը, որ նրանք, ովքեր պետք է կայացնեին որոշումը, ընդհանրապես նույնանման չէին մտածում. ոչ բոլորն էին Շուշի ազատագրումը անհրաժեշտություն համարում, և հաճախ այն չէր համապատասխանում Արցախի հարցի լուծման իրենց պատկերացումներին:

Այնուամենայնիվ, այդ օրերի իրականությունում հնարավոր չէր նման որոշում չկայացնել. կար համընդհանուր պահանջ, ճնշող, ավելի ճիշտ՝ պարտադրող մթնոլորտ: Շուշին ազատագրելու խնդիրն այլընտրանք չուներ. նախ պահանջատեր էին արցախցիները, ապա՝ Դաշնակցությունը, որը լրջագույն դերակատարություն ուներ Արցախում, և վերջապես՝ նույն իշխանությունների մեջ առկա

ազգային թևը: Իսկ ամենակարևորը՝ հազարավոր հայորդիներ պատրաստ էին նետվելու մարտի՝ արհամարհելով վտանգը և միաժամանակ պաշտոնական Երևանի տատանումներն ու ուշացող որոշումը: Պարզ էր՝ Շուշին ազատագրելու գործողությունը սկսվելու էր որոշումով կամ առանց որոշման:

Անշուշտ, Շուշիի ազատագրման ծրագիրը վարպետորեն էր մշակվել: Այստեղ արժանին պետք է մատուցել գեներալներ Արկադի Տեր-Թադևոսյանին և Ֆելիքս Գզողյանին: Սակայն Շուշիի ազատագրման ոգին Աշոտ Ղուլյանն էր՝ Աշոտ Ասկոլկան կամ Բեկոր Աշոտը, նաև Արցախի զինված ուժերի առաջին հրամատար Արկադի Կարապետյանը՝ դաշնակ Ակոն: Մինչև հիմա ականջներիս մեջ զնգում է Աշոտի անթելից հնչող ոգևորող, պահանջող, անընդհատ մարտի կոչող ձայնը: Բեկորն էր, որ առաջ տարավ հարյուրավոր զինվորների՝ պատրաստ, ասես մագնիս դարձած, իր մարմնում ընդունելու թշնամու բոլոր փամփուշտները, Բեկորն էր, որ առաջինը բարձրացավ Շուշիի բերդի վրա՝ ասես հաղթանակի դրոշակ: Հիշում եմ՝ գործողությունը հենց նոր էր ավարտվել, տեսա իրեն. դեմքը երջանկությունից փայլում էր: Նկատեցի, որ վիրավոր է. ռումբի բեկորը հերթական անգամ մխրճվել էր ձեռքի մեջ: Ասացի՝ իջնի Ստեփանակերտ՝ հոսպիտալ: Կտրուկ մերժեց՝ ասելով, թե վտանգավոր պահ է, և ամեն րոպե հնարավոր է թշնամու հակահարձակումը: Իրական քաջ էր Բեկոր Աշոտը, հերոս: Իհարկե, քաջ հերոսներ էին նաև մյուս բոլոր ազատամարտիկները, ովքեր առանց տատանվելու նետվեցին մարտի՝ հրաշալի գիտակցելով, որ ամեն վայրկյան կարող են ընկնել դիրքային անասելի առավելություն ունեցող թշնամու կրակոցից: Նրանք երկար էին սպասել գործողության մեկնարկին, ոգևորությունը բարձր էր, գնում էին վճռականորեն, երգով ու անվախ: Աչքիս առաջ պատկերվում են Դուշման Վարդանը, իրանահայ Փոքր Հրանտը՝ Հրանտ Մինասյանը, լիբանանահայ Էլի-Գոգոն և հազարավոր տղերք, ովքեր հպարտ էին, համեստ ու ուրախ թե՛ նախքան գործողությունը, թե՛ գործողությունից հետո: Գիտակցո՞ւմ էին՝ որքան մեծ գործ էին արել, թե՞ ոչ՝ չգիտեմ, բայց շրջել էին հայոց պատմության պարտությունների էջը:

Շուշիի ազատագրումը հաջողվեց մեզ այնպես, ինչպես եղավ, նաև որովհետև մենք նախքան այդ արդեն հոգեբանորեն հաղթած էինք, իսկ թշնամին՝ պարտված:

Մի խորհրդանշական պատմություն եմ ուզում հիշել, որը գուցե էլի եմ առիթ ունեցել պատմելու:

Շուշիի գրավումից ամիսներ առաջ ընկեր Վահան Հովհաննիսյանի հետ այցելեցինք Շուշվա բարձունքների տակ ծվարած Քարին տակ գյուղ: Հերթական այցելությունն էր մեր կռվող տղաներին, բայց ստիպված էինք այն կատարել գիշերով, որովհետև ցերեկը գյուղն անշարժության էր մատնված. ցանկացած շարժվող թիրախ էր բարձունքից՝ Շուշիից: Գյուղը մենք տեսանք կամ չտեսանք գիշերով, համատարած մթության մեջ և հեռացանք գյուղից լույսը չբացված: Այցելությունը մեզ վրա ծանր ազդեցություն ունեցավ, երկար ժամանակ մտածում էինք՝ ինչ մեծ զոհաբերությունների գնով են ազատամարտիկները պահում գյուղը: Ամբողջ ցերեկը նրանք ստիպված էին անշարժ մնալ իրենց դիրքերում՝ զգուշանալով թշնամու կրակոցներից, իսկ գիշերվա մթի մեջ շարժվելիս ստիպված էին զգուշանալ Շուշվա բարձունքից անընդհատ գլորվող ժայռակտորներից, որոնք թնդանոթի արկերի նման հազարավոր բեկորների էին վերածվում՝ սփռվելով գյուղի ողջ տարածքով: Բայց մարդիկ մնում էին անտրտունջ ու անխոով՝ սպասելով Շուշիի ազատագրմանը, որը միաժամանակ ու առաջին հերթին Քարին տակի ազատագրում էր նշանակում:

Շուշիի ազատագրումից անմիջապես հետո, երբ քայլում էինք քաղաքի փողոցներով, որտեղ դեռ թարմ էր վառոդի հոտը, անընդհատ մտածում էի՝ ինչու թշնամին չկարողացավ լավագույնս օգտագործել իր դիրքային ահռելի առավելությունը, ինչու ազերիներն այսքան հեշտ լքեցին իրենց դիրքերը, քաղաքը: Պատասխանը ինքս ինձ համար հետո պիտի գտնեի, երբ կրկին իջնեի Քարին տակ:

Մինչ այդ տեսնում էի անշունչ, անհոգի, անտեր Շուշին, որն ազերիները ուրվական քաղաքի էին վերածել: Անխնամ տներն ու բակերը, անմշակ պարտեզներն ու այգիները, կեղտոտ փողոցներն ու մայթերը այնպիսի տպավորություն էին թողնում, կարծես վաղուց լքված քաղաքում էինք, թեպետ դեռ տներ կային, ուր տաք վառարանների վրա եռում էին թեյնիկները:

Մինչդեռ Քարին տակում բոլորովին այլ էր պատկերը: Գյուղը խնամված էր, այգիները՝ մշակված, մարդիկ նույնիսկ ցանք էին արել: Փաստորեն, այդ ծանր ու անտանելի պայմաններում անգամ ժողովուրդը գիշերով մշակել էր իր հողը, որովհետև այն իրենն էր, որովհետև հավատացել էր վաղվա օրվան, որովհետև հավատացել էր իր հաղթանակին ու իր ապագային: Իսկ անառիկ համարվող Շուշիում ազերիներն ի սկզբանե պարտված էին համարել իրենց: Ահա և հարցի պատասխանը:

- Դաշնակցության Բյուրոյի պաշտոնաթերթի համար արվող հարցազրույցի ժամանակ չենք կարող չհարցնել Շուշիի ազատագրության գործում Դաշնակցության ջոկատների դերակատարության մասին: Ու թեև այս հարցի շուրջ Դաշնակցությունը խուսափում է շատ բան ասելուց, խնդրում եմ, թեկուզ մի քանի նախադասությամբ, անդրադառնալ ընդհանրապես Արցախյան ազատամարտի կազմակերպման և իրականացման գործում Դաշնակցության դերակատարությանը:

- Անկեղծորեն չէի ուզենա կամա-ակամա նսեմացնել որևէ ուժի դերակատարությունը, դերակատարության

չափն ու կարևորությունը: Արցախյան ազատամարտի կազմակերպման, իրականացման հարցում բոլորն էլ ունեցել են իրենց բաժին դերակատարությունը, մեկը՝ մի քիչ մեծ, մյուսը՝ մի քիչ փոքր, բայց միշտ կարևոր ու անուրանալի: Սակայն անարդարորեն մինչ այսօր փորձ է արվում փոքրացնելու մե՛րը, լռության մատնելով՝ նսեմացնելու Դաշնակցության կատարած գործն ու ունեցած դերակատարությունը: Թեպետ հարցազրույցի ծավալը թույլ չի տալիս ըստ արժանվույն ու լրջորեն անդրադառնալ այդ ամենին, բայց պետք է փորձեմ սեղմ ու հակիրճ նշել որոշ կետեր:

ՀՅԴ ներկայությունն ու գործունեությունը Արցախում զանազան հանգրվաններ ունեցավ:

Դաշնակցությունը նախ իբրև գաղափարախոսություն մուտք գործեց Արցախ: Նախքան այն, որ մենք որևէ աշխատանք կծավալեինք Արցախում, մի խումբ երիտասարդներ ստեղծել էին մի նոր կուսակցություն, եթե չեմ սխալվում՝ «Արցախի ազգային սոցիալիստական կուսակցություն» անվամբ, և ամբողջությամբ իբրև իրենց կուսակցության ծրագիր ընդունել էին Դաշնակցության ծրագիրը: Բոլոր այդ երիտասարդները անդամագրվեցին ՀՅԴ-ին:

Դաշնակցությունը՝ իբրև ազգային-ազատագրական պայքարի գաղափարակիր կուսակցություն, այդ հանգրվանին կենսական անհրաժեշտություն էր Արցախում: ՀՅԴ-ն հորդորում և պահանջում էր հույսը չդնել ո՛չ Մոսկվայի, ո՛չ Գորբաչովի, ո՛չ պարտիայի վրա, այլ ոտքի ելնել, կազմակերպվել և պաշտպանել մեր իրավունքները՝ վստահ լինելով, որ պայքարն օրըստօրե կհզորացնի մեզ, անկարևոր կդառնան ուժերի պարզ մաթեմատիկական հարաբերությունները, և այլոց քաղաքականությունը ևս կփոխվի ի նպաստ մեզ:

Մեզ չպետք է հուսախաբ անի Մոսկվայի ադրբեջանանպաստ կեցվածքը, ոչ էլ թևաթափ պետք է լինենք ի տես պաշտոնական Երևանի անվճռականությունների: Չպետք է հակադրվել ո՛չ Մոսկվային, ո՛չ էլ պաշտոնական Երևանին, այլ լծվել աշխատանքի, կազմակերպել ազգային-ազատագրական պայքարը և մարտի դուրս գալ: Եթե կարողանանք նոր իրավիճակ ստեղծել, Մոսկվայի համար կառաջանան նոր շահեր, հետևաբար կունենա այլ դիրքորոշում, իսկ պաշտոնական Երևանը վաղ թե ուշ պարտավորվելու է տեր կանգնել իրական պայքարի դուրս եկած Արցախին:

Այդ օրերին Արցախում էր ՀՅ Դաշնակցության Բյուրոյի գործիչ ընկեր Վարանդ Փափազյանը, ով կարևոր դեր ունեցավ տեղի մեր ընկերների հետ աշխատելու, դաշնակցական մտածողության ամրագրման հարցում:

Դեռ 1990 թվականն էր, Արցախում իշխանությունը Կոմունիստական կուսակցության ձեռքում էր: Մենք համագործակցության մեջ էինք, այսպես



Պետրոն ՀՅԴ Շուշիի առանձնակի գումարտակի մարտիկների հետ

կոչված, Հայաստանի ՀՀՇ-ին հարող թևի հետ և ունեինք միացյալ շտաբ, որում ընդգրկված էին Դաշնակցության կողմից Արկադի Կարապետյանը, Գեորգի Պետրոսյանը, Ժաննա Գալստյանն ու Վալերի Բալայանը, իսկ մյուս կողմից՝ Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը, Մուրադ Պետրոսյանը և Սամվել Բաբայանը: Շտաբը ղեկավարում էր իբրև չեզոք անձ՝ Արցախի թեմի առաջնորդ Պարգև սրբազանը: Ի միջի այլոց, այդ օրերին չբացահայտված դաշնակցական էր Սամվել Բաբայանը, որը նիստերին մասնակցում էր իբրև մյուս կողմի ներկայացուցիչ:

Շտաբի նիստերից մեկին, որին մասնակցել եմ նաև ես, համոզեցինք մեկս մյուսին, որ ժամանակն է ինքնապաշտպանությունից պարտիզանական կռիվների անցնել:

Մենք անցանք աշխատանքի, գրեթե բոլոր շրջաններում ձևավորվեցին խմբեր, կոմիտեություններ, և վերջապես ձևավորվեց Արցախի կենտրոնական կոմիտեությունը: Մեր կառույցի հիման վրա կազմակերպվեց նաև ազգային-ազատագրական պայքարը: ՀՀ-ից և Սփյուռքից ժամանած փորձառու մարզիչների կողմից Արցախի տարբեր շրջաններում ու միաժամանակ ՀՀ բոլոր մարզերում նախաձեռնեցինք մարտական խմբերի կազմման, մարզումների ու զինման աշխատանքները: Շնորհիվ այն բանի, որ մեզ հաջողվեց մեծ քանակությամբ զենք ձեռք բերել և տեղափոխել նախ Հայաստան, ապա Արցախ, սկզբնական շրջանում գետնի վրա թշնամու հարաբերությամբ ունեցանք զգալի առավելություն:

Մինչ այդ արցախցին թշնամու ոտնձգություններին դիմադրում էր, ինչպես կարողանում էր՝ քարերով կռիվներից մինչև որսորդական, ինքնաշեն հրացաններով մարտեր, որտեղ չկար կենտրոնացված ղեկավարում և ծրագրում: Գործն ամփոփվում էր անասնագողությունները կանխելով, ինքնաբուխ կերպով գյուղերը պաշտպանելով: Մենք հաջողեցինք մարզված, մարտական զենքերով զինված խմբերի

միջոցով կազմակերպել շատ ու շատ շրջանների ինքնապաշտպանության գործը՝ կարգավորելով նաև կենտրոնացած հրամանատարությունը:

Արցախի ինքնապաշտպանության գործը հիմնականում ծանրացած էր տեղական ուժերի վրա. բացառություն էին կազմում Շահումյանի և Բերդաձորի ծայրամասային շրջանները, որոնք հաճախ թշնամու հարձակումների թիրախ էին, և այնտեղ մշտապես ներկայություն ունեին Հայաստանից մեր մարտական խմբերը:

Դեռ թրքական և ռուսական ուժերը ներկայություն էին Արցախում, և մենք որոշեցինք անցնել պարտիզանական պայքարի: Անհանգստությունները և մտահոգությունները մեծ էին: Պարտավորվեցինք ամրացնել շրջանների պաշտպանական հնարավորությունները, Հայաստանից մեծ թվով մարտական խմբեր փոխադրեցինք Արցախ և նախաձեռնեցինք առաջին պարտիզանական հարձակումները Խոջալուի, Լեսնոյի և Ղարադաղլուի վրա, որոնք երեքն էլ կարևոր ռազմավարական դիրք էին զբաղեցնում:

Երբ 91 թվականին Ռուսաստանն անակնկալ կերպով զորքերը հանեց Արցախից, պաշտոնական Երևանը չէր համարձակվում տեր կանգնել Արցախին: Անորոշությունը մեծ էր, բայց մեր կազմակերպության առկայությունը օգնեց վիճակից ելք գտնել: Մենք տեր դարձանք լքված ռուսական զենքին, մեր Մարտական խորհրդի հիմքի վրա ձևավորվեց զինված ուժերի հրամանատարություն՝ Արկադի Կարապետյանի հրամանատարությամբ: Իսկ քաղաքական անորոշությունից փորձեցինք ելք գտնել Գերագույն խորհրդի նոր ընտրությունների կազմակերպմամբ, և քանի որ մենք արդեն իսկ կազմակերպված էինք, ունեցանք Գերագույն խորհրդում մեծամասնություն, և ԳԽ նախագահ ընտրվեց Դաշնակցության թեկնածու Արթուր Մկրտչյանը: Անկախության հանրաքվե կազմակերպվեց, Արցախը անկախացավ:

Փաստորեն, մենք կարողացանք անդուլ աշխատանքով, պայքարով, հարյուրավոր ընկերների կյանքի գնով կարևոր, շատ կարևոր դերակատարություն ունենալ Արցախի ազատագրման և հայկական 2-րդ անկախ պետականության կերտման գործում:

Շուշիի ազատագրման գործում ՀՅԴ դերակատարությանը անդրադառնալով՝ ասեմ, որ մենք գործողությանը մասնակցել ենք միայն Հայաստանից ավելի քան 2000 ազատամարտիկներով՝ նույնքան ուժ կազմ ու պատրաստ ունենալով հերթափոխի:

Սակայն, չնայած կարևոր էր, մեր ուժերի շարունակական, կազմակերպված ներկայությունը հարցը առաջին հերթին կարևորվում էր հոգեբանական առումով: Մինչ ռուսների հեռացումը Արցախից, ինչպես արդեն ասացի, Շահումյանի և Բերդաձորի շրջաններից զատ, մենք բուն Արցախում բացեիբաց ներկայություն չէինք: Եվ քանի որ ռուսների հեռանալուց հետո անհրաժեշտ էր մենակ մնացած արցախցուն հույս ներշնչել, մենք շատ լավ պատրաստված ու զինված մի վաշտ ուղարկեցինք Ստեփանակերտ, որն անմիջապես մասնակից դարձավ Կրկժանի մարտերին: Այս վաշտի հիմքի վրա ձևավորվեց Շուշիի առանձնակի գումարտակը, որը պատվով կատարեց Արցախի բանակի բոլոր հանձնարարությունները:

Այստեղ ևս կուզեի մի դեպք հիշել. մեր վաշտը մի քանի օր էր ժամանել Ստեփանակերտ, ես վայրէջք կատարեցի Քոլատակ կոչվող գյուղում և մի անծանոթ տեղացի վարորդի հետ շարունակեցի ճամփորդությունս դեպի Ստեփանակերտ: Ճանապարհին վարորդին հարցրի՝ ինչ կա-չկա, ոնց է ժողովուրդը: Վարորդը, որ ինձ չէր ճանաչում, ասաց. «Ախպեր, հարց չկա, լիբանանցի դաշնակները՝ մինչև ատամները զինված, էնա Ստեփանակերտում են, էլ հարց չունենք»: Իհարկե, հարյուրից ավելի կռվողների մեջ մեկ լիբանանահայ կար, բայց տպավորությունն էր, որ կարևոր էր:

Խոսքս ավարտեմ մի հուշ ևս պատմելով, որն ավելի խոսուն կդարձնի այդ օրերին Արցախում մեր շուրջ տիրող մթնոլորտը:

Շուշիի ազատագրումից որոշ ժամանակ առաջ մեր դասակներից մեկը հետախուզական աշխատանքների համար տեղակայվել էր Շուշիի թիկունքում գտնվող մի գյուղում: Նոր էին տղաները տեղավորվում, ես ևս այնտեղ էի, երբ մի արցախցի տատիկ սկսեց անիծել մեզ, հետո դիմեց ինձ, թե ինչու եք ուզում այս տղաներին տանել կոտորելու: Փորձեցի հանգստացնել՝ ասելով, թե ինչու է մտածում, որ տղերքը պիտի կոտորվեն: Ձեռքն ուղղեց դեպի Շուշիի բարձունք և ասաց. «Դու գիտես՝ այնտեղ ովքեր են. ադրբեջանցի դաշնակները, նրանց հաղթել հնարավոր չէ»: Մոռացա գաղտնապահության օրենքները և ասացի. «Տատի՛, այս բոլոր տղերքը իսկական դաշնակցականներ են»: Երբ լսեց տատին այս մասին, միանգամից փոխվեց, դեմքը խաչակնքեց, ձեռքերը խաչաձև դրեց կրծքին և ասաց. «Եթե դաշնակցական եք, բան չունեմ ասելու»: Ու լուռ հեռացավ:

Մեր անկախությունը ծնվեց Մայիսյան հերոսամարտերի բոցերում

Հարցազրույց ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի հետ

- Հարգելի պարո՛ն Մելքոնյան, ի՞նչ գործոններով են պայմանավորված ցեղասպանություն վերապրած հայության կողմից 1918 թվականին ձեռք բերված մայիսյան հաղթանակները: Այս հարցը պատահականորեն չեմ տալիս, որովհետև այսօր էլ հանդիպում ենք մեկնաբանությունների, ըստ որոնց՝ Հայաստանի անկախացումը աշխարհաքաղաքական դասավորումների արդյունք էր: Եվ նույնիսկ գնահատականներ են հնչում, թե մենք ուղղակի նվեր ենք ստացել անկախությունը:

- 1918 թ. մայիսի վերջին հայոց պետականության վերականգնման դարակազմիկ իրադարձության մասին շատ է գրվել: Ուղղակի անհավատալի էր, որ Հայոց ցեղասպանությունից ընդամենը երեք տարի անց հայ ժողովուրդն այնքան ուժ գտավ իր մեջ, որ վերականգնեց պետական անկախությունը: Թերևս դրանով պետք է բացատրել մեզանում որոշ մարդկանց, իսկ օտարների պարագայում թուրք-ադրբեջանական քաղաքական ու կեղծ գիտական շրջանակներում շրջանառվող այն շինծու թեզը, ըստ որի՝ մեր անկախության վերածնունդը հետևանք էր միայն ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակի: Ավելին՝ թուրք-թաթարական շրջանակների պնդմամբ Հայաստանի անկախությունը իբր հետևանք էր իրենց բարյացակամ վերաբերմունքի, ոչ ավել ոչ պակաս՝ «իրենց Էրիվան քաղաքը մեզ զիջելու» մեծահոգության:

Իրականությունն այն է, որ հայոց պետականության վերականգնումն ունեցել է լուրջ նախապատմություն: Գաղափարական առումով այն ծնվել է 19-րդ դարում՝ ազգային-ազատագրական շարժումների բովում, իսկ գործնականում՝ 1915 թ. մայիս-հունիսին՝ Վանում Արամ Մանուկյանի ստեղծած նահանգային վարչության տեսքով: Պատահական չէ, որ Արամը Վանում կուտակած պետականաշինության ողջ ռազմաքաղաքական ու վարչական փորձը 1917 թ. վերջից փոխադրեց Երևան և հիրավի դարձավ հայոց նորագույն պետականության ճարտարապետը:

Ի տարբերություն մեր հարևանների՝ մեր անկախությունը ոչ թե մեզ տրվեց Գերմանիայի կամ Թուրքիայի հետ նախապես ձեռք բերված համաձայնության արդյունքում, այլ ծնվեց թուրքերի դեմ Մայիսյան հերոսամարտերի բոցերում: Ուստիև մեկընդմիշտ պետք է մոռացության տալ սկուտեղի վրա մեզ անկախ հայրենիք նվիրելու մասին ցնդաբանությունը: Նմանապես 1991 թ. սեպտեմբերին Արցախյան հուժկու ազատագրական պայքարի տրամաբանական արդյունքը եղավ զույգ հայկական պետությունների՝ ՀՀ և ԼՂՀ անկախության հռչակումը:

- Իսկ ինչպե՞ս կգնահատեք 102 տարի առաջ հայոց պետականության վերականգնման փաստը տվյալ պատմաքաղաքական իրականության մեջ, ինչպես և նրա նշանակությունը հայ ժողովրդի համար առհասարակ:

- 1918 թ. մայիսյան հրաշքով հիմք դրվեց ոչ միայն 1918-1920 թթ. Առաջին հանրապետությանը, այլ նաև Հայաստանի նորագույն պատմության մեջ հայոց պետականության անընդհատականությանը: Միանշանակ կարող ենք պնդել, որ չլիներ Առաջին անկախ հանրապետությունը, բոլշևիկները կյանքի չէին կոչի Խորհրդային Հայաստանը, որը նույն Հայհեղկոմի կողմից 1920 թ. նոյեմբերի 29-ին հռչակվեց խորհրդային սոցիալիստական անկախ հանրապետություն և համենայնդեպս «դե յուրե» այդ կարգավիճակը պահպանեց մինչև 1922 թ. մարտի 12-ին Անդրդաշնության և դեկտեմբերին ԽՍՀՄ ստեղծումը: Անգամ անկախության շատ

հատկանիշների կորստից հետո էլ ՀԽՍՀ-ն ԽՍՀՄ կազմում պահպանեց պետականության ցուցիչները՝ խորհրդարան, կառավարություն, սահմանադրություն, սեփական սահմաններ, և դրանց հիման վրա պայմաններ ստեղծեց 1991 թ. Երրորդ հանրապետության հռչակման համար: Ահա սա է 102 տարի առաջ մեր ժողովրդի ձեռք բերած անկախության պատմական խորհուրդը:

- **Մենք երեք տասնամյակ առաջ կրկին անկախություն ենք հռչակել, բայց շարունակում ենք խոսել պետականության գիտակցության, մեր պետության ինքնուրույնության մասին: Ձեր կարծիքով՝ արհեստակա՞ն են այս հարցադրումները, թե՞ մտահոգության իրական պատճառներ գոյություն ունեն և՛ պետականության հանդեպ մեր վերաբերմունքի, և՛ պետականության լիարժեք անկախության ապահովման, և՛ այդ պետականությունն արժևորելու մտածողության առումով:**

- Այսօր մեզանում լինում են պահեր, երբ մեր հասարակության առանձին շերտերի մոտ թերի է թվում պետականության զգացողության ու մտածողության առկայությունը: Բայց ես լավատես եմ և կարծում եմ, որ դա առաջին հերթին պայմանավորված է մեր երկիրն ավելի կատարյալ տեսնելու ցանկությամբ: 2016 թ. Ապրիլյան պատերազմը դրա վառ վկայությունն էր: Ինչ վերաբերում է մեր հասարակության այսօրվա պառակտվածությանը, համոզված եմ՝ նույնպես երևութական է ու անցողիկ: Աստված մի արասցե՝ երկրի գլխին կախվի իրական վտանգ. պետական մտածողությունն անմիջապես կգա օրակարգ: Բայց այժմ համավարակի պայմաններում, անկեղծ ասած, այդ զգացողությունը կարծես իրեն նկատել չի տալիս, հավանաբար այն պատճառով, որ այդ վտանգը մենք ուղղակի անզեն աչքով չենք տեսնում: Բայց այն արդեն լրջորեն բախում է մեր դուռը:

- **20-րդ դարի վերջին մենք ունեցանք միանգամից երկու անկախ հայկական պետություն: Առաջինը անկախացավ Խորհրդային կայսրության փլուզման արդյունքում: Արցախյան ազատագրական պայքարի արդյունքում ձևավորվեց երկրորդ հայկական պետությունը, որի տիրապետության տակ այսօր գրեթե այնքան տարածք է, որքան Առաջին հանրապետության տարածքն էր ձևավորման պահին: Հայկական իրականության առանձնահատկությունները և առկա մարտահրավերները առաջադրո՞ւմ են արդյոք առանձնահատուկ խնդիրներ:**

- Այո՛, Արցախի Հանրապետությունը ձևավորվեց գրեթե նույնքան տարածքի վրա, որքան Առաջին հանրապետության տարածքն էր: Այդ 12-13 հազար քառ. կմ-ը ազատագրական մարտերի շնորհիվ պատահականորեն չհայտնվեց մեր վերահսկողության տակ: Այն հիմնականում համընկնում է 1735 թ. Նադիր շահի կողմից միջազգայնորեն ճանաչված Խամսայի մելիքությունների պատմական տարածքին: Հետևապես այն ոչ միայն պատմականորեն, այլև աշխարհագրական սահմաններով պաշտպանված լեռնային մի երկրամաս է, որի պահպանությունը սրբազան գործ է և սակարկության առարկա չէ:

- **Կարծես բոլորն այսօր միակարծիք են, որ մեր տարածաշրջանը մեծ փոփոխությունների շեմին է կամ արդեն իսկ այդ ընթացքի մեջ է: Որքանո՞վ կարող են վտանգավոր լինել աշխարհաքաղաքական այդ տեղաշարժերը: Նկատի ունենանք, որ մեզ համար Արցախյան պատերազմը ավարտված չէ: Մյուս կողմից հենց Հայաստանի սահմանների մոտ բավական ակտիվ է Թուրքիան: Մասնավորապես նկատի ունենք վերջինիս ակտիվ գործունեությունը Նախիջևանում:**

- Իմ կարծիքով՝ տարածաշրջանում սպասվող աշխարհաքաղաքական փոփոխությունները և մարտահրավերները մեր կողմից հաղթահարելի են: Չեմ կարծում, որ աշխարհում եղանակ ստեղծող երկրները Արցախում առկա ստատուս քվոյի փոփոխման լուրջ պահանջ առաջադրեն: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա Արևմուտքի հետ նրա հարաբերությունների որոշակի սառեցումը, Սիրիայի պատճառով Ռուսաստանի հետ «սիրախաղի» ավարտը, երկրի տնտեսական իրավիճակի վատթարացումը և քրդական խնդրի սրումը բավարար են, որ թուրքերը ստիպված լինեն զսպել իրենց ախորժակը: Ինչ վերաբերում է Նախիջևանում Թուրքիայի ազդեցության աճին, ապա այն միայն Հայաստանի անվտանգությանը առնչվող խնդիր չէ: Հարցը շոշափում է ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Իրանի շահերը: Համոզված եմ, որ որքան Ադրբեջանը գնա Նախիջևանի թուրքացման ճանապարհով, այնքան հավանական կդարձնի երկրամասը առաջիկայում հարվածի տակ դնելու և կորցնելու իրողությունը: ■

Շուշիի ազատագրումը. <<Հարսանիք լեռներում>> ռազմագործողությունը

Միքայել Հաջյան
Քաղաքական մեկնաբան, Արցախի վաստակավոր լրագրող

20-րդ դարավերջի արցախահայության ազգային-ազատագրական պայքարի՝ իրականում Հայոց հայրենական պատերազմի պատմության մեջ հայ ռազմարվեստի ամենափայլուն և ամենախոշոր նվաճումն էր Շուշի բերդաքաղաքի ազատագրումը: Պատմաշրջանի ռազմաքաղաքական իրադարձությունների հոլովույթում երևի թե ի վերուստ կանխորոշված զուգադիպություն էր, որ իրագործվելով 1992 թ. մայիսի 8-9-ին՝ Շուշիի ազատագրումը՝ որպես անգնահատելի և աներկբա արժեք, փաստորեն, ժամանակագրորեն ևս մեկ նշանակալի հաղթանակով համալրեց հայոց պատմական արժեհամակարգի համար խորհրդանշական մայիս ամիսը: Համազգային համախմբվածությամբ ու հերոսականությամբ իրականացված այդ ռազմագործողությունը, արժե անվերապահորեն գնահատել ոչ այլ կերպ և դասակարգել ոչ այլ տեղ, քան նույն օրացուցային ամսում տեղի ունեցած՝ 451 թ. Վարդանանց Ավարայրի, շուրջ մեկուկես հազարամյակ անց՝ 1918 թ. վերակերտված Հայաստանի առաջին հանրապետության երկունքի օրերին Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի ճակատամարտերում, նաև հայ ժողովրդի համար մեծագույն զոհողություններով արժևորված Երկրորդ աշխարհամարտում 1945 թ. նվաճված պատմական հաղթանակների շարքում:

Արցախի վաղեմի մշակութային ու քաղաքական կենտրոնի՝ Շուշիի ազատագրումը՝ որպես ռազմավարական նշանակության խնդիր, անշրջելի հրամայական էր հայրենի բնօրրանում հարատևելու համար ազգային-ազատագրական շարժման ու պայքարի ելած արցախահայության դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմում: Արցախի ինքնապաշտպանության ուժերը նախքան այդ մի շարք հաղթանակներ էին արձանագրել ադրբեջանական գերակշիռ ու սպառազեն զորքերի դեմ՝ Քարին տակում, Ստեփանակերտի Կրկժան թաղամասում, Ղայբալույում, Ջանհասանում, Քոսալարում, Մալիբեյլվում, Խոջալուում և այլ բնակավայրերում: Ինչ խոսք, ռազմական առումով որքան էլ էական էին այդ հաջողությունները, այնուամենայնիվ, դրանք հիմնականում մարտավարական խնդիրների էին հետամուտ: Միևնույն ժամանակ, չնվազեցնելով տեղային բնույթի այդ հաջողությունների կարևորությունը, ընդհանրական առումով դրանք կարելի է գնահատել նախ որպես ԼՂ ինքնապաշտպանության ուժերի համար անհրաժեշտ մարտական փորձառություն և ապա՝ որոշակի

<<Հարսանիք լեռներում>> ռազմական գործողության պլանը

նախապատրաստական շրջափուլ հետագա խոշոր ռազմագործողությունների համար, ինչպիսիք են Շուշիի, Քաշաթաղի (Լաչինի), Ակնայի (Աղդամի), Քարվաճառի (Քելբաջարի)՝ պատմականորեն Արցախին պատկանած, բայց անցյալ դարի 20-ական թվականներին նրանից կամայականորեն տարանջատված և Ադրբեջանի առանձին վարչական միավորների վերածված հարակից այլ շրջանների ազատագրման համար մղված ճակատամարտերը: Ընդ որում՝ շրջանների, որոնցում տեղակայված էին ադրբեջանական զինուժի հենակետերը, և որոնցից շարունակաբար հրետակոծվում, ավերածությունների էին ենթարկվում հայկական բնակավայրերը: Հատկանշական է, որ ադրբեջանական զինուժի վերահսկողության ներքո գտնվող Շուշին վերածվել էր Ստեփանակերտը հրետակոծող թիվ մեկ կրակակետի: Այդտեղից Արցախյան պատերազմի սկզբից ի վեր հրթիռակոծությունների էին ենթարկվում թե՛ Ստեփանակերտ քաղաքը և թե՛ հարակից բնակավայրերը: Կաթվածահար վիճակում էր գտնվում հաղորդակցությունը: Ինչպես վկայում են վիճակագրական տվյալները, միայն 1991 թ. նոյեմբերից մինչ 1992 թ. մայիսի սկիզբը Շուշիի, Ջանհասանի, Քյոսալարի, Ղայբալուի ադրբեջանական հենակետերից Ստեփանակերտի վրա արձակվել է շուրջ 4740 արկ, որից մոտ 3 հազարը՝ հեռահար հրթիռային «Գրադ» կայանքներից: Այդ արկակոծությունների հետևանքով զոհվել են 111 և վիրավորվել 332 խաղաղ բնակիչներ, ավերվել 370 բնակելի տներ և շինություններ: Ստեփանակերտը, փաստորեն, գրեթե 70 տոկոսով ոչնչացված էր: «Ստեփանակերտն արդեն չկար»,- հետագայում նշել

է ԼՂ ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Արկադի Տեր-Թադևոսյանը՝ լեգենդար Կոմանդոսը, որի գլխավորությամբ էլ հենց մշակվել և իրագործվել է Շուշիի ազատագրման օպերատիվ պլանը,- «Գրադը» ռմբակոծում էր յուրաքանչյուր քառակուսի մետրը: Քաղաքը մեռնում էր...»:

Հայտնի է, որ Շուշիի ազատագրման ռազմագործողության մշակմանն Արցախի ինքնապաշտպանության ուժերի հրամանատարությունը ձեռնամուխ էր եղել դեռևս Խոջալուի ազատագրումից անմիջապես հետո՝ մարտ-ապրիլ ամիսներին՝ հակառակորդի ուժերի տեղակայումը, դիրքերն ու քանակական տվյալները ճշգրտելուց հետո:

Գործողությունն ստացավ «Հարսանիք լեռներում» անվանումը, որի մտահղացումը, ասում են, պատկանում էր այն ժամանակ Հայաստանի պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին: Պատմում են, որ երբ գործողությունը ղեկավարող հրամանատարները ներկայացրին քաղաքի ազատագրման մարտական նախագիծը, այն չափազանց համարձակ թվաց: Հենց այն ժամանակ էլ Վազգեն Սարգսյանը հայտարարեց, որ եթե նախագիծը հաջողվի իրականացնել, ապա քաղաքի ազատագրումից հետո ինքն անպայման կամուսնանա:

Ջորակյանը տեղակայված էր Շոշ գյուղի հարևանությամբ: Այդտեղ էին Արկադի Տեր-Թադևոսյանը, Գուրգեն Դալիբալթայանը, Սերժ Սարգսյանը, Ռաֆայել (Ֆելիքս) Գզողյանը և ուրիշներ: Հրամանատարական կետերում էին կապը, բուժօգնությունը, հրետանային նախապատրաստությունը, ինժեներական ծառայությունը: Հենց այդտեղ էլ Շուշիի ազատագրման պլանն օրհնեց և ԼՂ ինքնապաշտպանության ուժերի շտաբի անդամներին հաջողություն մաղթեց ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ Պարգև եպիսկոպոս(ներկայումս արքեպիսկոպոս) Մարտիրոսյանը:

Նույն այդ վայրից էլ սկսվում էր գրոհի արևելյան ուղղությունը, որ ղեկավարում էր Արցախի ինքնապաշտպանական ուժերի առաջին հրամանատար Արկադի Կարապետյանը: Հյուսիսային՝ Ստեփանակերտ-Շուշի ուղղության հրամանատարը Վալերի Չիթչյանն էր, հյուսիսարևմտյան ուղղությանը՝ (Ջանհասան-Քյոսալար)՝ Սեյրան Օհանյանը: Յուրի Հովհաննիսյանը ղեկավարում էր «26-ի» հենակետի (գտնվում էր Ստեփանակերտի մերձակա Կրկժան գյուղի մոտակայքում) պահեստազորի ռազմական գործողությունը: Հարավային կամ Լաչինի ուղղության հրամանատարը Սամվել Բաբայանն էր: Ռազմաճակատի ընդհանուր գիծը կազմում էր մոտ 40 կիլոմետր:

Շուշիի ազատագրման մարտական հրամանը ստորագրվել է մայիսի 4-ին, և նախատեսվում էր քաղաքի վրա գրոհել մայիսի 5-ին: Սակայն այդ օրն առատ ձյուն էր տեղացել: Եղանակային պայմանները հրամանատարությանը ստիպեցին գործողությունը մայիսի 8 տեղափոխել: Անսպասելի տեղացած առատ ձյունն իր հերթին, բայց կային նաև այլ էական խոչընդոտներ գրոհը հետաձգելու համար: Սամվել Բաբայանի խոսքով՝ դեռևս կային նախապես լուծման կարոտ խնդիրներ, մասնավորապես՝ զենքի ու զինամթերքի պակաս: «Միայն Շուշիով հարց չէր լուծվում, պետք էր պահել նաև Աղդամի և Մարտակերտի ուղղությունները: Այդ իսկ պատճառով որոշեցինք գործողությունն սկսել միայն այն բանից հետո, երբ կլրացվի զենքի ու զինամթերքի պակասը»: Բացի այդ, ըստ նրա, պետք էր կատարել նաև հետախուզական մի շարք լրացուցիչ ճշտումներ: «Անհրաժեշտ էր Քիրսի բարձունքներում դիրքավորվել, ու թեև այդ տարի ձյունն առատ էր, և առկա էին առաջխաղացման դժվարություններ, մեզ հաջողվեց դիրքավորվել և օդակի մեջ վերցնել քաղաքը»: Արկադի Տեր-Թադևոսյանի ընդգծմամբ. «Թշնամին ուներ 2500 մարդ, ուժեղ էր պատրաստված: Մենք ունեինք 3500 մարդ: Ինձ, ճիշտն ասած, Հայաստանից ասացին, գրեցին (ունեմ այդ գրությունը), որ մենք պատրաստ չենք, պետք է ունենալ երեք անգամ ավելի. թշնամին 2500 ուներ, մենք պիտի ունենայինք 7500: Ես համաձայնեցի: Դա ճշմարտություն էր, բայց դրա տակ կար մի բան: Ես հասկացա՝ չէին ուզում գրավել Շուշին, որովհետև Ղարաբաղում ղեկավարում էր Դաշնակցությունը»:

Այն ժամանակ ՀՀ ԳԽ քարտուղար Արա Սահակյանի վկայությամբ. «Խորհրդային կրթություն ստացած հայ զինվորականությունը ներկայացրեց, թե անհրաժեշտ է այսքան զինվոր, արկ, տեխնիկա, այսքան կորուստ ենք ունենալու և այլն: Ըստ այդ թվաբանության՝ մենք չէինք կարող այդ ժամանակ ունեցած մեր ուժերով խնդիրը լուծել: Հետևաբար խնդիրը դրվեց ոչ թե ակադեմիական զինվորականության, այլ ջոկատների, Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերի և Վազգեն Սարգսյանի ու նրան ենթարկվող ջոկատների մակարդակում: Ու նրանք խնդիրն իրականացրին չափազանց նվազ կորուստներով»:

Արցախյան կողմը, իրոք, ոչ միայն կենդանի ուժի, այլև զենքի ու զինամթերքի զգալի պակաս էր զգում նման ռիսկային քայլի դիմելու համար: Վերստին անդրադառնանք Կոմանդոսի վկայությանը. «Փաստորեն, 200 հոգի պահեստայիններ սպասում էին իրենց մահացած ընկերների զենքին, որ մարտի դաշտ գնան»: Նրա արտահայտությամբ. «Շուշիի գրավումն արցախցիների կենաց-մահու խնդիրն էր: Այսինքն՝ իմ ենթակաները, իմ հրամանատարները «ստիպեցին» նման որոշում կայացնել: Ես ենթարկվում էի Սերժ Սարգսյանի Պաշտպանության կոմիտեին: Ես նրան հարցրի՝ գրավո՞ւմ ենք, նա ասաց՝ գրավում ենք»:

Ինչ վերաբերում է ադրբեջանական զինուժի հարաբերակցությանը, ապա այդ երկրի պաշտպանության նախկին նախարար Ռահիմ Ղազիևի հավաստմամբ, որ նա հայտարարել է իր դատավարության ընթացքում. «1992 թ. մայիսին Շուշիում և շրջակայքում տեղակայված էին 2500-3000 զինվոր, Տ-72 տեսակի 3 տանկ, Տ-55 տեսակի մեկ տանկ, 12 հրասայլ, 3 «ԲՄ-21» տիպի համազարկային «Գրադ» համակարգ՝ 6000 արկով, 3 թնդանոթ, 4 միավոր «Ալազան» համակարգ, 30 միավոր «Իգլա» և «Ստրելա-2» զենիթա-հրթիռային համալիր, 20 միավոր 82 մմ-անոց ականանետ, 50 միավոր ձեռքի ականանետ, ավելի քան 5 միլիոն միավոր ռազմամթերք»: Ինչպես հայտնի է, Բաքուն հետագայում շրջանառության մեջ էր դրել վարկած, համաձայն որի՝ իբր թե հայկական ուժերը Շուշին ոչ թե գրավել, այլ առանց կռիվների ստացել են ադրբեջանական ռազմական հրամանատարության և քաղաքական իշխանության դավաճանության պատճառով: Հենց այս վարկածի շրջանակներում էր ընթանում Ռահիմ Ղազիևի դատավարությունը:

Ի դեպ, հատկանշական է, որ Բաքվում գրեթե համանման վարկած էր շրջանառվում նաև Քարին տակի ճակատամարտում ադրբեջանական զորքերի կրած խայտառակ պարտության կապակցությամբ: Ինչպես պարզվում է Բաքվի հեռուստատեսության հաղորդումներից մեկում Ադրբեջանի նախկին պաշտպանության նախարար, գեներալ-մայոր Թաջադդին Մեհթիևի հայտարարությունից, ով մշակել և Շուշիից բարձրադիր դիրքերից 1992 թ. հունվարի 26-27-ին անձամբ գլխավորում էր քաղաքի քերծի ստորոտում գրեթե անպաշտպան ծվարած Քարին տակ գյուղի գրավման ու ոչնչացման գործողությունը, ադրբեջանական զինուժի ձախողման գլխավոր պատճառը ոչ այլ ոք էր, քան շուշեցի որոշ հրամանատարների՝ ազգությամբ հայ կանայք: Նրա խոսքով՝ այդ կանայք, իրենց ամուսիններից երեկոյան տեղեկացած լինելով խիստ գաղտնի ծրագրված, ընդամենը երկու-երեք անձի հայտնի հանկարծակի գրոհի ժամկետի և ուղղությունների մասին, հազիվ մի քանի ժամ առաջ՝ գիշերվա մութին, լուրը նախապես հասցրել են իրենց ազգակիցներին, և Քարին տակի նախազգուշացված հայ գրոհայիններին հաջողվել է այդ ժամանակամիջոցում հիմնովին նախապատրաստվել դիմագրավմանը՝ ամրապնդելով գյուղի ելումուտն ու հարձակման հնարավոր թիրախները: Հիշեցման կարգով նշեմ, որ Քարին տակի ճակատամարտում ադրբեջանական զինուժը բաղկացած էր ավելի քան 200 զինվորից, իսկ հայկական կողմն ուներ ընդամենը 60 աշխարհազորային. բոլորն էլ՝ հիմնականում Քարին տակի բնակիչներ և մերձակա գյուղերից նրանց օգնության հասած կամավորականներ: Երկու օր տևած մարտերն ավարտվել են ադրբեջանական սպառազեն զորքի աղետալի պարտությամբ: Ադրբեջանական կողմն այդ մարտերում տվել է 136 սպանված զինվոր՝ գրեթե մի ամբողջ գումարտակ, իսկ մյուս զինվորները՝ ավելի քան 60 հոգի, խուճապահար փախուստի են դիմել: Հայկական կողմի կենդանի ուժի կորուստները կազմել են 10 աշխարհազորային զինվորներ և գյուղի 12 խաղաղ բնակիչներ: Այդ մարտերից հետո Քարին տակը, բնականաբար, մնացել է ԼՂՀ վերահսկողության տակ:

Անշուշտ, զավեշտալի են հնչում ադրբեջանական կողմի նման անհիմն պնդումները: Բայց ինչ որ է: Համարենք դա Բաքվի խնդիրը:

Եվ այսպես, մայիսի 7-ի ուշ երեկոյան մեկնարկեց «Հարսանիք լեռներում» ռազմագործողությունը: Նախքան այդ հակառակորդին շփոթեցնելու և հարվածի հիմնական ուղղությունից նրա ուշադրությունը շեղելու նպատակով մանևրեր էին ձեռնարկվում, հաշվարկներ արվում բոլոր ուղղություններով ու հարձակումներ կատարվում: Բացի այդ, ինչպես իր հարցազրույցներից մեկում պատմել է Արկադի Տեր-Թադևոսյանը, շրջափակման մեջ առնելով Շուշին, կարևորվում էր քաղաքում մնացածների շրջանում խուճապ առաջացնելու խնդիրը, որպեսզի ադրբեջանցիները հեռանան առանց մարտեր մղելու: Այդ նպատակով նախապես ոչնչացվել էին Շուշիի և Ստեփանակերտի շրջակայքի ադրբեջանական հենակետերը, և բերդաքաղաքը հայտնվել էր լիակատար շրջափակման մեջ. «Մինչև Շուշին եղել են Կրկժանը, Մալիբեյլուն, Խոջալուն: Այսինքն՝ կար հաջորդականություն, թե որ բնակավայրն ենք ազատագրում»:

Եվ վերջապես, հայկական ջոկատները գիշերվա մթության մեջ սկսեցին շարժվել դեպի Շուշի: Հաշվի առնելով, որ խորհրդային

բանակից ժառանգված ավանդույթով թե՛ հայ աշխարհազորայինների և թե՛ ադրբեջանցի զինվորների զինվորական համազգեստները նույն գույնի էին, ուստի հակառակորդի զինուժից անգամ գիշերվա խավարում տարբերակելու համար, ինչպես վկայում են այդ օրերին կատարված նկարահանումները, վիրակապով կամ այլ կերպ սպիտակ գույնի խաչաձև գիծ էր քաշված հայ զինվորների մեջքին՝ որպես պարզ ու հստակ տեսանելի երկրաչափական պատկեր: Մայիսի լույս 8-ի գիշերը՝ ժամը 2.30-ին, ԼՂ ինքնապաշտպանության ուժերի շուրջ 1200 մարտիկներից կազմված գրոհային 4 խմբեր ձեռնամուխ եղան կենդանի ուժով ու միջոցներով գերազանցող հակառակորդի ջախջախմանը Շուշիի և Ստեփանակերտի շրջակա հենակետերում: Մարտական գործողությունները ծավալվում էին «26»-ի, Լաչինի և Ջանհասան-Քյոսալարի ուղղություններով: Մարտը, որ սկսվել էր մայիսի 7-ի լույս 8-ի գիշերը, ավարտվեց գրեթե մեկ օր անց: Մայիսի 9-ի առավոտյան ժամը 4-ին Արկադի Տեր-Թադևոսյանին զեկուցեցին, որ քաղաքը Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերի ձեռքերում է:

Փաստորեն, ռազմական գործողության ելքը կանխորոշվել էր արդեն իսկ մայիսի 8-ին, երբ Լաչինի և մյուս ուղղությունների ստորաբաժանումները նպաստավոր բնագծեր էին գրավել Շուշիի մատույցներում: Մայիսի 8-ի երեկոյան տրված դադարը հակառակորդին հնարավորություն էր ընձեռել հատուկ հատկացված միջանցքով՝ դեպի Լաչին տանող ճանապարհով, հեռանալու բերդաքաղաքից: Հենց այդ օրն էլ, ավելի ստույգ՝ մայիսի 7-ի լույս 8-ի գիշերը, Շուշիից հեռացել է հակառակորդի ռազմական տեխնիկան: Նույն օրը՝ առավոտյան, ադրբեջանական հրամանատարությունը երկու տանկ և երկու զրահամեքենա է ուղարկում Զարիսլուի ուղղությամբ, որոնք, սակայն, ոչնչացվում են, անձնակազմը՝ սպանվում, ինչը Շուշիից խուճապային փախուստի նոր ալիք է առաջ բերում:

Շուշիի ազատագրման մարտերում հայկական կողմը, ըստ տարբեր աղբյուրների, ունեցել է 57-58 զոհ, թշնամին՝ 250-300 սպանված, 600-700 վիրավոր, 13 գերի: Փաստորեն, ինչպես վկայում են գրոհի մասնակիցները, ադրբեջանցիները քաղաքից հեռացել էին մայիսի 8-ի կեսօրից հետո, իսկ մայիսի 9-ի առավոտյան այնտեղ որևէ ադրբեջանցի չկար: Քաղաքում չի եղել դիմադրություն, չեն եղել մարտեր: Հայկական ուժերը Շուշիում ադրբեջանցի զինվոր չեն տեսել: Շուշիում գերի են ընկել միայն նրանք, ովքեր թաքնվել էին նկուղներում:

Թե ադրբեջանական զինուժի ողջ մնացած մնացորդներն ինչ վիճակում են լքել քաղաքը, ադրբեջանցի լրագրողին 2000 թ. հուլիսին տված հարցազրույցում միանգամայն հստակ նկարագրել է չեչեն դաշտային հրամանատար Շամիլ Բասաևը, ով,

ինչպես հայտնի է, 90-ականներին Ղարաբաղ էր եկել սրբազան պատերազմի՝ ջիհադի: Նրա խոսքով՝ իր մոջահեդները վերջինն են հեռացել Շուշիից: Բասաևի հավաստմամբ՝ Շուշին շրջափակման մեջ ընկավ զուտ այն պատճառով, որ ադրբեջանական բանակում կարգուկանոն և ղեկավարություն չկար: «Այնտեղ մնացել էին 4 մոջահեդ և 11 ադրբեջանցի: Գրեթե բոլորը լքել էին քաղաքը, բայց 15 հոգով մեկուկես օր պաշտպանում էին, իսկ 2800 հոգանոց կայազորն ամեն ինչ թողեց ու փախավ: Եթե մեկը փախչում էր զրահատեխնիկայով, նա հերոս էր, որովհետև շատերը թողնում էին նաև ծանր տեխնիկան... գնում էին Բաքու: Իմ մոջահեդներից երեքը, ովքեր պաշտպանել են Շուշին, դեռ կենդանի են: Շուշին պարզապես լքվեց: Մոտ 700 հայեր սկսեցին գրոհը, և դա միայն արտաքին փայլն էր, խաբուսիկ բան: Նման ուժեղ կայազորով և այդքան զենքով, հատկապես նկատի ունենալով Շուշիի դիրքը, հարյուր հոգի կարող էին հեշտությամբ մի ամբողջ տարի անառիկ պահել քաղաքը: Որևէ կազմակերպվածություն չկար: Այսօր կարելի է ձերբակալել մի գեներալի կամ նախարարի և ասել՝ դու դավաճանեցիր, դու հանձնեցիր, դու ծախեցիր: Դրանք սոսկ խոսակցություններ են: Չկար որևէ ղեկավարում, որևէ մեկը որևէ բանի համար պատասխանատու չէր»:

Մայիսի 9-ի կեսօրին մոտ հարձակման են անցել հակառակորդի 1 ռազմական ինքնաթիռ և ուղղաթիռներ, որոնք ռմբակոծել են հայկական ուժերի մարտաշարքերը, ինչպես նաև Շուշին ու Ստեփանակերտը: Ավելի ուշ պարզվել է, որ այդ օդային հարձակման նպատակը Շուշիում թողնված զինապահեստները, առաջին հերթին Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց մայր տաճարը պայթեցնելն էր, որը, ինչպես պարզվեց, Բաքուն վերածել էր հսկա զինապահեստի՝ վստահ, որ հայկական կողմը երբեք հեռահար կրակ չի բացի եկեղեցու ուղղությամբ: Ռմբահարելով Շուշին՝ այսպիսով իսկ ադրբեջանցիները հուսով

էին կործանել ամբողջ քաղաքը, ինչը նրանց, բնականաբար, չհաջողվեց: Երեկոյան հիմնականում ավարտվել էր Շուշիի «մաքրման» գործողությունը:

Մշակման և իրականացման առումով գրեթե անթերի, հայ ռազմարվեստի մեջ եզակի այդ ռազմական գործողությունն արմատական բեկում առաջացրեց Արցախյան ազատամարտում: Այն, հիրավի, մի քանի կարևոր նշանակություն ուներ: Նախ՝ պատմական անհրաժեշտություն էր՝ կոչված վերականգնելու հայրենի բնաշխարհում հայ ժողովրդի ապրելու անկապտելի իրավունքը: Դրանով նաև ամրապնդվեց հայոց հաղթական ոգին, և Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության անկախությունը դարձավ իրական:

Ապա՝ Շուշիի ազատագրմամբ էլ ավելի կարևորվեց ազգային-ազատագրական պայքարում իրենց պատմական դերը փառքով կատարած տարանջատ կամավորական ջոկատների հիման վրա ժամանակակից կանոնավոր բանակի ստեղծման անհրաժեշտությունը: Խնդրի իրատեսական գիտակցմամբ հենց 1992թ. մայիսից էլ թափ առավ Արցախում՝ հայկական երկրորդ հանրապետությունում ևս մեկ միասնական հրամանատարության ներքո աշխարհազորային ուժերի միավորման տևական գործընթացը՝ հիմք դնելով Պաշտպանության բանակի կազմավորմանը, ինչի շնորհիվ այն ներկայումս տարածաշրջանի կայացած և առավել մարտունակ զինված ուժերից մեկն է:

Շուշիի ազատագրումը նաև տնտեսական նշանակություն ուներ: Ցամաքային և օդային հաղորդակցության ուղիների շրջափակման, էլեկտրաէներգիայի, գազի ու խմելու ջրի պակասի և Շուշիից անընդհատ արկակոծությունների պատճառով Ստեփանակերտում ու հարակից բնակավայրերում, ինչպես նաև ողջ հանրապետությունում տնտեսությունը կաթվածահար էր եղել: Իսկ Շուշիի ազատագրմամբ մեծապես պայմանավորված ու նրան հաջորդած Լաչինի ազատագրումը հնարավորություն տվեցին ուղիղ ցամաքային կապ հաստատելու մայր հայրենիքի՝ Հայաստանի հետ, որն իրավամբ կոչվեց «Կյանքի ճանապարհ»:

Շուշիի ազատագրումն առավել քան կարևորվում է այն անգնահատելի համազգային համախմբմամբ, որ աշխարհասփյուռ հայ ժողովուրդն իր պետական, քաղաքական, եկեղեցական, բարեգործական և ազգաշեն այլ կառույցներով հանդերձ դրսևորեց անցած դարավերջին՝ անընկբա զինվորագրվելով Արցախյան շարժմանն ու արցախահայության ազգային-ազատագրական պայքարին, Արցախում ծավալված և ազգապահպան հաղթանակներ նվաճած Հայոց հայրենական պատերազմին:

Հայության հավաքական ներուժի ընդհանուր ներդրման մասին խոսելով հանդերձ,

այնուամենայնիվ, որպես քաղաքական-կուսակցական ուժի, արժե առանձնացնել Հայ Յեղափոխական Դաշնակցության ներդրումը: Ազգային ազատագրական պայքարի առաջին շրջանից հայտնվելով Արցախում Դաշնակցությունը մեծ դերակատարություն ունեցավ պայքարի կազմակերպման և այդ պայքարի ու նրա հաղթանակի հարցում ժողովրդի ոգին ու հավատը ամրապնդելու գործում: Այդ դերակատարությունը արժանավորապես դրսևորվեց մասնավորապես և Շուշիի ազատագրման ժամանակ, որի առավել աչքի ընկնող հերոսներից մեկն էր ՀՅԴ անդամ, լեգենդար Աշոտ Ղուլյանը՝ բեկոր Աշոտը:

Մայիսը իրավամբ դարձավ հայոց եռատոնի՝ Երկրորդ աշխարհամարտում հաղթանակի, Շուշիի ազատագրման ու Արցախի պաշտպանության բանակի կազմավորման, 1918 թվականի մայիսի 28-ին հայոց պետականության վերականգնման եռամիասնական տոնի ամիս՝ իհարկե այս շարքում նույնչափ կարևորելով 451 թվականի մայիսի 26-ին տեղի ունեցած և մեր ազգային հիշողության վրա իր ազդեցությունը դրոշմած Ավարայրի հերոսական ճակատամարտը:

Փառք ու պատիվ հայոց ազատարար զորականներին, հավերժ հիշատակ կենաց ու մահու կռիվներում հանուն հող հայրենիի ազատության կյանքը նվիրաբերած հերոս նահատակներին: ■

Արցախ 2020 մայիս

Հայաստանի Հանրապետության պետաիրավական կառուցվածքի ազգային-ժողովրդավարական բնույթը (1918-1920 թթ.)

(պատմական զուգահեռներ 1-ին և 3-րդ հանրապետությունների միջև) (1-ն մաս)

Արարատ Հակոբյան Պատմ. գիտ. դոկտոր, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր

Մոտենում է մայիսյան մեծ հաղթանակների հերթական տարեդարձը: Հիրավի, 1918 թ. մայիսին հայ ժողովուրդն իրար փոխկապակցված երկու մեծագույն նվաճում ունեցավ. ա) Մայիսյան հերոսամարտերում կյանքի ու մահվան գնով ձեռք բերված հաղթանակը փրկեց արևելահայությանը թուրքական եղեռնից, և հիմք ստեղծվեց դարերի ընդմիջումից հետո Հայաստանի անկախ պետականության վերականգնման համար: Սրանով փաստորեն սկսվեց հայոց պատմության նորագույն՝ պետականությունների պատմափուլը: Ժամանակային առումով որքան հեռանում ենք ճակատագրական նշանակության երկու խոշորագույն (մայիսյան հաղթական հերոսամարտեր և անկախության սկզբնավորում) իրադարձություններից, այնքան ավելի է մեծանում դրանց պատմական արժեքը, թողած անջնջելի հետքն ու նշանակությունը վերջին ավելի քան մեկ դարում մեր անցած ուղու, ունեցած ձեռքբերումների, նաև այսօրվա և վաղվա առաջընթացի համար: Անվիճելի է պատմական այն ճշմարտությունը, որ եթե չլիներ Հայաստանի 1-ին հանրապետությունը, անհնարին էր լինելու նրա իրավահաջորդ Խորհրդային Հայաստանի և դրանց հիմքի վրա Հայաստանի 3-րդ հանրապետության՝ ժամանակակից չափանիշներով ինստիտուցիոնալ արժեհամակարգի ձևավորումը:

Հիշյալ նշանակալի տարեդարձի կապակցությամբ ցանկանում ենք ընդհանուր գծերով ներկայացնել գրեթե ոչնչից ստեղծված, ժամանակի արժեհամակարգերին համահունչ, պետաիրավական-ժողովրդավարական բնույթ ու արժեք ունեցող Առաջին հանրապետության այն կառույցները, որոնք հետագայում ժառանգաբար փոխանցվեցին Երկրորդ ու հատկապես՝ Երրորդ հանրապետությանը:

Սույն հրապարակման մեջ կփորձենք պատմական զուգահեռներ անցկացնել 1-ին և 3-րդ հանրապետությունների միջև, համադրել ու վերլուծել պատմության փորձն ու դասերը, ինչն, անշուշտ, օգտակար և ուսանելի է Հայաստանի ու հայ ժողովրդի մերօրյա առաջընթացի ճանապարհին: Այս կապակցությամբ կարող է հարց ծագել. իսկ ինչո՞ւ չխոսել, օրինակ, 1-րդ և 2-րդ հանրապետությունների օրգանական կապի մասին, չէ՞ որ ժամանակագրական առումով 2-րդ հանրապետությունը 1-ինի անմիջական իրավահաջորդն է: Ակնհայտ իրողությունն այն է, որ գաղափարական, քաղաքական, պետաիրավական, տնտեսական և այլ արժեքների, ընդհանրական պատմական փորձի ու դասերի առումով ուժեղ չէ կապը 1-ին և 2-րդ հանրապետությունների միջև: Հանրահայտ է, որ ոչ անկախ 2-րդ հանրապետությունը՝ Խորհրդային Հայաստանը, գոյության 70 տարիներին հանդիսացել է բոլշևիկյան Ռուսաստանի, իսկ ապա անվանափոխված ԽՍՀՄ-ի կոմունիստական ամբողջատիրական

Խատիսյանի երկրորդ կառավարության կազմը

(տոտալիտար) համակարգի մասը՝ որպես պետականության որոշ բաղադրիչներ ունեցող միավոր, որը կառավարվել և ուղղորդվել է մեկ կենտրոնից՝ որդեգրելով Հայաստանի ու հայ ժողովրդի համար օտարածին, ոչ հոգեհարազատ գաղափարական-քաղաքական, պետաիրավական, տնտեսական արժեքային համակարգեր, որոնցից շատ քիչ բան հնարավոր կլիներ փոխանցել 3-րդ հանրապետությանը: Այդ իմաստով էլ անմիջական օրգանական կապ գրեթե չկա 2-րդ և 3-րդ հանրապետությունների միջև: Դրա փոխարեն ազգային գաղափարախոսության, անկախ պետականության, պետաիրավական, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային առումներով ու արժեքային համակարգով ավելի ուժեղ է անմիջական կապը Առաջին և մերօրյա՝ Երրորդ հանրապետությունների միջև: Եվ, բնականաբար, այդ արժեհամակարգի գլխավոր ցուցիչն ինքնիշխան անկախ պետականությունն է:

Հարկ է ընդգծել, որ անկախ պետականությունը յուրաքանչյուր ազգ-ժողովրդի ինքնակազմակերպման բարձրագույն աստիճանն է, որի պայմաններում դրսևորվում է սեփական ներուժով ինքնակառավարվելու, սեփական հայրենիքը պաշտպանելու, արարելու, ստեղծագործելու ու հարատևելու վերջինիս կարողականությունը: Այս կամ այն երկրի պետական կառուցվածքով, կառավարման ձևով ու վարչակարգով (ռեժիմով), իշխանություն-ժողովուրդ փոխադարձ կապով, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների ծավալով ու բովանդակությամբ, հոգևոր ու մշակութային արժեհամակարգով և այլ հատկանիշներով կարելի է որոշել ու չափել տվյալ երկրի ժողովրդի, նրա ձևավորած պետության ժողովրդավարության մակարդակը:

***

Արդ՝ ըստ էության: Նախ մինչև 1918 թ. մենք ի՞նչ ենք տեսնում Հայաստանում: Հայտնի է, որ մինչև

շրջադարձային համարվող 1918 թ. արմատական իրադարձությունները Հայաստան աշխարհը նախկինում օտարների միջև երկու հիմնական մասի բաժանված երկրամաս էր, որի մեծագույն հատվածի՝ Օսմանյան կայսրության մեջ մտնող Արևմտյան Հայաստանի հայությունը 1-ին աշխարհամարտի պայմաններում արդեն տեսել էր Մեծ եղեռն, իսկ նրա մի կերպ մազապուրծ փրկված մնացորդացը հայտնվել էր հայրենազրկված գաղթականի ու աստանդականի կարգավիճակում: Այդ նույն ժամանակ Արևելյան Հայաստանն ու արևելահայությունը, ներքաշվելով պատերազմի մեջ և կրելով մեծ կորուստներ, տառապանքներ ու զրկանքներ, հայտնվել էին անորոշության մեջ:

1917 թ. Ռուսաստանի երկու ճակատագրական իրադարձությունների՝ Փետրվարյան հեղափոխության և Հոկտեմբերյան հեղաշրջման հետևանքով Անդրկովկասն ու Հայաստանը հայտնվեցին սեփական ճակատագիրն ինքնուրույն տնօրինելու փաստի առաջ: Եվ 1918 թ. հունվարին ձեռնարկված թուրքական արշավանքի պայմաններում հայ ժողովուրդը գերմարդկային ճիգերով ոչ միայն կարողացավ դիմակայել մահաբեր թշնամու ներխուժմանը, այլև հարկադրել նրան առաջինը ճանաչելու հայության անկախ ապրելու բնական իրավունքը: Հարկ է ընդգծել, որ թշնամուն դիմակայելու և պետականության հիմքերը դնելու գործում հսկայական է եղել ժողովրդի կողմից Երևանի դիկտատոր հռչակված Արամ Մանուկյանի (1879-1919 թթ.) կազմակերպչական, համախմբիչ ու ոգևորիչ դերը: Սկզբում փոքր՝ ընդամենը 12 հազ. քառ. կմ տարածքը, որի վրա հունիսի 4-ի Բաթումի պայմանագրով Օսմանյան Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունը, նախկին Ռուսական կայսրության՝ տնտեսապես ու քաղաքականապես հետամնաց Էրիվանի նահանգի մի մասն էր: Եվ այդ հատվածի վրա էլ սկսվեցին պետականաշինության աշխատանքները: Պետականությունը հարկ էր կերտել Արևելահայաստանի մի հողակտորի վրա, որտեղ առկա էին սեփական կադրերի, կառավարման փորձի, նյութական-տնտեսական ներուժի մեծ պակաս, արտաքին թշնամական շրջափակում ու ամեն պահի ներխուժման վտանգ, հարյուր հազարավոր հայ գաղթականություն, սով, համաճարակ և այլն:

1918 թ. մայիսին Անդրկովկասյան դաշնության քայքայումից ու Հայաստանի անկախության հռչակումից հետո, բնականաբար, հայ հասարակական-քաղաքական ուժերի առջև ծառացած գլխավոր խնդիրները դարձան ընտրվելիք պետականության տեսակի, նրա ինստիտուցիոնալ կառուցվածքի, կառավարման ձևի, պետական ու ժողովրդավարական ինստիտուտների ամբողջական կայացման, երկրի ու ժողովրդի անվտանգության ու դինամիկ զարգացման հարցերը: Նման բախտորոշ վճիռների կայացման, երկրի ու ժողովրդի ճակատագիրը ինքնուրույն տնօրինելու գործում անուրանալի է եղել «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» (ՀՅԴ) կուսակցության դերակատարությունը: Իրավամբ, նա եղել է հայոց պետական մեքենան գործի գցող գլխավոր քաղաքական ուժը և հիմնականում իր ուսերի վրա է կրել անկախ պետականության, ժողովրդի ու հայրենիքի անվտանգության ապահովման քաղաքական ողջ պատասխանատվությունը:

1918 թ. հուլիսի կեսերին Թիֆլիսից մայրաքաղաք Երևան ժամանած Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի և Հովհ. Քաջազնունու(1868-1938) գլխավորած ոչ լիակազմ կառավարության առաջնային խնդիրը դարձավ պետականության տեսակի ու կառավարման ձևի ընտրության հարցը: Նախապատվությունը տրվեց 20-րդ դարում ամենաառաջադիմականը համարվող հանրապետական արժեհամակարգին, խորհրդարանական, ժողովրդավարական հանրապետության բնորդին ու կառավարման ձևին: Հայաստանի նորաստեղծ հանրապետությունն իր քաղաքական շրջանակներով և առաջին հերթին հայ իրականության ամենախոշոր և ամենաազդեցիկ քաղաքական ուժի՝ ՀՅԴ-ի գլխավորությամբ նախընտրեց նոր ժամանակներին և եվրոպական քաղաքակրթական արժեհամակարգին բնորոշ կառավարման ինստիտուտներ (կառուցակարգեր):

Պետական կառուցվածքի տեսանկյունից ՀՀ-ն ձևավորվեց որպես խորհրդարանական (պառլամենտական) դեմոկրատական (ռամկավար) հանրապետություն, որտեղ բարձրագույն օրենսդիր իշխանությունը դարձավ ժողովրդավարական ճանապարհով ընտրված խորհրդարանը, իսկ բարձրագույն գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, որը նշանակվելու և հաշվետու էր լինելու խորհրդարանին: Տակավին միջնադարյան Անգլիայի (13-րդ դարում բարոն Սիմոն դը Մոնֆորի) ժամանակներից պառլամենտարիզմը եղել է ժողովրդավարական իշխանության ձև, որը ենթադրում էր պետական իշխանության երեք հիմնական տարանջատ թևերի՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների ձևավորում, գործադիր իշխանության (կառավարության) պատասխանատվություն ու հաշվետվողականություն օրենսդիր մարմնի՝ խորհրդարանի առաջ: Հայտնի է, որ յուրաքանչյուր պետության ժողովրդավարական լինելու նախապայմանը նրա ընտրովիության, և ներկայացուցչականության սկզբունքն է, իշխանության եռաթև կառուցվածքի՝ գործադիր, օրենսդիր և դատական, տարանջատվածության ապահովումը և միմյանց հակակշռելու ու հավասարակշռելու սկզբունքի առկայությունը:

Առաջ անցնելով ու պատմական զուգահեռներ անցկացնելով 1-ին և 3-րդ հանրապետությունների միջև՝ պետք է փաստել, որ պատմաիրավական ժառանգորդության տեսանկյունից Հայաստանի մերօրյա հանրապետությունը 2015 թ. նոր խմբագրությամբ ընդունված սահմանադրական փոփոխություններով, որդեգրել է խորհրդարանական կառավարումը, որում ընդգծված է ժառանգական կապը Առաջին և Երրորդ հանրապետությունների միջև: Ուշագրավ է նաև այն պարագան, որ պետական կառուցվածքի հստակեցման առումով դեռ առաջին հանրապետության շրջանում հստակեցվել էր համազգային հիմնական

նպատակը՝ Հայկական հարցի վերջնական լուծումից ու Հայաստանի երկու հատվածների միավորումից հետո պետք է հրավիրվեր Սահմանադիր ժողով, ընդունվեր «Որոգայթ փառաց»-ի ժամանակներից երազած սահմանադրություն, որդեգրվեր ՀՀ նախագահական ինստիտուտ և այլն, ինչը, ցավոք, ժամանակի սղության և արտաքին քաղաքական անսպասելի գործոնների պատճառով չիրագործվեց:

Այդուհանդերձ, չնայած ՀՀ շատ կարճ՝ ընդամենը 2,5 տարվա գոյությանը, գերմարդկային ճիգերով հնարավոր եղավ ցարական կենտրոնացված նահանգական կառավարման ձևի փոխարեն ստեղծել եվրոպական պետաիրավական արժեհամակարգին համահունչ հանրապետական-ժողովրդավարական ինքնիշխան պետություն:

Անդրադառնալով Առաջին հանրապետության բարձրագույն գործադիր իշխանությանը արձանագրենք, որ գոյության 2,5 տարվա ընթացքում ՀՀ-ն ունեցել է չորս վարչապետ՝ բոլորն էլ ՀՅԴ նշանավոր գործիչներ՝ Հովհաննես Քաջազնունի (1918 թ. հունիսի 7 – 1919 թ. օգոստոսի 7-ը), Ալեքսանդր Խատիսյան (1919 թ. օգոստոսի 7– 1920 թ մայիսի 5-ը), Համո Օհանջանյան (1920 թ. մայիսի 5 – նոյեմբերի 23-ը) և Սիմոն Վրացյան (1920 թ. նոյեմբերի 23 – դեկտեմբերի 2-ը) : Ընդ որում, ՀՅԴ-ն երկու անգամ՝ 1918 թ. նոյեմբերի 4-ից 1919 թ. հունիսի սկիզբը (7 ամիս) ՀԺԿ-ի, իսկ 1920 թ. նոյեմբերի 23-ից դեկտեմբերի 2-ը (10 օր) էսէռների կուսակցության հետ կազմել է կոալիցիոն (խառը) կառավարություն:

Հանրապետության 2-րդ վարչապետ Ալ.Խատիսյանը, ներկայացնելով Առաջին հանրապետության կառավարության պետականաշինության ամփոփ բնութագիրը, իրավացիորեն այն բաժանել է երեք փուլերի: Առաջին՝ Հ. Քաջազնունու նախագահության շրջանը՝ պետական-կազմակերպական, երկրորդ՝ Ալ. Խատիսյանի նախագահության՝ քաղաքացիական-ստեղծագործական և երրորդ՝ Հ. Օհանջանյանի և Ս. Վրացյանի նախագահության՝ արտաքին և ներքին թշնամիների դեմ կռվի շրջան, որը, ինչպես հայտնի է, ավարտվեց արտաքին կոպիտ (ռազմական) միջամտությամբ, 1920 թ. դեկտեմբերի 2-ին ՀՀ անկմամբ ու նրա խորհրդայնացմամբ:

Հարկ է նշել, որ միջկուսակցական համերաշխության տեսանկյունից առանձնապես ծանրակշիռ է եղել ՀՅԴ-ՀԺԿ կոալիցիոն կառավարությունը: Պատմական փորձի ու գնահատականի առումով ուսանելի է, որ տակավին Առաջին հանրապետության ժամանակներից ՀՅԴ-ն պատրաստակամ է եղել կառավարման կոլեկտիվ-կոալիցիոն աշխատանքի, և այս ավանդույթին նա ժամանակ առ ժամանակ հետևում է նաև մեր ժամանակներում: Բերված փաստը հավաստում է, որ Առաջին հանրապետության հիմնական կառավարող ՀՅԴ կուսակցությունը չի ձգտել միակուսակցական ամբողջատիրական (տոտալիտար) կառավարման վարչաձևին, ինչն այդքան բնորոշ էր ԽՍՀՄ կոմունիստական-բոլշևիկյան ավելի քան 70-ամյա բռնավարչակարգին:

***

Ինչպես ասվեց, ի սկզբանե խնդիր դրվեց հայոց պետականությունը կերտելու եվրոպական քաղաքական և պետական կառուցվածքի օրինակով՝ իհարկե հաշվի առնելով տեղական պայմանները և մեր երկրի ու ժողովրդի ազգային առանձնահատկությունները: Պետաիրավական կառուցվածքի տեսանկյունից Հայաստանը որդեգրեց հանրապետական-խորհրդարանական կառավարման մոդելը: Դա նշանակում էր, որ բարձրագույն իշխանությունը օրենսդիր մարմինն էր, իսկ բարձրագույն գործադիր մարմինը՝ կառավարությունը, որի նախագահը (վարչապետը) հանրապետության ամենաբարձր պաշտոնատար անձն էր: Վերջինս կառավարության հետ ընտրվում էր խորհրդարանի կողմից, հաշվետու էր միայն նրա առաջ և անվերապահ ենթակա էր նրա որոշումներին: Այսինքն՝ նրան վստահություն կամ անվստահություն հայտնելու հարցը լսում ու լուծում էր խորհրդարանը:

Եվրոպական սկզբունքով կառավարության ստեղծումից հետո պետականաշինության երկրորդ կարևոր խնդիրը դարձավ, հանրապետության բարձրագույն իշխանության ձևավորումը, որը պաշտոնապես կոչվեց Հայաստանի խորհուրդ:

Ինչպես հայտնի է, ՀՀ գոյության 2,5 տարվա ընթացքում ձևավորվել է երկու գումարման խորհրդարան՝ առաջինը՝ ոչ ընտրովի՝ Հայաստանի խորհուրդ, երկրորդը՝ ընտրովի՝ Հայաստանի պառլամենտ (խորհրդարան): Քանի որ անկախության հռչակումից հետո ժամանակը, քաղաքական հանգամանքները և ֆինանսական միջոցները թույլ չէին տալիս միանգամից խորհրդարանի ընտրություններ անցկացնել, ուստի Թիֆլիսի Կենտրոնական և Երևանի Ազգային խորհուրդների խառը նիստում որոշվեց Հայոց (կենտրոնական) ազգային խորհրդի անդամների (15) թիվը կուսակցական համամասնությամբ եռապատկել (բացի 3 անկուսակցականներից), ինչպես նաև հանրապետությունում ապրող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ հրավիրել և կազմել Հայաստանի մեկպալատանի առաջին օրենսդիր մարմինը՝ Հայաստանի խորհուրդը (խորհրդարանը) : Ահա այս ճանապարհով Հայաստանի խորհրդում պատգամավորական տեղեր զբաղեցրին ՀՅ Դաշնակցությունը՝ 18, Հայ ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ)՝ 6, Սոցիալ-դեմոկրատները՝ 6 (5 մենշևիկ և 1 բոլշևիկ), Սոցիալիստ-հեղափոխականները (Էսէռները)՝ 6, անկուսակցականները՝ 2 (երրորդը՝ Տիգրան Բեկզատյանը, մեկնեց դիվանագիտական աշխատանքի): Բացի այդ՝ խորհրդարանում ընդգրկվեցին նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ 6 թուրք, 1-ական ռուս և քուրդ (եզդի) . բոլորը միասին՝ 46 պատգամավոր: Հարկ է նշել, որ Հայաստանի 1-ին գումարման խորհրդարանում հիմնական կառավարող ՀՅԴ-ն մեծամասնություն չի կազմել: Ընդ որում, Հայաստանի խորհրդում ներկայացված են եղել հանրապետության քաղաքական դաշտի բոլոր երեք թևերը՝ աջակողմյան՝ ՀԺԿ-ն, կենտրոնական՝ ՀՅԴ-ն և ձախակողմյան՝ Սոցիալ-

դեմոկրատական ու Էսէռ խմբակցությունները: Այս իմաստով համեմատություն անցկացնելով 1-ին և 3-րդ հանրապետությունների խորհրդարանների միջև՝ կարելի է ասել, որ ներկայումս մեզանում դժվար է անգամ ըստ թեների հստակ բաժանումներ կատարել կուսակցական խմբակցությունների գաղափարաքաղաքական ուղղվածության ու ծրագրային պլատֆորմների առումով: Այն ժամանակ, բացի խորհրդարանական կուսակցություններից, հանրապետությունում ակտիվորեն գործել են նաև արտախորհրդարանական 4 - 5 կուսակցություններ, ինչպես որ է ներկայումս:

Վերադառնալով 1-ին հանրապետությանը՝ պետք է ասել, որ ժողովրդավարության տեսանկյունից Հայաստանի խորհրդում գործնականում ներկայացված էին երկրի բոլոր հիմնական քաղաքական ուժերը և ազգությունները: Հայաստանում քաղաքական կուսակցությունները ներկայացնում էին հետևյալ խճապատկերը: Ազատորեն գործում էին շուրջ մեկ տասնյակի հասնող քաղաքական կուսակցություններ, այդ թվում՝ իրենց հայացքներով ու գործելակերպով առավել ծայրահեղական, անգամ հակապետական համարվող բոլշևիկները: Վերջինների մեծ մասը նույնիսկ պաշտոնավարում էր հանրապետության պետական զանազան հիմնարկություններում՝ լուսավորության, պարենավորման, կապի և այլն: Այս հանգամանքը դարձյալ ընդգծում էր Առաջին հանրապետության կառավարման քաղաքացիական-ժողովրդավարական բնույթը, երկրում գաղափարական բազմակարծության առկայությունը: ՀՀ ժողովրդավարական բնույթի մասին էր վկայում նաև այն փաստը, որ նրանում հաստատված էր խոսքի, մամուլի և խղճի ազատություն: Հանրապետությունում լույս էին տեսնում վեց տասնյակ անուն պարբերականներ, որոնց առնվազն կեսն ընդդիմադիր կամ անկախ էր:

Խորհրդարանին կից գործում էր Պետական վերահսկողության մարմինը՝ շուրջ 100 աշխատակիցներով, որն օրենսդիր իշխանության կողմից գործադիր իշխանության ֆինանսատնտեսական գործունեության, պետբյուջեի (ելևմտի) կատարման և այլ աշխատանքների վրա վերահսկողության իրականացման, պաշտոնական զեղծումների, չարաշահումների ու կոռուպցիայի բացահայտման կարևոր լծակներից մեկն էր: Ընդ որում, պետական վերահսկիչը միանգամայն անկախ էր գործադիր իշխանությունից՝ կառավարությունից, և ենթակա ու պատասխանատու էր միայն խորհրդարանին: Ուշագրավ է նաև, որ պետական վերահսկիչ մարմնի ներկայացուցիչը չէր կարող լինել կառավարող կուսակցության կամ խորհրդարանական մեծամասնություն կազմող խմբակցության անդամ: Նա ընտրվում էր ընդդիմադիր կուսակցությունից կամ անկուսակցականներից: Ի դեպ, պետվերահսկողության 1-ին նախագահը եղել է ճանաչված հասարակական և պետական գործիչ, իրավաբան ու ֆինանսիստ, ՀԺԿ անդամ Մինաս Բերբերյանը (1871-1919) : Ցավոք, շատ հայ մեծերի՝ Ռոստոմի, Արամի և ուրիշների պես նա ևս

ՀՀ կառավարության շենքը

վախճանվեց համաճարակից: Ջուգահեռ անցկացնելով՝ կարելի է ասել, որ Առաջին հանրապետության Պետական վերահսկողության մարմինը հիշեցնում է 3-րդ հանրապետության Ազգային ժողովի Վերահսկիչ պալատը, իսկ 2015 թ. խմբագրված Սահմանադրությամբ՝ Հաշվեքննիչ պալատը:

Յուրացնելով եվրոպական ժողովրդավարական երկրների ֆինանսավարկային քաղաքականության սկզբունքները՝ Հայաստանում ևս մշակվեց ու կազմվեց պետության եկամուտների ու ծախսերի ամբողջական իրավական փաստաթուղթը՝ պետբյուջեն, որն այն ժամանակ անվանվում էր ելմտացույց: Առաջին հանրապետության տնտեսական բլոկից առավել հիշատակության է արժանի հայոց անկախ պետականության խորհրդանիշ հանդիսացող ազգային դրամը (արժույթը): Եթե այն ժամանակ մեր ազգային արժույթը տպագրվեց Անգլիայում, ապա 3-րդ հանրապետության պարագայում՝ Գերմանիայում:

Այսպիսով, Հայաստանի խորհրդարանը, երկրի գերագույն իշխանությունն էր: Բարձրագույն գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, ենթակա էր խորհրդարանին, այսինքն՝ Հայաստանը պառլամենտական հանրապետություն էր: Այդ իմաստով հատկանշական է, որ ՀՀ 2015 թ. փոփոխված Սահմանադրությամբ դարձյալ նախապատվություն է տրվել խորհրդարանական կառավարման մոդելին, ինչն ընդգծում է իրավահաջորդական կապը Հայաստանի 1-ին և 3-րդ հանրապետությունների միջև:

Հղումներ

1-Տե՛ս Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետություն (1918-1920 թթ.), Եր., 1992, էջ 6:

2- Տե՛ս Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումը և զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 133:

3-Տե՛ս Հակոբյան Ա. Մ., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920 թթ., Եր., 2005, էջ 21-23, նաև«ՎԷՄ», Եր., 2015, թիվ 4 (52), էջ 22-40:

4-Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 27 հուլիսի 1918 թ.:

5-Տե՛ս Հակոբյան Ա., ՀՀ պարբերական մամուլի պատմություն (1918-1920 թթ.), Եր., 2005, էջ 3:

6-Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 1991, թիվ 3, էջ 48:

7-Տե՛ս Պողոսյան Վ., Սարգսյան Ն., Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, Եր., 2016, էջ 210, տե՛ս նաև էջ 416-418:

Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման պատմությունից. Արամ Մանուկյանի դերը

Արմեն Ասրյան
Պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

1918 թ. մայիսի 28-ը՝ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրումը, հայոց բազմադարյան պատմության փառավոր էջերից է, հայ ժողովրդի հերոսական ոգու, կենսունակության, արժանապատվության, ազատ և անկախ ապրելու անկոտրում կամքի արտահայտությունը: Այն շրջադարձային ազդեցություն ունեցավ հայոց պատմության հետագա ողջ ընթացքի վրա:

Հայաստանի առաջին հանրապետության ստեղծումը ամիսների հերոսական պայքարի և տքնաջան աշխատանքի արդյունք էր: ՀՀ ստեղծման գործում անուրանալի ներդրում են ունեցել բազմաթիվ ռազմական ու քաղաքական գործիչներ: Փառք նրանց բոլորին, նրանք բոլորն էլ արժանի են հիշատակության ու մեծարման: Սակայն նրանց մեջ կա մեկը, առանց որի պարզապես անհնար է պատկերացնել 1918 թ. Մայիսյան հերոսամարտերն ու ՀՀ ստեղծումը, քանզի նա վճռորոշ ազդեցություն է ունեցել իրադարձությունների ընթացքի վրա: Այդ գործիչը հայոց պատմության մեջ որպես Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր հավերժացած Արամ Մանուկյանն է (Սարգիս Հարությունի Հովհաննիսյան, 1879-1919) [1]:

Սակայն ամեն ինչի մասին՝ հերթականությամբ: 1917 թ. վերջին հայ ժողովրդի գլխին կախվել էր «1915 թ.» կրկնության վտանգը: Ցեղասպան Թուրքիան, օգտվելով Կովկասյան ռուսական ռազմաճակատի քայքայումից, օրակարգի հարց էր դարձրել ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան Հայաստանի ու Այսրկովկասի նվաճումը և անթաքույց պատրաստվում էր հարձակման: Այն, ի դեպ, սկսվեց 1918 թ. հունվարի 30-ին: Ինչպես միշտ, մեծ տերությունները զբաղված էին իրենց նվաճողական խնդիրներով, և նրանցից որևէ մեկին չէր հետաքրքրում հայոց ճակատագիրը:

Դրությունը բարդանում էր նրանով, որ հայ ժողովուրդն իր բնօրրանում չուներ ազգային իշխանության գործող մարմիններ ու կազմակերպված զինուժ: 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Ռուսաստանից փաստացի անջատված Այսրկովկասի կառավարությունը՝ Կոմիսարիատը, որը բաղկացած էր հայերի, վրացիների և կովկասյան թաթարների (այժմյան ադրբեջանցիները) ներկայացուցիչներից, զբաղված էր խարդավանքներով և ամենևին չէր խորհում թուրքերից պաշտպանվելու մասին: Այդ պայմաններում Երևանի նահանգում հայությունը հայացքն ուղղել էր դեպի տեղի Հայոց ազգային խորհուրդը, որը՝ որպես ազգային կառույց, կոչված էր կազմակերպելու Արևելյան Հայաստանի զգալի մասն ընդգրկող Երևանի նահանգի հայության կյանքը: Սակայն նա էլ իր անելիքի մասին պատկերացում չուներ: Ս. Վրացյանի բնորոշմամբ՝

Արամ Մանուկյան

նա «գնում էր դեպքերի հոսանքի հետևից» [2]: Հայաստանը գտնվում էր գրեթե ամբողջական շրջափակման մեջ, այստեղ զգացվում էր ֆինանսների, պարենի և դեղորայքի պակաս, տարածվում էին համաճարակային հիվանդությունները: Արևելյան Հայաստանում էին ապաստանել Մեծ եղեռնից մազապուրծ 200-300 հազար արևմտահայեր, որոնք զուրկ էին ապրուստի տարրական միջոցներից: Օրեցօր ուժգնանում էին Թուրքիայի կողմից կազմակերպվող՝ կովկասյան թաթարների հակահայկական զինված խռովությունները:

Այսպիսի իրավիճակում 1917 թ. դեկտեմբերին Թիֆլիսի Հայոց կենտրոնական ազգային, Հայ զինվորական և Արևմտահայ ապահովության խորհուրդներն արտակարգ լիազորություններով Երևանի նահանգ գործուղեցին ազատագրական շարժման նշանավոր գործիչ Արամ Մանուկյանին: Արամի գործուղումը Երևան առաջին հերթին պայմանավորված էր բացառիկ ծանր պայմաններում գործ կազմակերպելու և այն վարելու նրա բացառիկ կարողություններով:

1917 թ. դեկտեմբերին, երբ հայոց երկնակամարում

Դրո

տիրում էր անորոշության, ինչ-որ ուժերից օգնության ակնկալիքի մթնոլորտ, Արամը հայ ժողովրդին ուղղեց հետևյալ պատմական կոչը. «Ամէն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթէ նայող կայ, նայում է միայն յանուն իր շահերի… Հայերով ո՛չ ոք չի հետաքրքրւում, շօշափելի օգնութիւն հասցնելու մտքով: Դրա հակառակը, կայ դաւադրական վերաբերմունք: Մենակ ենք և պէտք է ապավինենք միայն մեր ուժերին՝ թէ՛ ճակատը պաշտպանելու և թէ երկրի ներսը կարգ հաստատելու համար» [3]: Այս կոչը դարձավ քաղաքական ուղեգիծ և, դրվելով գործողության մեջ, հայ ժողովրդին փրկեց նոր աղետից և ապահովեց անկախ պետականության վերականգնումը:

Արամը, օժտված Վանի 1915 թ. ապրիլյան հերոսամարտի կազմակերպման, ինչպես նաև Վանի նահանգապետության ղեկավարի փորձառությամբ, ներկայացրեց գործողությունների հստակ ծրագիր և, ցուցաբերելով քաղաքական հեռատեսություն, ռազմավարական մտածողություն, հետևողականություն, երկաթյա կամք, քայլ առ քայլ կենսագործեց այն: Նա առաջին հերթին ձեռնամուխ եղավ իշխանության կենսունակ մարմինների ստեղծմանը: Ստեղծվեց Երևանի նահանգի իշխանության նոր և արագաշարժ մարմին՝ Հայոց ազգային խորհրդի լիազորություններով օժտված Հատուկ կոմիտեն: Բացի այդ՝ նոր շունչ հաղորդվեց անգործության մատնված նախկին իշխանության նահանգային, գավառային և գյուղական մարմիններին: ՀՅ Դաշնակցության ղեկավար գործիչ Արամը, միշտ վեր լինելով կուսակցական նեղմիտ գործելակերպից, արդարամտության ու խելամիտ քայլերի շնորհիվ կարողացավ Երևանի Հայոց ազգային խորհրդի և Հատուկ կոմիտեի շուրջ համախմբել ամենքին՝ անկախ նրանց քաղաքական հայացքներից ու սոցիալական դիրքից:

Հաջորդ խնդիրը կանոնավոր հայկական բանակի ստեղծումն էր: 1917 թ. դեկտեմբերի 23-ին Հատուկ կոմիտեն հրապարակեց Արամի հեղինակած «Կոչ հայ զինվորներին» շրջաբերականը, որում նա ներկայացնում էր իրավիճակի ողջ լրջությունը և բոլորից պահանջում կանգնել հայրենիքի պաշտպանության դիրքերում: Օրեր անց հայտարարվեց 20-32 տարեկան հայ զինապարտների զորակոչ: Մարտունակ բանակ ստեղծելու համար անհրաժեշտ էր զորակոչել բոլորին՝ առանց բացառության: Այդ իսկ պատճառով զորակոչվում էին նաև նախկինում զորակոչից ինչ-ինչ պատճառներով ազատվածները: Անգիջում պայքար ծավալվեց դասալքության դեմ: Արամի, հայրենանվեր գործիչներ Դրոյի, գեներալ Մովսես Սիլիկյանի և բազում այլ գործիչների համատեղ և անդադրում աշխատանքի շնորհիվ 1918 թ. մարտի սկզբին հիմնականում ավարտվեց Երևանյան դիվիզիայի կազմավորումը, որն առանցքային դեր էր ունենալու 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի ընթացքում: Կարելի է ասել, որ պետականության բացակայության պայմաններում Արամը սկիզբ դրեց պետականությանը հատուկ երկու կարևորագույն բաղադրիչների՝ իշխանության մարմինների և կանոնավոր բանակի ձևավորմանը:

1918 թ. առաջին եռամսյակում հնազանդեցվեցին ավազակաորջերի վերածված 50-ից ավելի թաթարական գյուղեր, որտեղից հարձակումներ էին գործում նույնիսկ հայկական զորամասերի վրա: Վճռական պայքար ծավալվեց նաև հայ ավազակային տարրերի դեմ, որոնք թալանում և սպանում էին հայ բնակչությանը: Երկրի ֆինանսական կարիքները բավարարելու համար սահմանվեց ազգային տուրք:

Արամը ձգտում էր մոբիլիզացնելու հայության ողջ ներուժը: Դրա համար նա փորձեց կապ հաստատել նույնիսկ Բաքվում գտնվող Ռոստոմի հետ, որպեսզի ամրապնդի Երևանի թիկունքը [4]:

Այս ընթացքում թուրքական զորքերը, հաղթահարելով նոր ձևավորվող հայկական փոքրաթիվ զորամասերի դիմադրությունը, գրեթե ավարտեցին Արևմտյան Հայաստանի նվաճումը՝ ընդհուպ մոտենալով Արևելյան Հայաստանի սահմաններին: Երևանում անհրաժեշտություն առաջացավ կենտրոնացնելու

Մովսես Սիլիկյան

Թովմաս Նազարբեկյան

իշխանությունը: 1918 թ. մարտի 24-ին ժողովրդական զանգվածները, զորքը և Երևանի Հայոց ազգային խորհուրդն Արամին ընտրեցին Երևանի նահանգի դիկտատոր [5]: Իր փրկության հույսը հայ ժողովուրդը կապեց Արամի հետ ու չսխալվեց: Այդպես հազվադեպ է լինում: Դիկտատոր ընտրված Արամը չդարձավ բռնապետ, չփոխեց իր վարքն ու կենսակերպը, մնաց ՀԱՅ ՄԱՐԴ՝ իր անսահմանափակ իշխանությունը ծառայեցնելով հայությանը համախմբելու, նրա զինական ներուժը ամրապնդելու և հզորացնելու գործին: Նրա կարգադրությամբ ռազմաճակատի խորքից թիկունք փոխադրվեց մեծ քանակությամբ զենք-զինամթերք, որի կարիքը հայոց զորքը Մայիսյան հերոսամարտերի ընթացքում շատ էր զգալու: 1918 թ. մարտի 28-ին Արամը ժողովրդին կոչ արեց ցույց տալու աշխարհին, որ «Հայը ազատ, անկախ ապրելու իրաւունք ունի» [6]:

1918 թ. ապրիլին Թուրքիան ստեղծեց 35 հազարանոց «Կարս» բանակային խմբավորումը, որի չորս զորախմբերից երկուսը 1918 թ. մայիսի 15-ին Ալեքսանդրապոլը գրավելուց հետո Ալեքսանդրապոլ – Համամլու (Սպիտակ) – Ապարան և Ալեքսանդրապոլ – Արաքս – Սարդարապատ ուղղություններով շարժվեցին դեպի Երևան: Մյուս երկուսը պետք է գրավեին Արևելյան Հայաստանի հյուսիսային ու հյուսիսարևելյան շրջանները և շարժվեին դեպի Թիֆլիս ու Բաքու: 1918 թ. մայիսի 21-ին թշնամին գրավեց Երևանից 30 կմ հեռավորության վրա գտնվող Սարդարապատ կայարանն ու գյուղը: Առջևում Սուրբ Էջմիածինն ու Երևանն էին: Առավել քան երբևէ դրված էր հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը, այնինչ ժողովրդի, նույնիսկ զորահրամանատարության շրջանում տիրում էր խուճապի և հուսահատության մթնոլորտ: Հայկական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանը զորքերին կառավարելը համարում էր անհնար և Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին հորդորում դադարեցնել կռիվները թուրքերի դեմ ու հաշտություն կնքել նրանց հետ՝ միամտորեն կարծելով, որ այդպես հնարավոր կլինի փրկել զորքի մի մասը և բնակչությանը [7]: Այդ օրերին Թիֆլիսում գտնվող Ս. Վրացյանը տարիներ անց նկատում է, որ «դիմադրությունը շատերին թվում էր անհնար և անիմաստ» [2, էջ 145]:

Ծանրագույն այդ ժամանակաշրջանում թաթարները՝ բացահայտ, իսկ վրացիները գաղտնի փորձում էին իրենց հավակնությունները բավարարել հայկական տարածքների հաշվին:

1918 թ. մայիսյան ծայրահեղ ծանր իրավիճակում հայրենիքի պաշտպանության կազմակերպումն ամենայն պատասխանատվությամբ իր վրա վերցրեց Արամը՝ դրսևորելով թշնամուն հակահարված հասցնելու երկաթյա կամք, Վարդանանց վայել վճռականություն ու քաջություն:

Դեռևս 1918 թ. մայիսի 19-ին Արամը երևանյան զորքերի հրամանատար գեներալ Մ. Սիլիկյանին հանձնարարել էր Սարդարապատի շրջանում թշնամու

Բաշ-Ապարանի հրամանատարական կազմը

դեմ վճռական ճակատամարտ մղել՝ խոստանալով ապահովել թիկունքի անվերապահ աջակցությունը: Նույն օրը՝ մայիսի 19-ին, երբ Ազգային խորհրդում հարց բարձրացվեց Երևանից հեռանալու մասին, Արամը վճռականորեն մերժեց՝ նշելով. «….ոչ մի նահանջ ոչ մի գծի վրա: Նահանջ Երևանից՝ կնշանակե խաչ քաշել մեր ամբողջ գործունեության և մեր ապագա քաղաքական մուրազներուն վրա, բոլորդ պիտի մնաք և մեռնիք» [8]: Նրա անբեկանելի վճիռն էր՝ պետք է պայքարել մինչև վերջին մարդը, մինչև արյան վերջին կաթիլը: Իր վճռականությամբ ու լավատեսությամբ Արամը պայքարի էր մղում բոլորին. ոչ ոք, կամա թե ակամա, ոչինչ չէր խնայում հայրենիքի փրկության համար: Նրան կարելի էր տեսնել ամենուր՝ զինվորականության շրջանում, հրապարակներում, եկեղեցիներում, տներում: Հայրենիքի պաշտպանության առաջին շարքերում էր նաև Հայ առաքելական եկեղեցին:

1918 թ. մայիսի 21-ին Արամը բազմահազար ժողովրդի առաջ ունեցած ելույթի ժամանակ կոչ արեց զենք վերցնելու ու դուրս գալու թշնամու դեմ [9]: Նրա կոչին արձագանքեցին 100-ավոր մարդիկ: Նույն օրը Արամի հրամանով ճնշվեց մի խումբ դասալիքների կողմից Երևանում նախապատրաստվող հակապետական խռովությունը, որի նպատակն էր անձնատուր լինել թուրքերին: Արամի հրահանգով պարտիզանական շարժում ծավալվեց Ապարանում:

Ժողովրդի աջակցությունից ոգևորված հայկական զորքերը 1918 թ. մայիսի 22-ին Սարդարապատի ճակատում հակահարձակման անցան թվապես և զինվածությամբ գերակշռող թուրքական զորքերի վրա՝ առաջին երկու օրում ազատագրելով Սարդարապատ գյուղն ու կայարանը և մի շարք այլ բնակավայրեր [10]: Մայիսի 24-26-ը տեղի ունեցած արյունահեղ կռիվները կողմերից ոչ մեկին հաջողություն չբերեցին: Մայիսի 27-ին հայկական զորքերն անցան նոր հակահարձակման և մինչև մայիսի 29-ը տևած ծանր կռիվների ընթացքում ջախջախիչ պարտության մատնեցին թշնամուն [11]: Տալով 3500 զոհ՝ թուրքերը նահանջեցին Ալեքսանդրապոլի ուղղությամբ: Իր խայտառակ պարտությունը թաքցնելու նպատակով

թշնամին լուր տարածեց, թե իբր զինվորական գնացքը վթարի է ենթարկվել:

Ոգևորվելով Սարդարապատում հայկական զորքերի առաջին հաղթանակից և ստանալով այնտեղից ուղարկված ռազմական համալրումը՝ Ապարանի ճակատում քաջասիրտ Դրոյի գլխավորությամբ հայկական զորքերը ևս անցան հակահարձակման և ջախջախեցին թուրքերին՝ վերացնելով Երևանը շրջափակելու վտանգը: Թուրքերը նահանջեցին նույնիսկ Սպիտակից:

Մայիսի 23-ին ստանալով Սարդարապատում հայոց առաջին հաղթանակի լուրն ավետող Արամի հեռագիրը՝ մինչ այդ Ղարաքիլիսայից (այժմ՝ Վանաձոր) խուճապահար Դիլիջան նահանջող հայկական զորամասերն ու ժողովրդական զանգվածները հետ վերադարձան և հզոր ճակատամարտ մղեցին թուրքական մեծաքանակ զորքերի դեմ:

Այսպիսով, 1918 թ. Մայիսյան հերոսամարտերում հայոց զենքը պսակվեց փառքով, թուրքական զորքերին հասցվեց ջախջախիչ, հարգանք պարտադրող հակահարված:

Մայիսյան հերոսամարտերը, որոնց կազմակերպման գործում առաջնակարգ և վճռորոշ մասնակցություն ունեցավ Արամ Մանուկյանը, հայ ժողովրդին փրկեցին վերջնական բնաջնջումից, Արևելյան Հայաստանը՝ ամբողջական օկուպացումից և հնարավոր դարձրին անկախ պետականության վերականգնումը: 1918 թ. մայիսի 28-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, որն ամիսներ շարունակ ջանում էր քաղաքական միջոցներով հայ ժողովրդին զերծ պահել աղետից, ընդունեց Հայաստանի անկախության հռչակագիրը, որը մամուլում հրապարակվեց մայիսի 30-ին [12]: Այսպես ստեղծվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանը Երևանի Հայոց ազգային խորհրդին հղած հեռագրում հայտնում էր. «....թեև փոքրիկ և աղքատ, բայց Ազատ Հայաստանի համար մենք պարտական ենք մեր զորքերի անձնազոհությանը: Որքան մեզ հայտնի է, գերմանացիները և թուրքերը Կովկասը բաժանում էին Վրաստանի և Ադրբեջանի, հայերին ապահովելով միայն ֆիզիկական գոյություն: Պետք է ենթադրել, որ մեր զորքերի դիմադրությունը նրանց հարկադրեց ճանաչել և Հայաստանը» [13]: Միանշանակ, պարզապես անառարկելի իրողություն է այն, որ Հայաստանի Հանրապետությունը ստեղծվեց բացառապես Մայիսյան հերոսամարտերի շնորհիվ: Հիշենք՝ մինչև Մայիսյան հերոսամարտերը Թուրքիան դեմ էր ինքնուրույն Հայաստանի ստեղծման ցանկացած գաղափարի [14], թուրքերն անգամ հրաժարվում էին հայ գործիչների հետ բանակցելուց: Ավելին՝ ՀՀ ստեղծումից հետո էլ, անտեսելով իր իսկ կողմից 1918 թ. հունիսի 4-ին ՀՀ-ի հետ կնքված՝ իր համար խիստ շահավետ Բաթումի հաշտության պայմանագիրը, Թուրքիան ամեն ինչ արեց հայոց անկախությունը ոչնչացնելու համար:

Հանրապետության ստեղծումով, որի «գոյության փաստը ինքնին զարմանահրաշ նվաճում էր» [15], հայ ժողովուրդը պատմության նորագույն փուլ թևակոխեց իբրև հաղթանակած ժողովուրդ և բռնեց վերածնունդի ուղին: Նրա հենքի վրա բարձրացավ Հայաստանի երկրորդ (Խորհրդային Հայաստան), ապա՝ նաև ներկայիս՝ երրորդ հանրապետությունը: Համոզված ենք՝ որքան էլ դժվարություններն ու խոչընդոտները շատ լինեն, նրա հենքի վրա էլ բարձրանալու է հզոր և Միացյալ Հայաստանը:

Հաղթանակի, ազատության, առաջընթացի, արժանապատվության խորհրդանիշ հանդիսացող և անգնահատելի նշանակություն ունեցող այս իրադարձությունն ունի անժամանցելի խորհուրդ. հայ ժողովուրդը կենսունակ է և կարող է սեփական ուժերով կերտել իր պատմությունը, իր առաջընթացն ու բարեկեցությունը: Հայ ժողովուրդն անպարտելի է, երբ ունենում է ազգային նպատակներով առաջնորդվող, արդարամիտ, հեռատես, վճռական և միաժամանակ հավասարակշռված առաջնորդներ, որոնք ապահովում են նրա առաջընթացը, միասնությունն ու կազմակերպվածությունը: ■

Հղումներ

[1] Արամ Մանուկյանի մասին մանրամասն տես Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը (ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երևան, 2009, 268 էջ:

[2] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 125:

[3] Աստուածատրեան Ա., Արամ, «Հայրենիք», Բոստոն, 1964, ապրիլ, թիվ 4, էջ 70:

[4] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Երևան, 1990, էջ 143:

[5] Տես «Զանգ», Երևան, 1918, մարտի 27, № 24:

[6] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 289, ց. 1, գ. 9, թ. 1:

[7] Տես ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 253, թ. 1:

[8] «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1921, հունվարի 30, № 670. 249:

[9] Տես «Հորիզոն», Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 6, № 178:

[10] Տարբեր տվյալների համաձայն՝ Սարդարապատում 5500-7000-անոց հայկական բանակը կռվում էր 6000-9000-անոց թուրքական կանոնավոր բանակի և նրա կազմում գտնվող 1500-3000 քուրդ հեծյալների դեմ: Բացի այդ, թուրքերն ունեին ռազմամթերքի մեծ պաշարներ, Արաքսի աջ ափից նոր ուժեր ստանալու հնարավորություններ, ինչպես նաև վայելում էին կովկասյան թաթարների անվերապահ աջակցությունը: Տե՛ս Ասրյան Ա., նշվ. աշխ., էջ 193-198:

[11] Տես ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 84, թ. 5, Աֆանասյան Ս., Սարդարապատի հաղթանակը (Հայաստան. Մայիս 1918), Երևան, 1991, 112 էջ, Ավետիսյան Հ., Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս, Երևան, 1998, 302 էջ:

[12] Տես Վրացյան Ս., Կեանքի ուղիներով, Դէպքեր: Դէմքեր: Ապրումներ, հ. Դ, Պէյրութ, 1965, էջ 120, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Պատ. խմբագիրներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Երևան, 2000, էջ 18:

[13] ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 2, թ. 10:

[14] Տես Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы Политического архива министерства иностранных дел Кайзеровской Германии. Сборник. Составитель, ответственный редактор, автор предисловия, введения и примечаний В. Микаелян, Ереван, էջ 508:

[15] Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն. Հատոր I. Առաջին Տարին. 1918-1919, Երևան, 2005, էջ 39:

Իրական և վիպական Դրոն

Վարդան Պետրոսյան

Ես չեմ ճանչնար, Արամի մահից յետոյ ուրիշ ոևէ մէկին, որ Հայաստանում այդ օրերին աւելի ժողովրդական լինէր, ավելի համակրանք վայելեր, ավելի սիրուէր ժողովրդի բոլոր խավերի կողմից, քան Դրոն-ընկեր Դրոն: Տիպողոս չունէր նա: Տիպողոսը երէք տարուց էր բաղկացած- ԴՐՕ, կամ շատ-շատ ԸՆԿԵՐ ԴՐՕ: «Ընկեր» բառի ամենամտերիմ ու հարազատ իմաստով:

Սիմոն Վրացյան

19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ ազգային ազատագրական պայքարի պատմությունը հարուստ է նվիրական անուններով, որոնցից հատկապես Նիկոլ Դումանի, Աղբյուր Սերոբի, Անդրանիկի, Հրայր Դժոխքի, Գևորգ Չավուշի, Քեռու, Եփրեմ խանի (1), Սեբաստացի Մուրադի և Սեպուհի ներկայությունը կարող է պատիվ բերել մարտական խիզախումների նույնիսկ ամենահարուստ պատմություն ունեցող ժողովրդին: Գործի ու գաղափարի դյուզացունների այդ փաղանգում իր անուրանալի տեղն ունի առասպելական Դրոն՝ Դրաստամատ Կանայանը՝ «... քաջերուն մէջ շքեղօրէն քաջը և հերոսներուն մէջ կախարդօրէն հերոսը ...» (2), իբրև 20-րդ դարասկզբի հայոց դյուցազնապատումի կրտսեր արքայազնը: Սակայն քաջությունը, լինելով Դրոյին բնութագրող հիմնական գծերից մեկը, որը խոստովանել են նույնիսկ նրա գափարական հակառակորդները (հմմտ. «Իսկ Դրոն, իգդիրցի այդ խմբապետը // Որ եղել է հերոս, անվախ տեռորիստ ... » (3)), խիստ անբավարար է առհասարակ Դրո երևույթը ճանաչելու և արժևորելու համար: Դրոյի ժամանակաշրջանը քաջերի ժամանակաշրջան էր, և քաջության պակաս չէր զգացվում ...

Դրոյի կենսագրության հայաստանյան փուլ՝ գաղափարական ահաբեկիչից մինչև ռազմական նախարար, տևել է շուրջ տասնհինգ տարի՝ 1905-1920 թթ.: Այդ ընթացքում նրա ղեկավար մասնակցությամբ ձեռքբերված հաղթանակներից ու գործերից յուրաքանչյուրը (հայ-թաթարական ընդհարումներ, իբրև գնդի հրամանատար՝ 1914-16 թթ. մասնակցություն կամավորական կոիվներին, Երևանի նահանգի թուրքական տարրի «խաղաղեցում» 1917-18 թթ., Բաշ-Ապարանի հերոսամարտ, հայ-վրացական պատերազմ, Զանգեզուրի մահմեդական ապստամբ օջախների ճնշում և Ղարաբաղյան «էքսպեդիցիա» 1920 թ., Սուրմալուի ճակատամարտ ևն) բավարար էր, որպեսզի նրա անունը փառքով պսակվեր հայոց պատմության մեջ, իսկ իր գործունեությունն ամբողջությամբ և առհասարակ նրա բացառիկ ներկայությունը հայության փոթորկվող կյանքում իրավունք են տալիս նրան դասելու մեր հազարամյա պատմական երթի Մեծ երախտավորների շարքում: Կարծում ենք՝ լիովին իրավունք ուներ Ս. Վրացյանը, երբ Դրոյին Արամ Մանուկյանի հետ համարում էր «գլխաւոր կերտիչն ու ոգին նորածին պետութեան» (4), որովհետև այն գործունեությունը, որ ծավալեցին «Երևանի նահանգի զինվորական կոմիսար» Դրոյի գլխավորած զորաջոկատները 1917-18 թթ., բացառիկ նշանակություն ունեցավ Արևելյան Հայաստանի տարածքում իրադարձությունների հետագա զարգացումների առումով: Ըստ էության, Մայիսյան հերոսամարտերում մեր հաղթանակների, հետևաբար նաև անկախ պետականության հիմնադրման նախադրյալները ստեղծվեցին հենց այդ ընթացքում: Չլիներ ներքին թշնամուն (=թուրքերին) զսպող այդ երկաթյա բռունցքը, երկիրը պարզապես կպայթեր ներսից և այլևս անկարելի կլինեին Սարդարապատի, Բաշ Ապարանի ու Ղարաքիլիսայի հերոսամարտերը:

Դրոն պարզապես «քաջ խմբապետ» չէր, այլ այն խմբապետը, որի ռազմագիտական ձեռնարկումներին ամենայն լրջությամբ էին վերաբերվում ցարական բանակի փորձառու գեներալները, ինչպես զորավարներ Թ. Նազարբեկյանն ու Հախվերդյանը, ովքեր առհասարակ մեծ վերապահումով են վերաբերվել մեր մյուս անվանի խմբապետներին, այդ թվում՝ Անդրանիկին՝ որպես զինվորական գործչի (5). «Դրօն անունով խմբապետ էր, կոչումով յեղափոխական, հմտութեամբ ու փորձառութեամբ՝ զինուորական»,- գրել է Ս. Վրացյանը (6): Դրոն նաև այն խմբապետն էր, որը ազգային իշխանության ներկայացուցիչների և կադրային զինվորականների, այդ թվում՝ անվանի զորավարների հետ հարաբերություններում զսպում էր մյուս խմբապետներին: Այնինչ, եթե հավատանք Չարենցին, Դրոն վախենում էր Շավարշի շուրջը խմբված զինվորներից՝ իգդիրցի Եգորից, Ղարսեցի Հարոյից, Մշեցի Թաթիկից ու «Սաքոյից Ղաչաղ» (7): Ստացվում է՝ այն Դրոն, որին հարգել, որի հետ հաշվի են նստել, որից, մեղմ ասած, նաև զգուշացել են թե՛ խմբապետները և թե՛ կադրային զինվորականները, որից պատկառել է նույնիսկ հեղինակություններ չճանաչող Անդրանիկը (8), այդ նույն Դրոն իբրև թե վախեցել է կամավորական կոիվների բովով անցած և բարոյալքված մի քանի զինվորից:

Ի դեպ, ինչպես հուշագրական, այնպես էլ պատմագիտական աշխատություններում ոչ հազվադեպ խոսվել է Դրո-Անդրանիկ իբրև թե լարված հարաբերությունների մասին: Ըստ իրազեկ

աղբյուրների, այդ խոսակցությունները խիստ չափազանցված են, եթե չասենք, որ իրականության հետ գրեթե կապ չունեն: Հանգամանքների բերումով մեր երկու մեծ հերոսները երբեմն հայտնվել են «բարիկադի» տարբեր կողմերում, բայց դրա պատճառները անձնական չէին: Այդպիսի մի դրվագ է 1919 թ. ապրիլի 20-ին Ծիծեռնակաբերդի բարձունքից Հայաստանի կառավարության շենքը գնդակոծելու Անդրանիկի փորձը, որը կասեցվում է Դրոյի շնորհիվ: Չնայած որ ակադեմիկոս Հ. Սիմոնյանը Անդրանիկի հետքայլը բացատրել է Երևանից նրան ընդառաջ եկած պատվիրակության հաշտության խնդրանքներին տեղի տալով (9), մեր կարծիքով, սակայն, ով ծանոթ է 1916-ից ի վեր ազգային իշխանությունների հետ հարաբերություններում Անդրանիկի դրսևորած վարքագծին, կընդունի, որ նրան կանգնեցրել է առաջին հերթին Դրոյի ուղարկած նամակը: Անդրանիկը, քաջատեղյակ լինելով Դրոյի կարողություններին, ռազմիկի իրեն բնորոշ սուր զգացողությամբ արագ ըմբռնել է պարտության անխուսափելիությունը, եթե փորձեր իր սպառնալիքն իրագործել (10):

Իսկ անձնապես նրանց միջև եղել է փոխադարձ համակրանք:

Չարենցը իր հերոսի՝ խմբապետ Շավարշի անունից Դրոյին վերագրում է նաև նենգ, դավադիր էություն (հմմտ. «Ո՞վ գիտե Դրոյին: Ո՞վ գիտե: // Կարող է սարքել հազար դավ: Դրոն: // Դժվար է կովել հետը: // Չուզեց խաթրով անի – կանի զոռով: // Կհանի իր վրեժը: » (11)): Հատկանիշներ, որոնք առհասարակ խորթ են եղել իրական Դրոյին: Ընդհակառակը, ըստ ժամանակակիցների վկայությունների՝ Դրոն օժտված էր բարձր ասպետականությամբ: Հայտնի է, որ սկզբունքային հարցերի շուրջ նա հակասություններ է ունեցել կուսակցական-պետական առանձին ղեկավար գործիչների, այդ թվում՝ Ռուբեն Տեր-Մինասյանի հետ: Բացառված չէ, որ այդ հակասություններն ինչ-որ չափով նաև անձնական նստվածք տային նրանց մեջ, որը ևս մարդուն խորթ զգացում չէ, սակայն Հայաստանի խորհրդայնացումից հետո (1920 թ. դեկտեմբերի 2), երբ մինչև բոլշևիկյան Հեղկոմի ժամանումը Դրոյի ձեռքում էր փաստական իշխանությունը, նա շտապեց երկրից դուրս բերել առաջին հերթին այդ գործիչներին, քանզի գիտեր, որ մայիսյան խռովությունները ճնշելու պատճառով բոլշևիկները նրանց դեմ հատկապես տրամադրված էին և ձերբակալելու դեպքում չէին խնայի (12): Մի բան, որն ակնհայտ դարձավ Բյուրո-կառավարության վարչապետ Հ. Օհանջանյանի օրինակով. վերջինս ստույգ մահվանից խուսափեց միայն Փետրվարյան ապստամբության շնորհիվ:

Խորհրդային պատմագրության մեջ Դաշնակցությունը և նրա նշանավոր խմբապետները նույնացվել են մաուզերիզմի հետ: Նույնացնողները, իհարկե, գիտեին, որ իրենք զբաղված են

Դրոյի գլխավորած երկրորդ կամավորական գնդի երդման արարողությունը. Քանաքեռ, 1915թ.

պատմության կեղծարարությամբ (այդպիսին էր խորհրդային քարոզչամեքենայի պահանջը. դրա դասական նմուշը 1920-ական թթ. այսպես կոչված անաստասմիկոյանական տրամաբանությունն է): Չարենցի պոեմում, ի պատիվ մեծ բանաստեղծի, այդպիսի նույնացում չկա: Դրոն մաուզերիստ չէ: Ընդհակառակը, նա պայքարում է մաուզերիզմի դեմ, որի ներկայացուցիչներն էին տվյալ դեպքում խմբապետ Շավարշն ու իր «տղերքը», որոնց նմանները կարող էին «կառքից իջեցնել» մինիստրին, «դեմքին թքել» ու «նստել նրա կառքը» (13): Դրոյի երկաթյա բռունցքը սաստում էր հենց այդպիսիներին: Չսաստե՞ր: Ներքին ու արտաքին թշնամիների դեմ շարունակական պատերազմների մեջ գտնվող երկիրը, որի հետևանքը զինված խմբավորումների համատարած ներկայությունն էր, փորձում էր վեր բարձրանալ ավերակների միջից, դառնալ համայն հայության երազանքների հայրենիքը: Իսկ կդառնա՞ր, եթե ազատագրական պայքարում շատ թե քիչ վաստակ ունեցող յուրաքանչյուր ոք շավարշային վարքագիծ դրսևորեր և մնար անպատիժ: Հետևաբար շավարշներին զսպելը անխուսափելի անհրաժեշտություն էր, որը ևս հանգամանքների բերումով ծանրացել էր Դրոյի ուսերին, բայց վերջինիս «գաղտագողի հնձելու» մեղադրանք ներկայացնելը (թեկուզև Շավարշի անունից) առնվազն իրականության խեղաթյուրում էր և որևէ աղերս չունի ասպետական խառնվածքով Դրոյի, այսինքն՝ իրական Դրոյի հետ:

Բայց և այնպես, «հոգեբանական դրամայի» չարենցյան հանգուցալուծումը իրականության տրամաբանության մեջ է. Շավարշը չէր կարող Դրոյի հրամանն անտեսել ոչ միայն այն պատճառով, որ գիտեր՝ անպատիժ չի մնա, այլև այն պատճառով, որ Դրոյի կողքին էին նաև Շավարշի «կնքահայր» խմբապետ Սմբատի նման գաղափարական և հոգեկան բարձր նկարագրով ռազմիկները, որոնք իրենց հերթին լրացուցիչ արգելք էին շավարշիզմի ճանապարհին (14):

Չնայած որ Դրոյի ողջ կյանքը նման էր փոթորկված օվկիանոս դուրս եկած նավի, բայց և այնպես նրա որոշ դրվագներ հատկապես փոթորկուն էին: Այդպիսին էր նրա և համախոհների՝

Դրոն Սոսե մայրիկի հետ

Գ. Նժդեհի և մյուսների«համագործակցությունը» նացիստական Գերմանիայի հետ: Այս պատմության վիպական արտացոլումը տեղ է գտել Վ. Ոսկանյանի «Շշուկների մատյան» տաղանդավոր վեպում. «Զորավար Դրոյի զենքերը» հատվածը Դրոյի այդ շրջանի գործունեության միֆականացված պատումն է: Նացիստական Գերմանիայի հետ Դրոյի «համագործակցությունը», թերևս, նրա անդադրում կյանքի ամենից բարդ և խնդրահարույց դրվագն է, որը սկզբնապես ոչ միանշանակ է ընդունվել նաև ՀՅԴ-ի շարքերում (15): Դրա գնահատականը միանշանակ չէ նաև «Շշուկների մատյանում»: Դրոյի կերպարի շուրջ վեպում ստեղծված դրական խորհրդավորությունը առնվազն վկայում է նրա անձի նկատմամբ Եվրոպայի, մասնավորապես՝ Ռումինիայի հայության մեջ եղած մեծ համակրանքի մասին, բայց դա չի խանգարում, որպեսզի հեղինակը, այնուամենայնիվ, վերապահումով, եթե չասենք՝ քննադատաբար վերաբերվի նացիստական Գերմանիայի հետ նրա «համագործակցությանը»: Ըստ հեղինակի, Դրոյի՝ այդ համագործակցությամբ պայմանավորված նպատակները, այն է՝ « … գերմանացիների գրված Եվրոպայի հայերին պաշտպանելն ու բոլշևիկների գրված Հայաստանն ազատագրելը» իրականություն չդարձան (16): Այս ձևակերպումը ճշմարտանման լինելով, սակայն, ամբողջ ճշմարտությունը չէ: Նախ, դա իրողությունների վիպական, այլ ոչ թե քաղաքագիտական և պատմագիտական գնահատական է, երկրորդ՝ նրանում բացակայում է երրորդ խնդիրը՝ հայկական լեգեոն կազմակերպելու քողի տակ գերմանական ռազմաճամբարներից ազատել անմարդկային պայմաններում գտնվող և ստույգ մահվան դատապարտված հայ (=խորհրդահայ) ռազմագերիներին: Այդ «համագործակցությամբ» Դրոն իր համախոհների հետ փրկել է շուրջ 40 000 հայի կյանք (17): Մի՞թե դա փոքր նպատակ էր: Ինչ վերաբերում է բոլշևիկներից Հայաստանը ազատագրելուն, ապա առաջնահերթ խնդիր էր, նախ, Գերմանիայի միջոցով զսպել Թուրքիայի ախորժակը, որը, լինելով գերմանացիների դաշնակիցը Երկրորդ աշխարհամարտում, հարմար պահի էր սպասում Խորհրդային Հայաստան ներխուժելու և 1915-ին անավարտ մնացածն ավարտին հասցնելու համար …

Ի տարբերություն «Խմբապետ Շավարշի» հեղինակի, նկատելի է, որ «Շշուկների մատյանի» հեղինակը փորձել է հնարավորինս անկողմնակալ լինել Մեծ հայի մասին իր գնահատականներում: Կարծում ենք՝ ասվածի վկայություններն են «Զորավար Դրոյի զենքերը» հատվածը եզրափակող հետևյալ տողերը. « … Ինչ վերաբերում է Դրոյի զենքերին, եթե գոյություն են ունեցել կամ որևէ տեղ թաղված են, դրանք օգտակար եղան գեթ պատրանքներով սնելու համար նրանց, որոնց համար այլևս ոչ մի հույս չկար: Ինչը որ այդ ժամանակների համար քիչ բան չէր» (18):

Հայ կամավորականները և ռուս զինվորականները ազատագրված Վանում: Կենտրոնում՝ ձախից առաջինը Դրոն է, չորրորդը՝ Արամ Մանուկյանը. 1915թ.



Դրոն, Վրացյանը և Աշոտ Արծրունին

Դրոյի մեջ զարմանալի կերպով համադրվել են հանդուգն քաջությունը և իրատեսությունը: Ասվածի վկայություններն են, մի կողմից, միայն հայկական կամավորական գնդերի ուժերով դեպի Տարոն արշավելու նրա ծրագիրը 1915 թ., որը չիրագործվեց գնդերի հրամանատարների միջև անհամաձայնության, ինչպես նաև առհասարակ ռուսական զորքերի անակնկալ նահանջի պատճառով, մյուս կողմից՝ 1918-ին ռուսական զորամասերի հեռանալուց հետո ռազմաճակատի գիծը կրճատելու և խորացված պաշտպանություն կազմակերպելու առաջարկությունը (իսկ դա նշանակում էր հրաժարվել Արևմտյան Հայաստանի ազատագրված տարածքներից): Այդ օրերին այդպիսի առաջարկություն կհանդգներ անել միայն Դրոն, որովհետև ոչ ոք չէր կարող կասկածի տակ դնել նրա ո՛չ քաջությունը և ո՛չ էլ հայրենասիրությունը, բայց, միևնույն է, այդ առաջարկության նշանակությունը չընկալվեց ժամանակի պատասխանատուների կողմից, որի պատճառով շատ մեծ էր նաև Արևելյան Հայաստանը կորցնելու վտանգը, եթե չլինեին մայիսյան հաղթանակները և առհասարակ տարածաշրջանում չփոխվեր աշխարհաքաղաքական իրավիճակը:

Դրոյին բնորոշ էին ռոստոմյան տիպի գործնական մտածողությունը և տիրական ազդեցությունը զինակիցների շրջանում. «Դրոյի խոսքը օրենք էր բոլորիս համար»,- գրել է խմբապետ Մարտիրոս Աբրահամյանը (19):

Չնայած որ Դրոն նախորդ դարի Հայոց ազատամարտի և առհասարակ հայկական իրականության այն մեծերից է, որոնց գործունեությունը շատ է լուսաբանվել և արժևորվել, մեր կարծիքով, սակայն, նրա գործի իրական՝ համազգային չափանիշներով գնահատումը մեծ հաշվով դեռևս տեղի չի ունեցել: Դրոյի մեծության իրական գիտակցումը առայժմ մնում է կուսակցական-պատմագիտական նեղ շրջանակների սեփականությունը: Մի հանգամանք, որը, նրա առավելությունը լինելով, ցավոք, դարձել է նաև «խոցելի» կողմը (20): Ում համար արժեք են անկախ պետականությունը և ազատ հայրենիքը, նա կհասկանա, թե ովքեր են Դրոները, իսկ ով կրողն է «ամբոխային տրամաբանության», Դրոները նրա համար միայն բախտախնդիրներ են, ովքեր խոռվում են իր ճորտային անդորրը: Դրո երևույթը գնահատելու համար կարևոր է ընդունել առնվազն մի բան. Բագրատունիների թագավորության կործանումից ի վեր Հայաստանի առաջին հանրապետության կերտումը հայ ժողովրդի մեծագույն նվաճումն է, իսկ Դրոն, Արամ Մանուկյանի հետ միասին, այդ հանրապետության «գլխավոր կերտիչն» է: ■

Ծանոթագրություններ

1) Եթե մյուս անունները արդեն բավականաչափ հայտնի են ընթերցողին, ապա նույնը չի կարելի ասել Պարսկական սահմանադրական հեղափոխության հերոս և փաստական ղեկավար Եփրեմի (Եփրեմ Դավթի Դավթյան) մասին, որովհետև նրա մարտական կենսագրությունը հանկարծակի ընդհատվեց իր սրընթաց վերելքի ընթացքի մեջ՝ 1912 թ.: Եփրեմի մեծության վկայություններից մեկը Դ. Վարուժանի «Եփրեմ» բանաստեղծությունն է՝ գրված հերոսի նահատակության առիթով:
2) Տես Համլետ Գևորգյան, Դրո, Եր., 2014, էջ 892:
3) Եղիշե Չարենց, Խմբապետ Շավարշը // Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 2, Եր., 1986, էջ 199:
4) Տես Ս. Վրացեան, Մրրկածին Դրոն // նույնի՝ Կյանքի ուղիներով, հ. IV, Պէյրութ, 2007, էջ 177:
5) Տես Թ. Նազարբեկյանի անտիպ հուշերը, ՎԷՄ, 2019 թ., թիվ 1, էջ 287, ՎԷՄ, 2019 թ., թիվ 3, էջ 213:
6) Ս. Վրացեան, նշվ. աշխ., էջ 179:
7) Տես Եղիշե Չարենց, նշվ. աշխ., էջ 198:
8) Տես Ս. Վրացեան, նշվ. աշխ., էջ 175:
9) Տես Հրաչիկ Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, գ. Բ, Եր., 1996, էջ 574:
10) Տես Ս. Վրացեան, նշվ. աշխ., էջ 179,- Վարդգէս Աճարոնեան, Անդրանիկ. Մարդը և ռազմիկը, Եր., 2019, էջ 308-326, Համլետ Գևորգյան, նշվ. աշխ., էջ 462-469:
11) Տես Եղիշե Չարենց, նշվ. աշխ., էջ 199:
12) Տես Ս. Վրացեան, նշվ. աշխ., էջ 192:
13) Տես Եղիշե Չարենց, նշվ. աշխ., էջ 200:
14) Խմբապետ Շավարշի նախատիպը Շավարշ Բասենցյանն է, իսկ «կնքահայր» Սմբատի նախատիպը՝ խմբապետ Սմբատ Բարոյանը (Մախլուտո): Փետրվարյան ապստամբությանը հաջորդող քառասնօրյա քաղաքացիական կռիվների ժամանակ խմբապետ Շավարշը եղել է Սմբատ Բարոյանի (Վարիչ Սմբատ) օգնականը Ղամարլուի ռազմաճակատում:
15) Տես Վ. Նավասարդեան, Դրոյի գործը՝ բ. Աշխարհամարտի օրերուն // Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հ. Դ, 1995, էջ 339-347:
16) Վարուժան Ոսկանյան, Շշուկների մատյան, Եր., 2014, էջ 188:
17) Տես Ս. Վրացեան, նշվ. աշխ., էջ 212:
18) Վարուժան Ոսկանյան, նշվ. աշխ., էջ 206:
19) Տես Մարտիրոս Աբրահամյան (Բաշգառնեցի Մարտիրոս), Իմ հիշելի հուշերը, Եր., 2016 թ., էջ 244:
20) Այդ առումով Դրոն նախանձելի վիճակում է, եթե նրան համեմատում ենք, օր., Քրիստափոր Միքայելյանի, Ս. Ջավարյանի և Ռոստոմի հետ, որոնց գործը ծանոթ չէ ոչ միայն հայության լայն շրջանակներին, այլև՝ մտավորականությանը: Անուններ, որոնք հայոց պատմության նոր շրջափուլի իրական դարբիններն են, և առանց որոնց ո՛չ Անդրանիկը կլիներ Անդրանիկ, ո՛չ Արամը՝ Արամ և ո՛չ էլ Դրոն՝ Դրո:

Վտանգուած անկախութիւնը

Սեդօ Պոյաճեան

Մայիս 28ի անկախութեան առիթով պէտք է կրկին մտաբերել Հայաստանի Հանրապետութեան լուսաւորութեան նախարար Նիկոլ Աղբալեանի մարգարէացումը, երբ Հայաստանը տակաւին կը մնար գերեվարուած բանտարկեալը պոլշևիկեան բռնատիրութեան. «Անկախութեան գաղափարը հայ իտէալն է, երազը, անոր ձգտումը, և հայ ազգն է, որ իր ճիգերով և մեծ տառապանքներով ստեղծեց ազատ Հայաստանը, և դարձեալ ան է, որ պիտի ստեղծէ ու իրագործէ ազատ հայրենիքը»: («Յուսաբեր», 2 և 4 Յունիս, 1925)

Պոլշևիզմը տապալեցաւ: Հայ ազգը վերստին ստեղծեց և իրագործեց իր անկախութիւնը: Բայց անկախութիւնը վտանգուած է այսօր: Վտանգին արմատները ճիւղաւորում ստացան անկախութեան զարգացման ու պահպանման և պետութեան կերտման ու ձևաւորման այն տեսական ճանապարհներէն, որոնք գիտական ընտրանքներն էին վերանկախացած Հայաստանի ղեկին տիրացած իշխանաւորներուն: Ճանապարհային այս տեսական ընտրանքներուն հետևեցան ու կը շարունակեն հետևիլ հայրենիքը ղեկավարող յաջորդական իշխող դասակարգերը: Իրենց այդ գործընթացով անոնք աւելի ու աւելի կը վտանգեն անկախութիւնը:

Վերանկախացած հայրենիքն ունէր տեսական երեք ճանապարհային ընտրութիւններ:

Առաջինը Մայիս 28ի ճանապարհն էր, որ արդէն դարձած էր ժողովուրդին հարազատ ընտրութիւնը այն օրէն, երբ ան դիմեց Արցախի ազատագրութեան պայքարին: Դժուարին էր այս ճանապարհը: Դիւր պիտի չգար տարածաշրջանով շահագրգռուած ուժերուն: Բայց ան հայութեան պատմական առաքելութեան ուղին էր: Հայրենիքի անկախութիւնը պահպանող և ընդարձակող կողմնացոյցն էր: Ժողովուրդը հզօրացնող և պետութիւնը ամրակայող մայրուղին էր:

Երկրորդը արևմտեան ազատականութեան ճանապարհն էր, որ լոկ ձևականութիւն կը բերէր հայրենիքի անկախութեան՝ առանց զայն լիցքաւորելու ազգային առաջնահերթութիւններով ու արժէքներով: Դիւրին էր այս ճանապարհը այն ղեկավարութեան համար, որ արդէն շատոնց խորթացած էր Մայիս 28ի տեսական ճանապարհէն:

Երրորդը պոլշևիկեան տիպի լուսաւորեալ մենատիրութեան ճանապարհն էր: Այս ճանապարհը ևս դիւրին էր, որովհետև անոր բրտացած ձևը արդէն իսկ եօթանասուն տարի կը կիրարկուէր Հայաստանի տարածքին:

Մաքրագործելէ ետք «Ղարաբաղ» կոմիտէի՝ Մայիս 28ի ճանապարհին կառչած ղեկավարները՝ պոլշևիզմով մկրտուած ու ձևաւորուած անհատներ տիրացան վերանկախացման շարժումի առաջնորդութեան: Անոնք ճշդեցին և ընտրեցին

<<Ղարաբաղ>> կոմիտէի կազմը

տեսական ճանապարհը հայրենիքի անկախութեան ուղղութեան և անկախացած պետութեան կառուցման:

Հայրենիքի այս նոր ղեկավարներ ընտրեցին Խորհրդային Միութեան փլուզումով մոդա դարձած արևմտեան ազատականութեան տեսական ճանապարհը: Անոնք գիտէին այս ճանապարհով տրամադրուող անհատական հակակշիռի պարտադրութեան, նիւթական յղփացման և դրամական ու ազգային հարստութեանց թալանի դիւրութիւններն ու առաւելութիւնները: Գիտէին, որովհետև կեղեքման ու հակակշիռի նոյն տեսութեան արդէն անոնք վարժ էին խորհրդային օրերէն: Փակագիծ բանալով՝ հոս պէտք է նշել, որ Խորհրդային Միութեան փլուզումին հիմնական պատճառներէն մէկը ոչ թէ մարքսեան գաղափարախօսութեան սնանկութիւնն էր, այլ համայնավար փոքր թէ մեծ իշխանաւորներու գաղափարական խորթացումը՝ ի շահ իրենց սեփական հարստացման ու հանգստաւէտութեան:

Այս խորթացումը համատարած էր ամբողջ Միութեան տարածքին: Հայաստան անմասն չէր այս կացութենէն:

Հետևաբար Հայաստանի նոր իշխանաւորներուն համար այդ կացութիւնը շարունակելու յարմարագոյն միջոցը նկատուեցաւ ազատականութեան տեսութիւնը: Իշխանութեան ընձեռած առաւելութիւնները շահագործող մարդը մարքսիզմի գաղափարախօսութեան անհաւատարիմ ըլլալու հարց չունէր: Նոյն մարդը վերանկախացած Հայաստանի մէջ պիտի շարունակէր իր շահագործումը՝ առանց դոյզն իսկ խայթ զգալու ազատականութեան գաղափարախօսութեան հանդէպ իր անհաւատարմութեան համար:

Այսպիսի նպատակադրութեամբ բնական էր, որ ազատականութեան ճանապարհը ընտրած նոր

իշխանաւորները հեշտութեամբ անոր միախառնեցին երրորդ ուղին՝ պոլշևիկեան տիպի լուսաւորեալ մենատիրութեան ճանապարհը:

Այս զուգորդումը բնական անհրաժեշտութիւն էր, որովհետև ազատականութեան դրութեան մէջ շահագործումի աշխատանքը կարիքը ունի նոյնքան մենատիրութեան, որքան որ անոր կարիքը կար համայնավարական դրութեան տակ:

Իսկ ժողովո՛ւրդը: Ժողովրդավարութեան հիմնական յատկութիւնը այն է, որ ժողովուրդը կը փոխէ իր ղեկավարութիւնը՝ ըստ իր կամքին ու հայեցողութեան: Մենատիրական ղեկավարման հիմնական յատկութիւնը այն է, որ մենատէր իշխանաւորը ինք կը փոխէ ժողովուրդն իսկ՝ ըստ իր կամքին ու քմահաճոյքին:

Մեր ժողովուրդը բառին ամբողջական իմաստով ժողովո՛ւրդ էր: Մեր մտաւորականութիւնը ստեղծագործ էր: Մեր գիտնականները գիւտարարներ էին: Ասիկա այն ժողովուրդն էր, որ տասնամեակներ շարունակ դիմադրեց պոլշևիկեան ապազգայնացման ջանքերուն: Ասիկա այն ժողովուրդն էր, որ Հայոց ցեղասպանութեան յիսնամեակին փողոց իջաւ Միացեալ Հայաստանի անունով՝ պահանջելով «մեր հողերը, մեր հողերը»: Ասիկա այն ժողովուրդն էր, որ մեր հանրապետութեան յիսնամեակին պարտադրեց յիշել մեր անկախ պետութեան ստեղծումը՝ կառուցելով Սարդարապատի ճակատամարտի յաղթանակը յաւերժացնող յուշահամալիրը: Ասիկա այն ժողովուրդն էր, որ ապաւէնը հանդիսացաւ Արցախեան ազատագրական պայքարին: Վերջապէս, ասիկա այն ժողովուրդն էր, որ մեր հայրենիքի վերանկախացումն ու պետութեան վերակերտումը կը լուսագծէր Մայիս 28ի ճանապարհով:

Մենատէր իշխանաւորներուն կիզակէտին էր այս ժողովուրդին գաղափարական ու ազգային հաւատամքներուն քանդումը: Անոնք՝ իշխանաւորները, գործընկեր դարձան անցեալէն եկող մենաշնորհային նոր իշխաններուն:

Գործընկերէն անդին՝ նոր իշխաններ դարձան իշխանաւոր և իշխանաւորներ՝ նոր մենաշնորհեալներ: Միասնաբար անոնք բթացուցին ժողովուրդը: Վհատեցուցին ժողովուրդը իր ապագային հանդէպ: Տարածեցին թալանի և կաշառքի մշակոյթը: Ժողովուրդէն շատեր սկսան եւ մտածել, եւ գործել այն տրամադրութեամբ, որ «եթէ իշխանաւորը կ՚ընէ, ես ինչո՞ւ պիտի չընեմ»:

Այսօր այս անկախութիւնը վերածուած է ձևականութեան, որովհետև իրենց ընտրած տեսական ճանապարհով մեր անկախութեան գաղափարականացումը չկայացաւ ու պիտի չկայանայ:

Բռնատիրութենէն կամ գաղութատիրութենէն ազատագրուած ու անկախութիւն նուաճած ժողովուրդին առաջին և առաջնահերթ պարտականութիւնն է ազգային զարգացումը բոլոր մակարդակներու վրայ: Այս անկախութիւնը ազգային ու հաւաքական ազատութեան մասին է: Մեր ժողովուրդի՝ իբրև ազգութիւն ինքնահաստատման ազատութեան մասին է՝ որոշելու իր սեփական ուղղութիւնը ազգային զարգացումի համար:

Իշխանաւորներու ընտրած ճանապարհով այսպիսի անկախութեան որակաւորում տեղի չունեցաւ: Ընդհակառակը, պատահեցաւ անկախութեան ֆեթիշացումը՝ հարուածելով մեր պետական համակարգը, ազգային արժէքներն ու հաստատութիւնները, տնտեսութիւնը, ընկերային կեանքը, մշակութային, կրթական և գիտական բնագաւառները...

Աւելին՝ գիտակցաբար ու ծրագրեալ կերպով իշխանաւորները փորձեցին ջլատել մեր հայրենիքի գոյատևելիութեան հիմնական կոռանները՝ ազատագրուած և ազատագրելի հայրենի հողատարածքները: Մեր ներկայ հայրենիքը փշրանքն է իրաւազրկումի և անարդարութեան: Մեր անկախութեան կենսատուութեան աղբիւրն է վերացումը այս իրաւազրկումին ու անարդարութեան, որպէսզի փշրանքը վերածուի ամբողջական հայրենիքի, և անկախութիւնը կանգուն մնայ տոկուն հիմերու վրայ:

Մայիս 28ի անկախութեան գաղափարական ճանապարհը մերժեցին այս իշխանաւորները: Անոր դէմ պայքարեցան ու կը շարունակեն պայքարիլ ոգի ի բռին: Անոնք կը շարունակեն մերժել ու պիտի մերժեն Մայիս 28ի ճանապարհով իրագործելի մեր ազգային զարգացումն ու հաւաքական իրաւազրկումի անէացումը:

Այս անկախութիւնը վտանգուած է: Անոնք է, որ կը վտանգեն: Այնքան ատեն, որ այս իշխանաւորներու տեսակը կը յամենայ հայրենի ղեկին վրայ, վտանգուած պիտի մնայ մեր անկախութիւնը:

Ժողովուրդին պարտականութիւնն է մեր անկախութեան պահպանումը ապահովելու համար երկիրը վերադարձնել իր հարազատ հունին՝ Մայիս 28ի գծած ուղիին: Այլապէս այս անկախութիւնը վտանգուած է՝ իր հետ վտանգելով հայրենիքն ու ժողովուրդը: ■

Ինչո՞ւ Հայաստանում չի ձևավորվում քաղաքական էլիտա

Տիգրան Զանդոյան. ՀՅԴ Նիկոլ Աղբալյան ուսանողական միության անդամ, քաղաքագետ

20-րդ դարը նշանավորվեց մի շարք կարևոր իրադարձություններով, որոնք առանցքային փոփոխություններ առաջ բերեցին թե՛ տարածաշրջանում և թե՛ համաշխարհային քաղաքական դաշտում ընդհանրապես: Խորհրդային Միության փլուզումը որոշ գնահատումներով աշխարհաքաղաքական աղետ էր տարածաշրջանային քաղաքականության առումով, բայց և հնարավորությունների աղբյուր էր՝ ընձեռված նախկին միութենական, սակայն այլևս նորանկախ երկրներին, որոնց մեծ մասը պետականության փորձ չուներ նախքան ԽՍՀՄ կազմավորումը: Ազգային-արմատական գաղափարախոսությունները հատկանշական էին այս ժամանակահատվածում անկախական նկրտումներ ունեցող հոսանքների համար, որոնց առաջնորդներն էլ կարճ ժամանակ անց դառնալու էին իրենց երկրներում նոր ձևավորվող քաղաքական էլիտաների (ընտրախավերի) կորիզը: Այդպիսիք էին, օրինակ, Զվիադ Գամսախուրդիան (Վրաստանում), Աբուլֆազ Էլչիբեյը (Ադրբեջանում) և այլն: Հայաստանում ազգային շարժումը ձևավորվեց Արցախյան հիմնախնդրի շուրջ, և 1988 թվականի մայիսին ստեղծված «Ղարաբաղ» կոմիտեն էլ դարձավ առանցքային այն կազմակերպությունը, որի շուրջ համախմբվեց, որում ձևավորվեց և որից էլ դուրս եկավ Հայաստանի Հանրապետության քաղաքական ընտրախավի անդրանիկ «օրինակը»: Հենց նույն կազմակերպության անդամ էր ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը: Այնուամենայնիվ, մեր պետականության վերջին երեք տասնամյակների պատմությունը ցույց է տալիս, որ մեր քաղաքական իրականության ծիրում այդպես էլ չի հաջողվել ստեղծել էլիտիստական արժեքանության վրա հիմնված քաղաքական համակարգ, ինչն էլ հենց պիտի թույլ տար խուսափել տարատեսակ քաղաքական ճգնաժամերից և բարեհաջող կերպով հաղթահարել հետխորհրդային համակարգերին հատուկ անցումային շրջանը՝ մուտք գործելով ժողովրդավարական համախմբման փուլ: Որո՞նք են, ի վերջո, այս տևական ու ոչ նպաստավոր իրադրության պատճառները: Դրանք պարունակում են թե՛ սոցիալ-տնտեսական և թե՛ քաղաքական բաղադրիչ:

Խորհրդային Միության փլուզմանը հաջորդեց տնտեսական ճգնաժամ, որի նախադրյալները ստեղծվել էին դեռևս ԽՍՀՄ տարիներին: Տնտեսապես սերտորեն փոխկապակցված երկրների անկախացումով միանգամից կտրվեցին այդ երկրների միջև առկա տնտեսական կապերը, ինչը հանգեցրեց տնտեսական հզոր ենթակառուցվածքների քայքայման, առաջացրեց արդյունաբերական ճգնաժամ, տնտեսության որոշ ճյուղերի ամբողջական կաթվածահարում, անգամ կործանում՝ առաջ բերելով գործազրկության ահռելի ալիք: Գործազրկությունը

ներառեց ոչ միայն, այսպես կոչված, «կապույտ արյուն ունեցողներին» և «սպիտակ օձիքավորներին», այլ նաև գիտության, արվեստի և հասարակական կյանքի այլ ոլորտներում նշանակալի դերակատարություն ունեցող մտավորականությանը, ովքեր ինքնին իրենց ոլորտներում ընտրախավի ներկայացուցիչներ էին: Այլևս գոյություն չունեին նախկին ֆինանսական և այլ միջոցները, որոնցով ապահովվում էր նշված ոլորտների գոյությունը, գործունեությունը և զարգացումը: Հետևանքը եղավ այն, որ ստեղծված ծանր տնտեսական իրադրությունը հանգեցրեց մի շարք բացասական սոցիալական զարգացումների, որոնցից ամենավնասաբերը մեծ թափ հավաքող արտագաղթն էր, հիմնականում՝ դեպի Արևմուտք: Սոցիոլոգիական եզրութաբանության մեջ ընդունված «ուղեղների արտահոսք» ասվածը, այսպիսով, կարելի է որակել որպես ոչ այլ ինչ, քան «ընտրախավերի արտահոսք»: Ընտրախավեր, որոնցով համալրվեցին և իրենց գիտական հզորությունն ու ներուժը բազմապատկեցին հյուրընկալող երկրները (հիմնականում՝ արևմտյան): Սա հանգեցրեց հասարակության էլիտարության տոկոսի շեշտակի անկման, ինչպես նաև այդ էլիտարության վերարտադրողականության դանդաղեցման: Գիտական ենթակառուցվածքների թուլացումը, պետական հատկացումների նվազեցումը (հիմնականում՝ կիրառական գիտությունների ոլորտում) պատճառ դարձան գիտության մի շարք ճյուղերի աստիճանական անկման, և ոլորտային առաջատար մասնագետները դիմեցին հարկադիր արտագաղթի՝ պայմանավորված թե՛ սոցիալական գործոններով, թե՛ մասնագիտական աճի թույլ հեռանկարով, ինչու չէ, նաև անհնարինությամբ:

Համաձայն էլիտիստական տեսության ռահվիրա, հույն մեծ փիլիսոփա Պլատոնի՝ իդեալական պետության ղեկավարումը պետք է ստանձնեն «ոսկե արյան» տեր փիլիսոփաները, ինչն արտածելով մերօրյա իրականության վրա՝ կտեսնենք, որ խոսքը բարձր արհեստավարժությամբ օժտված, հանրային բարիք ստեղծող, իրենց ոլորտներում նշանակալի

արդյունքներ գրանցած քաղաքականության, գիտության, արվեստի և հասարակական այլ ոլորտներ ներկայացնող անհատների մասին է: Հենց այս հատկանիշները պետք է դրվեն ԸՆՏՐԱԽԱՎԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ հիմքում, ինչը, ըստ իտալացի սոցիոլոգ Գ. Մոսկայի, տեղի է ունենում երկու ձևով՝ փակ և բաց:

Ընտրախավի փակ կամ գիլդային հավաքագրմանը բնորոշ են վերջինիս ձևավորման սահմանափակ սոցիալական հիմքը, գերիշխող կամ վերջինիս մոտ կանգնած սոցիալական խմբերից կատարվող ընտրասերումը, ընտրախավը համալրող անձանց խիստ սահմանափակ շրջանակը և այլն: Ընտրախավի համալրման բաց կամ անտրեպրենյորական ձևին բնորոշ է հասարակության տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչների կողմից ընտրախավի համալրմանը մասնակցելու հնարավորությունը, իսկ ընտրախավի համալրման նախապայմաններից են արհեստավարժությունն ու բարոյական բարձր որակների առկայությունը: Ընդհանրապես որևէ հասարակության զարգացման հետագա ուղին ուրվագծելու համար անչափ կարևոր է, թե ինչ ճանապարհներով է կատարվում տվյալ հանրույթի ընտրախավի հավաքագրումը: Երեսնամյա մեր պետականության պայմաններում մենք, ցավոք, ականատես ենք եղել ընտրախավի հավաքագրման առաջին տարբերակին միայն: Պետական անկախության վերականգնման առաջին տարիներին, երբ պետական ինստիտուտների ձևավորումը սկզբնական փուլում էր, «Ղարաբաղ» կոմիտեի շուրջ ձևավորված «Հայոց համազգային շարժում» քաղաքական ուժը, որը հետագայում վերածվեց զանգվածային կուսակցության, իշխանության գալով, դարձավ այն հիմնական ատաղձը, որի հիման վրա ձևավորվեց ժամանակի քաղաքական ընտրախավը, և սա դարձավ վատ ավանդույթ հայ քաղաքական իրականության մեջ՝ «մոդել» ծառայելով հետագա տասնամյակների ընթացքում: 2018 թվականի ժողովրդական ընդվզման հետևանքով կարծես թե ստեղծվել էր բացառիկ հնարավորություն՝ վերջ տալու այս արատավոր երևույթին, երբ «Սիրո և հանդուրժողականության» լոզունգներով զինված՝ քաղաքական ընտրախավ մուտք գործեց մի զանգված, որը նախկինում այնտեղ հայտնվելու որևէ լուրջ հայտ չէր ներկայացրել ոչ իր հասարակական-քաղաքական արդյունավետ ակտիվությամբ, ոչ էլ հանրային բարիքի ստեղծման մեջ ունեցած չափաբաժնով, և քաղաքական ընտրախավի համալրման միակ նախապայմանը, փաստորեն, ժողովրդական շարժման առաջնորդներին ուղեկից և նեցուկ լինելն էր:

Ժողովրդավարական համակարգերում քաղաքական ընտրախավի համալրման գործընթացում ակտիվորեն ներգրավվում են երիտասարդ քաղաքական գործիչները, ինչը հետապնդում է մի շարք կարևոր նպատակներ, որոնցից են՝

- քաղաքական սերնդափոխության ապահովումը,
- քաղաքական համակարգ «նոր արյան ներարկումը» նոր գաղափարների, նոր տեսլականի, նոր ծրագրերի տեսքով,
- քաղաքական իսթեբլիշմենթին հակադրվող և քաղաքական համակարգը բալանսավորող ուժի ապահովումը,
- քաղաքական գերոնտոկրատիայի (ծերունապետության) կանխումը,
- և այլն:

Հայաստանի Հանրապետության պարագայում երիտասարդների ներգրավվածությունը քաղաքական գործընթացներում տարբեր դրսևորումներ ունի, որտեղ, ցավոք, գերակշռում են մարգինալիզմը և «ճոճվող մարդու» քաղաքական տիպը, որոնք դրսևորվում են քաղաքական իրադրության փոփոխություններով պայմանավորված մեկ քաղաքական շրջանակից մյուսը անցում կատարելով: Այս երևույթի հիմնական պատճառները շրջանցելով՝ կցանկանայինք ընդգծել երևույթի գաղափարական-սկզբունքային բաղադրիչի կարևորությունը, ինչպես նաև քաղաքական մշակույթի զարգացման մակարդակը, քանի որ վերջիններիս բացակայությամբ կամ թույլ զարգացածությամբ է պայմանավորված երիտասարդության ոչ կայուն ներգրավվածությունը քաղաքական գործընթացներում, հետևաբար գաղափարական ու կայուն հայ երիտասարդն է, որ իր մասնակցությամբ պետք է թե՛ ձևավորի ու կայացնի հասարակության քաղաքական մշակույթը և թե՛ քաղաքական ընտրախավին մաս կազմելով զարգացնի ու կայունացնի ժողովրդավարական արժեքները: Պետականության զարգացման կարևորությունը որպես առաջնահերթություն որդեգրելու դեպքում իշխանության ղեկի մոտ գտնվող քաղաքական ուժը պետք է քաղաքական գործընթացներում ներգրավվելու իրական հնարավորություն ստեղծի հնարավորինս բազմազան քաղաքական գաղափարախոսությունների ու ուղղությունների հետևորդ երիտասարդության համար՝ խուսափելով երիտքաղաքական դաշտի մենաշնորհայնացումից: Այսպիսի հանրային քաղաքականությունն անխուսափելիորեն հանգեցնելու է երիտասարդության ներգրավմանը երկրի քաղաքական կյանքին, և հետևաբար ստեղծվելու է քաղաքական ընտրախավի բաց հավաքագրման իրական հնարավորություն:

Համաճարակէն վերջ. յեղափոխութիւն, թէ՞ նորաստեղծութիւն

Սիւզան Խարտալեան

Վախը պատեր է մոլորակը:

Խուճապի մատնուած քաղաքացիներ զբաղուած են թուղթ, սնունդ և, այո՛, զէնք ապահովելու գործով: Կառավարութիւններու արձագանքները տարբեր և հակասական են, երբեմն անհասկնալի և կարծես ապարդիւն:

Սովորական կեանքը դադրած է: Տնտեսութիւնները փլուզումի մէջ են: Ներդրողները չեն կրնար գտնել ապահով ակտիվներ: Ոմանք հսկայական շահոյթ կ'ապահովեն և հարստութիւն կը դիզեն:

Քաղաքական բևեռացումները արագօրէն կը սրուին: Կարծես ամէն ինչ փուլ կուգայ ինքն իր վրայ:

Բոլորին մօտ կայ կայունութեան հրատապ ցանկութիւն, բան մը, որ այս պահուն անհնար է խոստանալ կամ ունենալ: Այս տողերը կը նկարագրեն մեր կեանքը այսօր Եւրոպայի, Ամերիկայի, հեռաւոր Ասիոյ կամ մեր Հայաստանի մէջ: Մենք կը գտնուինք աննախադէպ փոթորիկի մը սրտին մէջ՝ ենթակայ քորոնավիրուսի համավարակի քմահաճոյքին:

Մէկ կարևոր հարցադրում կը հնչէ բազմաթիւ կողմերէ. արդեօք մենք նոր յեղափոխութեան մը սկիզբը կը գտնուինք: Ես չեմ ըսողը, սակայն, որոշ մասնագէտներու կարծիքով, նոյն բառերով կարելի է նկարագրել նաև 1789 և 1790 թուականներու Ֆրանսական յեղափոխութեան ժամանակները:

Բայց մի՞թէ մենք կ'ուզենք նոր յեղափոխութիւն. վստահ չեմ: Սակայն այն, որ մենք կը գտնուինք աննախատեսելի փոխակերպումի մը եզրին, ակնյայտ է բոլորին:

Վերլուծական շրջանակներ կ'ընեն տարբեր համեմատութիւններ, կը խօսին համաշխարհային նոր «դեպրեսիայի» մը սկիզբին մասին, համաճարակը կը նմանեցնեն Երկրորդ աշխարհամարտի մակարդակի մարտահրաւէրի, կը խօսուի ազգային ճգնաժամի մասին: Շատերու համար քորոնայի ճգնաժամը շրջադարձային պահ մըն է, որ կը հնչեցնէ նէօլիպերալիզմի մահը, մինչ ձախակողմեան քաղաքական շրջանակներ կ'ոգևորուին ուժեղ պետութեան վերականգնումով և հնարաւոր կը տեսնեն աշխատաւոր դասակարգի դերի լայն վերա-իմաստաւորում:

Բայց քիչերն են, որ մեր ներկայ պահը կ'անուանեն յեղափոխութիւն. գիտեմ, որ մենք բոլորս հայկական շրջագիծի (համաթեքսթ) մէջ յոգներ ենք «յեղափոխութիւն» բառէն:

Ուրիշներ կը հաւատան ճիշդ հակառակին, որ քորոնավիրուսային համաճարակը չքացուց յեղափոխութեան նուազագոյն հնարաւորութիւնն իսկ: Կ'ըսեն, որ ճգնաժամը ստեղծեց իրավիճակ մը, ուր մարդիկ կը պահանջեն բնականոն կեանքի վերադարձ և կը խորշին խորքային, կառուցուածքային փոփոխութիւններէն:

Սակայն կը կարծեմ, որ նման պնդումները սխալ են: Կայունութեան ու բնականոն կեանքի վերադարձի հրատապ ցանկութիւն տագնապէն դուրս գալու համար, ինչ խօսք, հրամայական է: Եւ



Սիւզան Խարտալեան

կայունութեան վերադարձի պահանջը բնորոշ է բոլոր յեղափոխութիւններուն, սակայն այն անիրականանալի է: Օրինակ՝ 1789ի Ֆրանսական յեղափոխութենէն ետք տեղի ունեցան բազմաթիւ իրադարձութիւններ (բոլորն ալ՝ աննախատեսելի), և Ֆրանսան այլևս երբեք չվերադարձաւ նախայեղափոխական կեանքին:

Թերևս այս պահուն մեր շուրջը յեղափոխութիւն տեղի չ'ունենար, բայց մենք, անկասկած, կ'ապրինք յեղափոխական ժամանակներու մէջ: Եթէ մենք այս օրերը չենք ընկալեր իբրև այդպիսին, պատճառն այն է, որ այս պահուն մետիայի նորութիւններու լուսաբանումը և մեր ամէնօրեայ խօսակցութիւնները մարդակեդրոն չեն: Տեսիլք ունեցող առաջնորդներ չկան կամ բացակայ են, զայրացած ամբոխի փոխարէն լուրերու առանցքը վարակն է, շուկաներն են, որուն կ'աւելնան համատարած անկայունութիւնը, տնտեսական անչափելի կորուստները և ինծի համար շատ կարևոր՝ կլիմայի փոփոխութիւնը: Այս բոլորը միասնաբար կը ձևաւորեն այս պահու մեր պատմութիւնը: Եւ իբրև ասոր արդիւնք՝ այն տպաւորութիւնը ունինք, որ պատմութիւնը կարծես մեր հակակշռէն դուրս եկած է, մեր ձեռքերէն դուրս եկած է:

Երբ յեղափոխութիւններու մասին կը խօսինք ու կը մտածենք, մենք միշտ կը պատկերացնենք ծրագրուած գործառոյթ՝ իրականացուած յստակ մարդոց (գիտակից յեղափոխականներու) կողմէ, բայց իրականութիւնը հազուադէպօրէն այսպիսին է: Երբ մօտէն կը նայինք, կը տեսնենք, որ յեղափոխութիւնները պատմութեան այն ժամանակահատուածներն են, երբ տարբեր օրակարգեր ունեցող ընկերային-հասարակական դերակատարներ՝ ուսանողներ, գիւղացիներ, քաղաքաբնակներ, օրէնսդիրներ, զէնք վերցնողներ, կը միաձուլուին, և այդ ձուլումէն կը ծնուին կայուն համաստեղութիւններ: Ֆրանսական յեղափոխութիւնը կամ այլ յեղափոխութիւններ մեզի կու տան մէկ յստակ դաս, որ մարդն է, մարդիկ են, որ կը ստեղծեն պատմութիւն: Այնպես որ ես կը հաւատամ, որ այսօրուան մեր գործողութիւններն ու ընտրութիւնները պիտի ձևաւորեն ոչ միայն մեր հաւաքական ապագան, այլ նաև այն, թէ ինչպէս պիտի յիշենք անցեալը:

Ֆրանսական յեղափոխութեան և կամ այլ յեղափոխութիւններու առաջին ամիսներուն և մեր ներկայ իրավիճակին միջև կարելի է զուգահեռներ գտնել: Սակայն կրկնութեան մասին խօսք չի կրնար ըլլալ:

Համեմատութենէն կարելի է եզրակացնել հետևեալը. ամէն ինչ ենթակայ է փոփոխութեան, ամէն ինչ կարելի է կորսնցնել և ամէն ինչ կարելի է շահիլ: Կայ միայն մէկ ընտրութիւն՝ վերաձևակերպել անցեալն ու ապագան և վերափոխուիլ: Կեանքն այլևս բնականին չի վերադառնար, քանի որ անցեալ տասնամեակներու նորմերը պարզապէս այլևս հնարաւոր չէ կիրառել:

«Նոր նորմալը» գործազրկութիւնն է, նոր պահանջներն են: «Նոր նորմալը» միջին դասի քաղաքացիներու յարաբերական բարօրութեան վերացումն է, կենսաթոշակային խնայողութիւններու չքացումն է, երեխաներու ապագայի կորուստն է: Նոյնիսկ մինչ համաճարակը դասակարգային հակասութիւնները, խտրականութիւնները և մարդու զարգացման հնարաւորութիւններու աստիճանական չքացումը շարունակաբար աճ կ'արձանագրէին: Վստահութիւնը պետական կամ միջազգային հաստատութիւններու նկատմամբ ակնյայտորէն կը նուազէր: Մարդիկ չեն գիտեր որո՞ւ հաւատալ:

Քորոնա համավարակը ոչ միայն կը ներգործէ անհատ մարդկանց վրայ, այլ նաև ուժգնօրէն կը հարուածէ ազգային առասպելները: Որոշ առաքինութիւններ կը վերափոխուին, կը դառնան անճանաչելի, գարշելի սուտեր յանկարծ կը բացայայտեն ցարդ անյայտ երևոյթներ: Իսկ մենք ճգնաժամին առջև կանգնած ենք ձեռնթափ, ամբողջութեամբ յանձնուած վարակի քմահաճոյքին:

Մենք բոլորս, արևմտեան թէ արևելեան կողմն աշխարհի, արթնցանք առտու մը և հասկցանք, որ այնքան ալ հզօր չենք: Վարակը կը բացայայտէ մեր հասարակութիւններու «պլըֆները». համաճարակները միշտ կը բացայայտեն անհաճոյ ճշմարտութիւններ: Համաճարակին հակազդելու մեքանիզմները, համաճարակին համարժէք ուշացած արձագանքը, փաստօրէն, նոյնն են Իտալիոյ, Ֆրանսայի, Ամերիկայի կամ Չինաստանի մէջ: Վարակը բացայայտեց մշակոյթ մը, ուր քծնող պալատականներ պատրաստ են թաքցնելու դառն և մահաբեր իրականութիւնը այնքան ատեն, որ կայսրը չի ցանկար լսել զայն:

Երբ այս փորձութիւնը ևս աւարտի, շատ մը ժողովուրդներ իրենք իրենց համար պիտի բացայայտեն, որ իրենք զիրենք չեն ճանչնար: Ոմանց համար այս կրնայ յանգիլ դառն, բայց խորաթափանց ինքնաճանաչման, ուրիշներուն համար՝ գուցէ հաճելի ու դրական: Համավարակը ոչ միայն կ'ազդէ մարդկանց վրայ, այլ նաև կը տրորէ ազգային առասպելները: Որոշ առաքինութիւններ յանկարծ գլխիվայր կը դառնան ու ցոյց կու տան իրենց տգեղ հետոյքը: Եւ հակառակը՝ մեղադրելի երևոյթներ կը բանան նոր հնարաւորութիւններ:

Ֆրանսան, որ աշխարհին տուաւ մարդու իրաւունքներու գաղափարը, այսօր բոլորէն առաջ անցաւ այդ իրաւունքները սահմանափակելու հարցով. պարետային ժամ, փողոցներուն մէջ բանակայիններ, օդին մէջ յամեցող սպառնալիքներ: Դժբախտաբար, այդ սահմանափակումներն անհրաժեշտ կը թուին, քանի որ մեծ թիւով ֆրանսացիներ կ'անտեսեն կառավարութեան թելադրանքները: Կ'ըսեն, որ բարկացած երիտասարդներ ըմբոստօրէն գարեջուր կը բաժնեն՝ «քորոնա, քորոնա» գոռալով: Կարծես թէ, ի վերջոյ, վարակն աւելի նախընտրելի է, քան յիմար պետութիւնը:

Այս օրերուն վերստին կարդացի Էդմոնդ Պըրքի (Edmund Burke)՝ 1790 թուականին լոյս տեսած «Մտածումներ Ֆրանսական յեղափոխութեան մասին» (Reflections on the Revolution in France) գիրքը, որ ժամանակակից պահպանողականութեան առաջին դրսևորումը կը համարուի: Իհարկէ, հեղինակին շատ մը թեզեր ժամանակավրէպ են, բայց այնտեղ կայ կէտ մը, որը ժամանակին ես կը մերժէի իբրև ամենահինցած միտքը, և որը, սակայն, այս օրերուն լոյսին տակ կը ստանայ բացատրական նոր արժէք:

Պըրք կը քննադատէ երկիր կառավարելու միապետական ձևը: Ան նոյնիսկ համամիտ է միապետը վար առնելու գաղափարին: Բայց Փարիզի մէջ Ֆրանսական յեղափոխութեան օրերուն մարդիկ չէին բաւարարուեր միայն միապետութիւնն ու եկեղեցին ճզմելով: Ամենք կը խարխլէին ինքնին այն միտքը, որ ընդհանրապէս կարելի է ունենալ օրինական իշխանութիւն: Պըրքի աչքերով՝ այս ձևով կ'ոչնչանար հասարակութեան վստահութեան հիմքը: Ֆրանսացիները անվստահութիւն կը ցուցաբերեն բոլոր կառավարութիւններու նկատմամբ, ինչ որ իշխանները կը մղէ բռնակալութեան, և այսպէս իշխանութիւնը կը կորսնցնէ իր աւանդական բարձրութիւնն ու հեղինակութիւնը:

Այն հանգոյցին, որ այսօր կանգնած ենք, պէտք է ընդօրինակենք ոչ թէ Ֆրանսական յեղափոխութեան արդիւնքը, այլ յեղափոխականներու ներուժը, ստեղծագործական ոգին և լաւատեսութիւնը:

Այս օրերը խորապէս անհանգստացնող, միաժամանակ ստեղծագործ ոգիի ժամանակներ են: Մինչ կարգ մը ամերիկացիներ կ'ապաստանին իրենց տուներէն ներս՝ փորձելով պաշտպանուիլ նորահաս սպառնալիքներէ, իսկ ուրիշներ իրենց կեանքերը կը վտանգեն ատոր դէմ պայքարելու համար, մենք բոլորս կ'ողբանք սովորականին, ընթացիկին կորուստը, բայց և միաժամանակ գիտակցաբար հիմքը կը դնենք նոր կարելիութիւններու:

Մարդ արարածը պատասխանատու է մեր աշխարհի եւ սխալներուն, եւ ճիշդերուն համար: Յետադարձ ակնարկով յեղափոխութիւնը կրնայ թուիլ միահրադարձութիւն, բայց ապրուած փորձառութիւնը այդպիսին չէ: Յեղափոխութիւնը ժամանակի երկարաձգուած հատուած է, երբ մէկ կողմէ սովորական կեանքն ու առօրեան քանդուած են, իսկ գոյութիւն ունեցող ծէսերը կորսնցուցած են իրենց նշանակութիւնը:

Սա, իհարկէ, խորապես անհանգստացնող իրավիճակ է, բայց նաև մեծ ստեղծագործական շրջան: Հիմա, մեր տուներուն մէջ պատսպարուած, համավարակի սպառնալիքէն անշարժացած, բոլորս կը սգանք կորսուած բնականոնութիւնը, բայց մենք կրնանք նաև նպատակադրել և նոր հնարաւորութիւններ ստեղծել: Այս պահուն, եթէ կ'ուզենք յեղափոխութիւն տեսնել, ապա պահն է մարդկային քայլեր առնելու և գործի ժամ յայտարարելու: ■

«Դրօշակ»ը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան վավերագիր (մաս 3-րդ)

Աւօ Գաթրճեան

Չորրորդ ժամանակաշրջան

«Դրօշակ»ի չորրորդ ժամանակաշրջանը սկիզբ կ'առնէ 1986ին Աթէնք (Յունաստան) եւ վերջ կը գտնէ 2005ին: Այս հանգրուանին ՀՅԴ կեդրոնական պաշտօնաթերթին խմբագրութեան պաշտօնը կը վարէ Նազարէթ Պէրպէրեան:

«Դրօշակ»ի թուղթին չափը 27 X 20.5 սմ է, իսկ թուղթին որակը՝ ճերմակ փայլունի զարնող, ծաւալը երբեմն՝ 42, երբեմն՝ 50 կամ 74 էջով:

1986 թուականին դարձեալ վերահրատարակուող «Դրօշակ»ին մէջ գաղափարականութեան սկզբունքի կիրարկման հաւաստիքը հանդէս կու գայ հետեւեալ տողերով. «Գաղափարական ամբողջ ժառանգութիւն մը վերանորոգելու դաշնակցական յանդգնութիւնը թափ կու տայ մեր աշխատանքին՝ իբրեւ ներշնչման անխառն ու վարար աղբիւր»:

«Դրօշակ»ի չորրորդ վերահրատարակման մէջ կ'իյնայ յատկապէս Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման եւ վերիվայրումներու հանգրուանը, մասնաւորապէս՝ տէրպետրոսեանական իշխանութիւններու հակադաշնակցական բուռն արշաւը:

Այսպէս, 1992 յունիս 29ին Երեւանի մէջ գումարուած ՀՅԴ 25րդ Ընդհանուր ժողովը կը խափանուէր Լեւոն Տէր-Պետրոսեանի՝ Դաշնակցութիւնը բացէ ի բաց հալածելու կեցուածքով: Նոյն տարուան հոկտեմբերին Ընդհանուր ժողովը իր աշխատանքները կը շարունակէր Փարիզի մէջ:

Այդ օրերուն Դաշնակցութեան պաշտօնաթերթը ընդհանրապէս կ'ընդգծէր. «Մէկ ազգ, մէկ հայրենիք» գաղափարաբանութեան կիրարկումը, անկախութիւնը Հայաստանի ճգնաժամային վիճակին համար քաւութեան նոխազ դարձնող մտայնութեան դէմ քարոզչութեան զօրացումը, մեր աւանդական պահանջատիրութեան՝ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի տեսլականով յստակօրէն արտայայտուելու եւ հայ մարդուն իր երկրին մէջ ինքնիշխան ապրելու իրաւունքը: Ու դեռ, Հայոց ցեղասպանութեան ճանաչման ու հատուցման արծարծումը:

Միաժամանակ, ՀՅԴ Ծրագրի եւ քաղաքական ուղեգիծի ընկերային եւ ազգամշակութային սկզբունքային մտածողութիւնը: Մէկ խօսքով՝ դաշնակցական ընկերվարական հասկացողութիւնները գիտագաղափարական հիմնաւորմամբ պարզաբանելով՝ անոր գաղափարախօսական, համամարդկային ու միաժամանակ մեր ազգային իրականութիւնը հայ ժողովուրդին ներշնչելու անհրաժեշտութիւնը:

<<Դրօշակ>>ի ժամանակ խմբագրատան մուտքը

Անշուշտ, միաժամանակ չմոռնալ նոյն ժամանակաշրջանին Արցախի ազատագրական պայքարի ամբողջ իրադարձութիւնները, որոնք մեզի ներկայացուած են, ինչպէս նաեւ պաշտօնաթերթի վերջին էջերուն մէջ զետեղուած արցախեան գոյապայքարին մէջ նահատակուած ազատամարտիկներուն կենսագրականներն ու մտածումները:

25 փետրուար 1999ին «Դրօշակ»ը ունեցաւ իր հայրենական ծնունդը: Երկշաբաթեայ պարբերականութեամբ Աթէնք հրատարակուող «Դրօշակ»ը, իր 1999ի 3րդ թիւէն (12-25 փետրուար 1999 թուակիր) սկսեալ, լոյս կը տեսնէ Երեւանի մէջ («Այբ Գրաֆիկ» տպարանէն, Տէրեան 72): Այսպիսով, իր հրատարակութեան 109ամեայ պատմութեան ընթացքին առաջին անգամ ըլլալով, «Դրօշակ» լոյս կը տեսնէ հայրենիքի մէջ:

Արդարեւ, ՀՅԴ պաշտօնաթերթը կը հրատարակուի Հայաստանի Հանրապետութեան մէջ պաշտօնապէս գրանցուած թերթի կարգավիճակով՝ թէ՛ շարունակելով դէպի տարբեր գաղութներ իր առաքումները եւ թէ՛ հասանելի դառնալով հայրենի ընթերցողներու լայն բազմութեան:

Ուստի Հայաստանեան մամուլի նորագոյն անդամը՝ «Դրօշակ» անփոփոխ կը պահէ իր կողքի ձեւաւորումն ու 44 էջեայ ծաւալն ու չափը:

Այս ժամանակաշրջանին բովանդակութեան բաժիններն են՝ «Խմբագրական», «Մեր ուղին», «ՀՀՇական խարխափումներու դէմ», «ՀՀՇական ելոյթներ», «Դաշնակցութեան հետ», «Մեր ընդդիմախօսները եւ մենք», «Հայաստանի նախագահական ընտրութիւնները», «Հայաստան եւ խորհրդային քաղաքականութիւնը», «Փաստաթուղթ», «Թղթածրար», «Հայաստանի անկախութեան հետ», «Փաստագրութիւն», «Ազգային մտահոգութիւններ», «Երիտասարդական ձայներ», «Գաղափարական հարցեր», «Արցախեան պահանջատիրութիւն», «Հայրենական հոգեր», «Դրօշակի գրադարան», «Անդրադարձ», «Անձինք նուիրեալք», «Քաղաքական տեսութիւն», «Թուրքիոյ շուրջ», «Դաշնակցականի մտքեր», «Յուշեր», «Այբուբեն», «Մեր հարցազրոյցները», «Կազմակերպական հարցեր», «Դէպի երկիր» եւ այլն:

Վերոնշեալ բաժիններուն մէջ յօդուածներ ունին հայրենիքէն եւ Սփիւռքէն մտաւորականներ՝ Էդիկ Յովհաննիսեան, Հրայր Մարուխեան, Բաբգէն Փափազեան, դոկտ. Բաղդիկ Մինասեան, Լեւոն Շիրինեան, Նազարէթ Պէրպէրեան, Գէորգ Պէլեան, Արա Խանճեան, Հրաչ Տասնապետեան, Արտաշէս Շահբազեան, Ռուբինա Փիրումեան, Սօս Սարգսեան, Ռուբէն Յովսէփեան, Ա. Գ., Սիւզան Խարտալեան, Վահէ Օշական, Ժիրայր Ղարիպեան, Խաժակ Տէր Գրիգորեան, Իգոր Մուրատեան, Խաչիկ Տէր Ղուկասեան, Ժաննա Գալստեան, Աբօ Պօղիկեան, Ծովակ Աւագեան, Վարանդ Փափազեան, Արամ Սարգսեան, Սեդօ Պոյաճեան, Յակոբ Պալեան, Սարմէն Ղահրամանեան, Վաչէ Բրուտեան, Ձօրայր Խալափեան, Վրէժ-Արմէն Արթինեան, Յարութիւն Քիւրքճեան, Սարգիս Կիրակոսեան, Սէյրան Բաղդասարեան, Միհրան Քիւրտօղլեան, Հրայր Կարապետեան եւ ուրիշներ: Վերոնշեալներէն ոմանց յօդուածները տրուած են յետմահու:

Միւս կողմէ «Դրօշակ»ի կարգ մը թիւերուն կցուած են նաև ազգային-կուսակցական-գաղափարական ու գաղափարախօսական նիւթերու շուրջ ֆրանսերէն յօդուածներ:

«Դրօշակ»ի այս ժամանակաշրջանին վերջին քանի մը տարիները՝ 2002, 2003, 2004, 2005, հրապարակուած են եռամսեայ դրութեամբ, գիրքի տեսքով, և ամէն մէկ թիւ առանձին խորագիրով կը յատկանշուի, սակայն անմիջապէս յիշեցնենք, որ նոյն այս խորագիրը առնուած է մէջի յօդուածներէն մէկուն վերնագիրէն, օրինակ՝ «Պետութեան հզօրացման հաստատակամութեամբ», «Ճշմարտութեան պահը», «Անկախ Հայաստանը և Դաշնակցութեան անելիքը» և այլն:

«Դրօշակ»ի այս գիրքերուն չափը եղած է 23 X 16.5 սմ, իսկ թուղթին որակը՝ ճերմակ, ծաւալը՝ 152 էջ:

Եռամսեայ այս թիւերուն բովանդակութեան գլխաւոր բաժիններն են՝ «Դաշնակցական բեմ», «Հայ դատ», «Պատմութեան հետ», «Արխիւային», «Ազգային հոգեր», «Գաղափարաբանութիւն», «Տարածաշրջան», «Տնտեսութիւն», «Փաստագրութիւն» և այլն:

Յօդուածագիրներն են՝ Լևոն Մելիք-Շահնազարեան, Արտակ Մաղալեան, Էդուարդ Յարութիւնեան, Մկրտիչ Մկրտիչեան, Վահան Յովհաննիսեան, Սամուէլ Էլոյեան, Նազարէթ Պէրպէրեան, Հայկ Դեմոյեան, Գագիկ Սողոմոնեան, Թամար Վարդանեան, Ալեքսանդր Մանասեան, Ջուլիետա Յովհաննիսեան, Աւօ Գաթրճեան և ուրիշներ:

Չորրորդ ժամանակաշրջանին մէջ կարևոր է ընդգծել երկու հիմնական կէտ.

ա. Թէև «Դրօշակ»ի շուրջ հաւաքուած կը տեսնենք դաշնակցական և հայրենի շատ մը մտաւորականներ, նոյնիսկ երբեմն կարդացած ենք խմբագրական կազմի մասին, սակայն թերթը կը զատորոշուի իր մէկ խմբագիրով՝ Նազարէթ Պէրպէրեանով:

բ. Անցեալ շրջանէն սփիւռքեան գրիչներէ եկած



ԱԶԴԱԿ
Շաբաթօրեակ

ԱԶԴԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ● Ա. ՏԱՐԻ, 23 ԴՈՍԵՄԲԵՐ 1969, ԹԻՒ 1

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՊԱՏԱԿԸ

Լոյս կը տեսնենք սփիւռքի մէջ:

Քաղաքական դէպքերու դասաւորումով, յիսուն տարիէն աւելի է որ գոյութիւն ունի սփիւռք և սփիւռքահայութիւն:

Լոյս կը տեսնենք սփիւռքահայութեան մէջ. սակայն՝ համա՛յն հայութեան համար:

Մեզի համար մէկ ամբողջութիւն է հայութիւնը: Կուսակցական հակադիր մտածողութիւններն ու ճամբաները չեն կրնար ամբողջական հայութեան գաղափարը արմատախիլ ընել մեր հոգիներէն: Ազգերու քաղաքական մտածողութիւնը չի կրնար մէկ ճամբով միայն ընթանալ: Ընդհանուր նպատակը նոյնը կ'ըլլայ. նպատակին հասնելու միջոցները սակայն տարբեր կ'ելլան եւ ազգին մէջ երբեմն կու գան մէկէ աւելի քաղաքական մտածողութիւններ, մէկէ աւելի կուսակցութիւններ: Ուրեմն առնե՞ն որ անոնցմէ ամէն մէկը իր հոգիին ու մտքին մէջ անհարար կը պահէ ազգին ամբողջութեան գաղափարը, վնասակար չեն կրնար ըլլալ կուսակցական հակադրութիւնն ու հակամարտութիւնը:

Ազգը իր ձգտումներուն եւ համոզումներուն համաձայն կ'դարձէ — երբ կարելիութիւնը ունի ժողովրդադաւարական, ազատ, հաւասար քուէարկութիւնամբ արտայայտուելու —, բէ իր գրկին մէջ գոյութիւն ունեցող քաղաքական զանազան մտածողութիւններէն ո՞րը կը նախընտրէ իբրեւ ամբողջ ազգին հեսեւելիք ուղի:

Հ. Յ. Դաշնակցութիւնը առաջին օրէն որդեգրած է ազատ ու հաւասար ընտրութեան սկզբունքը եւ տեւաբար հաւատարիմ մնացած է անոր: Իշխանութեան գլուխ ըլլալ ան թէ ընդդիմադրութեան մէջ, իր գործունէութիւնը մէկ նպատակ միայն կը հետապնդէ, — հայ ժողովուրդի հիմնական շահերու պաշտպանութիւնն ու իրականացումը:

Հայ ժողովուրդին համար այսօր հիմնական է իր ամբողջականութեան գիտակցութիւնը եւ այդ գիտակցութեան անհարար պահպանումը:

ԴՐՕՇԱԿ

Հ. Յ. Դաշնակցութեան օրգանը՝ «Դրօշակ», իր առաջին տարուան առաջին թիւին մէջ, 1891 Մայիսին կը գրէր —

...Ներկայումս գոյութիւն ունեցող օրգաններ, որոնք նոյնկոչ նուիրուած են հայկական խնդրի լուծման, մեր կարծիքով ամբողջապէս չեն իրականացնում այն պայմանները, որ ապառնվացնում են կանոնաւոր կուիւ:

«Դրօշակ»ը հանդէս է գալիս իբրեւ օրգան մի կազմակերպութեան, որ ունի որոշ միջոցներ իր նպատակին հասնելու համար:

«Դրօշակ»ը մի կողմից չի կարող բոլորովին համերաշխ լինել նրանց հետ, որոնք ուզում են միայն քաղաքական (դիպլոմատիայի) միջոցով հասնել իրանց նպատակին, որովհետեւ բացառապէս դիպլոմատիան ոչինչ չի անիլ դրդուած մարդասիրութիւնից: Մեր նիւթապաշտ դարում դիպլոմատները դեկավարում են սեփական շահերով եւ ունի ուժեղի իրաւունքներով: «Բնապան չիոյ, սասց նոքերուս Կայնկին, եւ մինչեւ հայկական հողը չշաղախուի արիւնով՝ իզդ գիտնան հայերը որ ոչինչ չեն ստանայ»:

Մէկ է հայ ժողովուրդը, կրօնական ի՛նչ համոզումներու տէր այ ըլլան իր զաւակները, ո՞ր դասակարգին այ որ պատկանին:

Մէկ է եւ մէկ ամբողջութիւն՝ քաղաքական ի՛նչ մտածողութեան տէր այ ըլլան իր զաւակները, բանի՛ կուսակցութիւն այ գտնուի իր ծոցին մէջ:

Մէկ է եւ մէկ ամբողջութիւն՝ մինչեւ անգամ երբ իրերամերձ ընթացքի մէջ կը գտնուին գիծի բաղկացնող զանազան հասանիները:

Մէկ է և մէկ ամբողջութիւն է հայկական հողը: Ոչ մէկ ձեւի արուեստական սահմանազծում, ցեղասպանութեամբ դասարկում կամ բռնագրաւում կրնայ իր էութեան մէջ բաժնել զայն: Հայկական լեռնաշխարհը իր ամբողջութեամբ է, որ կ'իմաստաւորուի եւ արժէք

«Ազդակ Շաբաթօրեակ-Դրօշակ»-ի առաջին տարուայ առաջին թիւի առաջին էջ

գաղափարական շատ խոր գրութիւններու կողքին կը սկսին երեւան գալ հայրենի մտաւորականութեան միտքերը՝ աւելի մասնագիտացած եւ գիտական բնոյթ ունեցող յօդուածներ:

Բնականաբար այս ժամանակաշրջանը՝ իբրեւ բարձր մակարդակով ժառանգ՝ առնուած սփիւռքեան եւ յատկապէս լիբանանահայ մտաւորական գրիչներէ, կը հասնի իր գագաթնակէտին, եւ դաշնակցական ամէն միջավայրի մէջ կը փնտռուի «Դրօշակ»ը, մանաւանդ այսօրուան հետ համեմատած՝ դաշնակցական մամուլի ուշադրութեան կ'արժանանայ, այն իմաստով, որ աւելի արտատպումներ կը կատարուին դաշնակցական մամուլին մէջ: Կ'արժէ յիշել նաեւ լեզուի գործածութեան բարձր մակարդակը, թէեւ հայրենի մտաւորականութեան հետ միասին կը բազմանայ գործածութիւնը ռուսերէն բառերուն, ինչպէս էր պարագան առաջին եւ երկրորդ ժամանակաշրջաններուն:

Հինգերորդ ժամանակաշրջան

2007ին վերահրատարակուող «Դրօշակ»ը բովանդակութեամբ շատ տարբեր չէ անցեալէն, սակայն կազմի ու էջերու ձեւակերպման իմաստով հոն առկայ է նորաձեւութիւնը՝ 21րդ դարու արհեստագիտական կարելիութիւններով. օրինակ՝ թուղթին չափը A4 է, ծաւալը՝ մինչեւ 50 էջ, թուղթը՝ բարձրորակ:

Թերթը կը հրատարակուի Երեւան եւ կը տարածուի ամբողջ աշխարհ, ուր կան հայ համայնք ու դաշնակցական կառոյց:

Այս շրջանի «Դրօշակ»ի գլխաւոր խմբագիրը եղած է հայրենի գրող եւ մտաւորական Ռուբէն Յովսէփեան, իսկ խմբագիրը՝ դոկտ., փրոֆ. Կարէն Խանլարեան:

Առաջին թիւին՝ «Վերահրատարակուող «Դրօշակը» խորագրեալ խմբագրականին մէջ կը կարդանք, որ թերթին նոր խմբագրակազմին համար անվիճելի արժէքներ կը մնան Քրիստափոր Միքայէլեանէն, Միքայէլ Վարանդեանէն, Սիմոն Վրացեանէն, Սարգիս Ջէյթլեանէն, Բաբգէն Փափազեանէն ժառանգուած եւ Նազարէթ Պէրպէրեանի խմբագրած «Դրօշակ»ին փոխանցուած հետեւեալ անտարակուսելի կեցուածքն ու սկզբունքները.

««Դրօշակ»ը, ինչպէս միշտ, պիտի հանդիսանայ ՀՅ Դաշնակցութեան հայեացքներուն եւ գաղափարախօսութեան թարգմանը եւ տարածողը:

«Դրօշակ»ը, հայ ազգային-պետական, քաղաքական-տնտեսական եւ ընկերային-մշակութային բովանդակ շահերու պաշտպանութեան դիրքերէն եւ ՀՅԴ արժէքային համակարգէն մեկնելով՝ պիտի մեկնաբանէ համաշխարհային ու շրջանային անցուդարձերը, հայութեան եւ Հայ դատին վերաբերող խնդիրները,

Քրիստափոր Միքայէլեանը եւ Սիմոն Զավարեանը <<Դրօշակ>>ի ժեւեւեան խմբագրատան բակում

Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւններուն եւ մեր կորուսեալ Հայրենիքին առնչուող հիմնահարցերը:

«Դրօշակ»ը վերոնշեալ շահերու պաշտպանութեան դիրքերէն մեկնելով՝ պիտի քննարկէ Հայաստանի ու հայութեան կեանքի նաեւ յոռի եւ բացասական երեսները, ապազգային քաղաքական ընթացքները, արտատնտեսական եւ ստուերային աղէտաբեր կացութաձեւերը, փտածութիւնը եւ խմբակային սանձարձակութիւնները, ճեղքուած եւ բեւեռացած հասարակութեան ընկերային յարաբերութիւնները, անյարիր եւ այլասերիչ մշակութային երեւոյթները:

«Դրօշակ»ը պիտի արծարծէ այս բոլորը՝ մնայուն կերպով ուղենիշ ունենալով ժամանակի ոգին եւ յառաջխաղացքը, յստակ տարբերակելով միջազգային արժէքները աշխարհաքաղաքացիական ըմբռնումներէն, համամարդկային նուաճումները՝ համաշխարհայնացումի հրամցումներէն»:

21րդ դարու՝ «Դրօշակ»ի հինգերորդ ժամանակաշրջանի թիւերուն մէջ զգալի է, որ անոր ուշադրութիւնը սեւեռուած է մեր ազգն ու պետականութիւնը յուզող կարեւորագոյն

հարցերուն վրայ: Հոն ստեղծուած է հասարակական ու քաղաքական մտքի խմորման այն դաշտը, ուր հնարաւոր է գտնել մեզի յուզող հարցերուն լուծումները:

Պաշտօնաթերթին շուրջ, կուսակցական մտաւորականութենէ զատ, համախմբուած են նաեւ ոչ դաշնակցական յօդուածագիրներ, ինչպէս 29 նոյեմբեր 2007ին «Դրօշակ»ի գլխաւոր խմբագիր Ռուբէն Յովսէփեան պիտի գրէր. ««Դրօշակ»ի դռները բաց են բոլորին առջեւ, ան Հ.Յ.Դ.ի պաշտօնաթերթն է, բայց բոլորինն է»: Ահաւասիկ, տարիներու բերած փորձառութիւնը պատճառ կը դառնայ, որ ՀՅԴ պաշտօնաթերթը ըլլայ այսքան շրջահայեաց եւ մասնագիտացած ու գիտական մակարդակի յօդուածներով ուշադրութիւնը գրաւէ ոչ միայն գաղափարակիցին, այլեւ մանաւանդ՝ գիտական շրջանակին:

2007-2011 թուականներու ժամանակաշրջանին մէջ լոյս տեսած «Դրօշակ»ի բաժինները եթէ նշելու ըլլանք, հոն պիտի կարդանք հետեւեալները՝ «Խմբագրական», «Խմբագրի անկիւն», «Հարցազրոյց», «Տեսակէտ», «Մեր երախտաւորները», «Նիւթեր թուրք պատմաբանների համար», «Դրօշակը 100 տարի առաջ», «Մի երգի պատմութիւն», «Տեսական», «Տարածաշրջան», «Պատկերասրահ», «Միջազգային իրաւունք», «Խորհրդարանական կեանք», «Տեղեկանք», «Համաշխարհայնացում», «Դաշնակցական բեմ», «Թերթելով «Դրօշակ»ի էջերը», «Նոր գիրքեր», «Ժողովրդագրութիւն», «Պատմութեան սրբագրում», «Նամականի», «Հնադարեան», «Միջազգային կեանք», «Սոցիալ-տնտեսական», «Պատմամշակութային», «Իմացաբանական», «Համագործակցութիւն», «Հայեացք ներսից», «Մտաւորականի անկիւն», «ԼՂՀ հիմնախնդիր», «ՀՀ բանակ», «Արձագանգ», «Յիշատակ» եւ այլն:

Յօդուածագիրներն են՝ Լեւոն Շիրինեան, Կարէն Խանլարեան, Ռուբէն Յովսէփեան, Հայկազուն Ալվրցեան, Արա Նոանեան, Սիւզան Խարտալեան, Վահէ Սարգսեան, Կարէն Վերանեան, Արմինէ Ամիրեան, Համլետ Գէորգեան, Յովհաննէս Ջատիկեան, Արա Պապեան, Աննա Առաքելեան, Մանուէլ Մկրտչեան, Ար. Ս. Եղիազարեան, Աբրահամեան Հ. Բ., Ժիլպերթ Մուշկանբարեան, Ֆելիքս Մելոյեան, Լիւտվիկ Խաչատրեան, Հայկարամ Նահապետեան, Վահագն Յակոբեան, Աւօ Գաթրճեան եւ ուրիշներ:

«Դրօշակ»ի էջերուն, ինչպէս միշտ, այս հանգրուանին եւս ուշագրաւ է «Դաշնակցական բեմ»ը, ուր կ'արծարծուին կուսակցական խնդիրներ, մտահոգութիւններ՝ կապուած ազգային եւ պետական իրականութեան: Կայ յատուկ էջ՝ մեր ազգային եւ կուսակցական դէմքերու մասին:

«Դրօշակ»ը կ'անդրադառնայ աշխարհատարած Հայ դատի յանձնախումբերու եւ գրասենեակներու գործունէութեան, ինչպէս նաեւ Հայ դատին առնչուող վերջին իրադարձութիւններուն:

Թերթի այս շրջանի նորարարութիւնը ««Դրօշակ»ի պատկերասրահ» բաժինն է՝ զանազան արուեստագէտներու գեղանկարներու նմուշներով: Այստեղ անմիջապէս կ'արժէ յիշել, որ անցեալի ժամանակաշրջաններէն կը զատորոշուի նաեւ պատկերազարդ ու գունաւոր էջերով (թէեւ նախօրօք եղած են հատուկենտ նկարներ՝ սեւ-ճերմակ):

Այս շրջանի վերջին թիւը լոյս տեսած է 2011 թուականի յուլիսին: ■

<<Դրօշակ>>ի խմբագիր Ռուբէն Հովսեփեանը և Ավո Գաթրճեանը

Ջավախքի հիմնահարցերը (մաս 4-րդ եւ վերջին)

Վրեժ Նահատակյան

Սիալքալաքի Արդարադատության տան բացումը՝ 2018թ.

ՀՀ-ի՝ ազդեցությունը Ջավախքի վրա

Հայաստանի Հանրապետության կողմից Ջավախքին հատկացվող օժանդակությունը 1990-ական թթ. ի վեր համակարգվել է մի քանի կազմակերպությունների միջոցով: Դրանցից առաջինը ՀՀ Կառավարությանն առընթեր Հատուկ ծրագրերի վարչությունն էր, որն ստեղծվել էր 1990-ական թթ. սկզբներին և համակարգում էր Արցախին ու Ջավախքին (Վրաստանին) առնչվող մի շարք հարցեր, որոնց շրջանակում համակարգում էր նաև ՀՀ-ի կողմից Ջավախքում իրականացվող ծրագրերը: Ռ. Քոչարյանի կառավարման շրջանում այս հիմնարկը վերանվանվեց Տարածաշրջանային ինտեգրացման վարչություն և գոյատևեց մինչև 2000-ական թթ. սկիզբը: Դրա ղեկավարն այնուհետև նույն հարցերով ՀՀ վարչապետի խորհրդականն էր: Նա աշխատանքից ազատվեց, և այս ոլորտը կառավարության կողմից վերջնակապես անտեսվեց վարչապետ Տ. Սարգսյանի օրոք:

ՀՀ-ի կողմից Ջավախքին ցուցաբերվող օժանդակությունը համակարգվել է նաև «Ջավախք» հայրենակցական միության կողմից: Ներկայումս իր կանոնադրությամբ որպես հասարակական կազմակերպություն գործող այս միությունը հիմնադրվել է 1990 թ., ջավախահայ մի շարք հասարակական-քաղաքական գործիչների ու մտավորականների կողմից, և մինչ 2000-ական թթ. սկիզբը Ջավախքում ծավալել է մշակութային ու բարեգործական գործունեություն: Ներկայումս գործող այս ՀԿ-ն ունի պետության հետ կնքած պայմանագիր, որի համաձայն՝ պետության միջնորդությամբ և պետական միջոցներով ջավախահայերն ստանում են անհետաձգելի բուժծառայություններ (հիմնականում կատարվում են անհետաձգելի վիրահատություններ): Այս կազմակերպությանը ՀՀ-ի (վարչապետի աշխատակազմի) կողմից Ջավախքում դպրոցաշինության, կրթամշակութային և այլ ծրագրերի իրականացման համար նվիրատվության տեսքով, երբեմն, տրվել են զգալի միջոցներ:

ՀՀ կառավարությունը Ջավախքում իրականացվող ծրագրերի շրջանակներում համագործակցել է նաև 2003 թ. ստեղծված և մինչ օրս գործող «Վիրահայերի միասնություն» հասարակական կազմակերպության հետ, որին ևս, օրինակ, 2008 թ. փոխանցել է բավականին խոշոր գումար, որով վերջինս պետք է Ջավախքում իրականացներ կրթամշակութային և դպրոցաշինական ծրագրեր:

«Ջավախք» հայրենակցական միության ներկայացուցիչները 1999 թ. ստեղծեցին «Հզոր հայրենիք» կուսակցությունը, և, այդ շրջանից սկսած, հայրենակցական միությունն ու հիշյալ կուսակցությունը միասնաբար հանդես են գալիս քաղաքական դիրքորոշումներով՝ ակտիվորեն ներքաշվելով ՀՀ ներքաղաքական գործընթացների մեջ: Նույնը կարելի է ասել «Վիրահայերի միասնություն» հասարակական կազմակերպության առնչությամբ: Անցած 20 տարիների ընթացքում այս բոլոր կազմակերպությունները, որպես կանոն, մշտապես եղել են Ռ. Քոչարյանի և Ս. Սարգսյանի իշխանությունների կողքին, և իրականացվող այս կամ այն ծրագիրը իր խորքում նպատակ ուներ կառավարելու ՀՀ-ում բնակվող շուրջ 400,000 ջավախահայերի քվեները:

Երևանում գործում է նաև Հայ օգնության միության կողմից 2000-ական թթ. սկզբին ստեղծված Ջավախքի օժանդակության ծրագրերի հանձնախումբը, որն անցած տարիներին իրականացրել է

կրթամշակութային, հրատարակչական (գրքեր, քարտեզներ, օրացույցներ և այլն) և այլ ծրագրեր, հիմնադրել և համակարգում է Ջավախքի երեք քաղաքներում գտնվող երիտասարդական կրթամշակութային կենտրոնների գործունեությունը:

2014 թ. ծնունդով Ջավախքից մի շարք գործարարներ և մտավորականներ Երևանում հիմնադրեցին «Ջավախքին աջակցություն» հիմնադրամը (ՋԱՀ), որն այնուհետև իրավաբանորեն գրանցված իր մասնաճյուղն ունեցավ նաև Ախալքալաքում: Հիմնադրամն իրականացնում է տնտեսական, բարեգործական և կրթամշակութային ծրագրեր Ջավախքի մի շարք շրջաններում:

ՀՀ սփյուռքի նախարարության գոյության 10 տարիների (2008-2018 թթ.) ընթացքում ՀՀ-ն պետական այդ գերատեսչության ստորաբաժանման՝ ԱՊՀ հայ համայնքների վարչության Կովկասյան տարածաշրջանի հայ համայնքների հետ կապերի բաժնի միջոցով Վրաստանի, այդ թվում՝ Ջավախքի հայկական դպրոցներին տրամադրել է հայագիտական դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, դիդակտիկ նյութեր, ուսումնաօժանդակ ձեռնարկներ և այլն:

2018 թ. ՀՀ-ում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո նոր իշխանությունների կողմից իրականացված կառուցվածքային փոփոխությունների հետևանքով 2019 թ. հունիսի 1-ին ուժի մեջ մտավ ««Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նոր օրենքը, որով Սփյուռքի նախարարությունը միացվեց վարչապետի աշխատակազմին, ինչի հետևանքով վարչապետի աշխատակազմում ստեղծվեց Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը: Գրասենյակի՝ 2019 թ. հունիսի 6-ին ուժի մեջ մտած կանոնադրության վերլուծությունից պարզ երևում է, որ պետական այս մարմինն ունի զուտ հետազոտական, վերլուծական

ՀՀ Վրաստան միջխորհրդարանական հանդիպում՝ 2014թ

Սփյուռքի նախարար Հ. Հակոբյանը ընդունել է «Ջավախքին աջակցություն» հիմնադրամի ներկայացուցիչներին՝ 2014թ

ու խորհրդատվական բնույթի գործառույթներ, և վերջինիս նպատակն է աջակցել ՀՀ վարչապետի կողմից Սփյուռքի քաղաքականության ապահովմանը, հանձնակատարի՝ Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունների զարգացմանն ուղղված աշխատանքներին և հայրենադարձության կազմակերպմանը:

Արդյունքում նախկինում նախարարության կողմից Սփյուռքում (այդ թվում՝ նաև Վրաստանում ապրող հայության (ջավախահայության) շրջանում) իրականացվող ծրագրերը վերաբաշխվել են ըստ նախարարությունների և պետական ոչ առևտրային այլ կազմակերպությունների, և հանձնակատարի գրասենյակը հանձնակատարի հետ, փաստորեն, կատարելու է 12 նախարարությունների ու պետական այլ կազմակերպությունների՝ Սփյուռքի ուղղությամբ այս կամ այն կերպ իրականացվող աշխատանքների համադրման (աջակցություն Սփյուռքի հետ տարվող աշխատանքների միասնականության ապահովմանը) գործառույթը: Կանոնադրությունից երևում է, որ Սփյուռքին առնչվող քաղաքականության և նրա հետ տարվող աշխատանքների միասնականության ապահովման լիազորությունները իրականացնում է վարչապետը, իսկ գլխավոր հանձնակատարին վերապահված է այդ աշխատանքների կազմակերպումը, գրասենյակին՝ այդ աշխատանքներին աջակցությունը:

Փաստենք, որ ջավախահայության առնչությամբ իրականացվող ծրագրերն այժմ բաշխվել են նորաստեղծ ԿԳՄՍ նախարարության արտաքին կապերի և ափյուռքի վարչության Սփյուռքի հետ կապերի բաժնի[1], ԱԳ նախարարության սահմանակից երկրների վարչության երկկողմ հարաբերությունների առաջին բաժնի և պետական ոչ առևտրային որոշ այլ կազմակերպությունների միջև:

Հարկ է նշել, որ պետականորեն ձևավորված հայեցակարգի բացակայության պայմաններում պատկան այս օղակները գործելու ամենամեծ

Հայաստանի Վարչապետ Ա. Մարգարյանը բանակցում է Վրաստանի վարչապետ Ջ. Նոդայդելիի հետ 2005թ.

ցանկության դեպքում էլ հանդիպում են մշտական դժվարությունների, դժվարություններ, որոնք կապված են Վրաստանին կամ Ջավախքին առնչվող տարբեր հարցերի շրջանակներում տիրող մշտական և օրավուր խորացող խառնաշփոթի, որդեգրված ռազմավարության անհստակության, համընդհանուր անորոշության և մի շարք այլ գործոնների հետ, որոնք գրեթե փակուղու առջև են կանգնեցնում նշյալ մարմինների առանց այդ էլ ոչ հստակ, իսկ շատ դեպքերում ձևական, քայլերը:

Սույն ենթաբաժնում քննարկվող խնդրի շրջանակներում մատնանշենք նաև ՀՀ-Վրաստան միջպետական համագործակցության շրջանակներում գործող բարեկամական խմբերին և միջկառավարական հանձնաժողովներին:

Առաջինը՝ ՀՀ Ազգային ժողովի և Վրաստանի խորհրդարանի միջև համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովն է, որը վեցերորդ գումարման Ազգային ժողովից սկսյալ (2017 թ.) վերածվել է բարեկամական խմբի: Այս մարմինն այդպես էլ տարիներ ի վեր չունեցավ այն լրջագույն դերակատարումը, որով պիտի ուրվագծվեր միջպետական մի շարք ոլորտների, այդ թվում՝ Ջավախքի հայության շրջանում առկա հիմնահարցերի լուծման հայեցակարգը: Ցավոք, կարելի է խոսել միջպետական այդ մարմնի սոսկ գոյության, այլ ոչ՝ գործունեության մասին: Այնինչ՝ արդյունավետ ու հաշվենկատ գործունեության շնորհիվ կարելի էր հսկայական առաջընթաց ունենալ և՛ հայ-վրացական հարաբերությունների բազմաթիվ ոլորտներում, և՛ ջավախահայությանը հուզող հարցերի լուծման ուղղությամբ: Այսօր էլ, ինչպես փոխադարձ ներդրումների, այնպես էլ՝ միջազգային ներդրողների համար միասնական տնտեսական գոտի ձևավորելու համար հարկավոր է նախ փոխադարձորեն ճանաչել օրենսդրական դաշտը, այնուհետև՝ համապատասխանեցնել դրանք երկկողմանի շահերին համահունչ: Բնականաբար՝ հայկական կողմն այս հարաբերություններում, որպես ՀՀ պետական շահերի համակարգում գտնվող առանցքային գործոն, ամեն կերպ պետք է առաջ մղի ջավախքահայության շահերը:

Հայ-վրացական հարաբերություններին առնչվող հաջորդ միջպետական մարմինը Հայ-վրացական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովն է, որը, սկսած 2000 թվականից, յուրաքանչյուր տարի մեկ անգամ Թիֆլիսում և Երևանում հաջորդաբար նիստեր է գումարում[2]: Բնականաբար՝ ինչպես այս միջպետական մարմնի, այնպես էլ 2004 թ. հիմնադրված հայ-վրացական գործարար համագործակցության ընկերակցության[3] և 2013 թ. աշնանը ձևավորված հայ-վրացական առևտրատնտեսական հարցերով համատեղ աշխատանքային խմբի[4] աշխատանքներում հայկական կողմի ջանքերն անհրաժեշտաբար պետք է ուղղվեին նաև (և առաջնահերթորեն) Ջավախքում ներդրումային քաղաքականության մշակմանը և հայկական գործարար աշխարհի ներկայացուցիչների տնտեսական կապիտալը դեպի այս տարածաշրջան ուղղորդելուն:

Չնայած վերոնշյալ հնարավորություններին՝ ցավոք, նշյալ միջպետական հանձնաժողովների աշխատանքն ունեցել է զրոյական ազդեցություն ջավախքահայության սոցիալ-տնտեսական կյանքի աշխուժացման վրա: Միջպետական այդ մարմիններից՝ գործարար համագործակցության ընկերակցությունը և առևտրատնտեսական հարցերով համատեղ աշխատանքային խումբը հիշատակվում են միայն կազմավորման շրջանում, և վերջիններիս կատարած աշխատանքի մասին որևէ տեղեկություններ չեն հրապարակվել մամուլում: Ըստ երևույթին՝ վերջիններս չեն էլ գործել:

Ինչ վերաբերում է Հայ-վրացական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի աշխատանքներին, ապա միայն այն փաստը, որ Հանձնաժողովի 9-րդ նիստի գումարումից՝ 2011թ. նոյեմբերի 18-19-ից մինչև 2019 թ. հունիսի 27-ը[5], այն է՝ 8 տարի, Հանձնաժողովը որևէ նիստ չի գումարել, արդեն խոսում է այն մասին, որ այդ մարմինը ևս տարիներով մատնված է եղել անգործության:

Արդարության դեմ չմեղանչելու համար՝ փաստենք, որ վարչապետ Ա. Մարգարյանի պաշտոնավարման շրջանում և Հանձնաժողովի գործունեության սկզբնափուլում (2000-2007 թթ.) միջպետական այս մարմինն այս կամ այն կերպ և տարբեր առիթներով շոշափել է Ջավախքի խնդիրները:

Հանձնաժողովի 3-րդ նիստի[6] շրջանակներում

Թիֆլիսում կայացած հանդիպումներում Ա. Մարգարյանը խոսել է նաև Ջավախքի մասին: Մ. Սահակաշվիլու հետ կայացած հանդիպմանը նա մեկ անգամ ևս պատրաստակամություն է հայտնել աջակցել Վրաստանի կառավարության բոլոր այն ծրագրերին, որոնք ուղղված են Ջավախքի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Այդ նիստից սկսած, ինչպես նշեցինք, միջկառավարական հանձնաժողովները ղեկավարել են երկու երկրների վարչապետները, և, ճակատագրի բերմամբ, Վրաստանի նորանշանակ վարչապետ Ջ. Ժվանիայի համար այն եղավ առաջին և վերջին նիստը. մի քանի ամիս անց՝ 2005 թ. փետրվարի 3-ին, նա հեռացավ կյանքից: Նույն թվականին Երևանում տեղի ունեցած 4-րդ նիստի[7] շրջանակներում ևս, կրկին նորանշանակ վարչապետ Ջ. Նողաիդելու հետ Ա. Մարգարյանը քննարկեց նաև Ջավախքի ու ջավախահայության վիճակի և զարգացման հեռանկարների խնդիրները: ՀՀ վարչապետը մեկ անգամ ևս հաստատել է Ջավախքի տնտեսական վիճակի բարելավման ծրագրի մշակման և իրականացման գործում վրացական իշխանությունների հետ համագործակցելու ՀՀ կառավարության պատրաստակամությունը: Անդրադարձ է եղել նաև Վրաստանում վրացական համալսարան հիմնելու հարցին, Ջավախքում դպրոցաշինության հետ կապված խնդիրներին և մի շարք այլ հարցերի:

Հանձնաժողովի՝ 2006 թ. հուլիսին Բաթում քաղաքում տեղի ունեցած 5-րդ նիստի շրջանակներում ևս, Ա. Մարգարյանն իր ելույթներում անդրադարձել է ջավախահայության խնդիրներին՝ շեշտելով դրանք համատեղ ջանքերով լուծման հասցնելու կարևորությունը: Ողջունելով Վրաստանի իշխանությունների որոշումը՝ Սամցխե-Ջավախքի ենթակառուցվածքների վերականգնման վերաբերյալ, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը կարծիք է հայտնել, որ տեղի բնակչության շրջանում առկա լարվածությունը թուլացնելու նպատակով նպատակահարմար կլիներ տեղի գործարարներին և բնակչությանը ներգրավել նախատեսված շինարարական աշխատանքներում, մանավանդ, որ, ըստ նրա, տարածաշրջանի բնակչությունն այդօրինակ աշխատանքի որակյալ իրականացման փորձ ունի:

Անդրանիկ Մարգարյանը, օգտվելով հանդիպման պատեհ առիթից, մեկ անգամ ևս հավաստել է ՀՀ իշխանությունների պատրաստակամությունը՝ հնարավորինս աջակցելու Ջավախքի ենթակառուցվածքների վերականգնման ծրագրին: Հայաստանի կառավարության ղեկավարը նաև տեղեկացրել է, որ այս փուլում, երկու երկրների վարչապետների որոշման համաձայն, հայկական կողմը կօգնի Ջավախքի մի շարք կրթական հաստատությունների վերականգնմանը: Հետագա

«Վիրահայերի միասնություն» ՀԿ պաշտոնաթերթ

ՈՂՋՈՒՅՆ ՎԻՐԱՀԱՅԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԽՈՍՔ ԵՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ

<Վիրահայերի միասնություն> ՀԿ պաշտոնաթերթ

օժանդակության չափերն ու ձևերը, ըստ նրա, կորոշվեին տարածաշրջանի վերականգնման համալիր ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը հայկական կողմին փոխանցելուց հետո: Ա. Մարգարյանը կրկին անդրադարձել է Ջավախքում հայ-վրացական համալսարանի հիմնման կարևորագույն խնդրին՝ հույս հայտնելով, որ տվյալ տարվա ընթացքում այդ ուղղությամբ համապատասխան որոշում կկայացվի[8]:

Վերոնշյալ 5-րդ նիստը, ցավոք, վերջինը եղավ Ա. Մարգարյանի համար ևս. Մի քանի ամիս անց՝ 2007 թ. մարտի 25-ին ՀՀ վարչապետը հեռացավ կյանքից, և Հանձնաժողովի հետագա՝ 2007 (6-րդ)[9], 2008 (7-րդ)[10], 2010 (8-րդ)[11] և 2011 (9-րդ)[12] թվականներին տեղի ունեցած նիստերում այլևս երբեք ուղիղ իմաստով չշոշափվեց Ջավախքի հիմնահարցը:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ. ԱՌԿԱ ՎԻՃԱԿ ԵՎ ՀԵՌԱՀԱՐ ՎՏԱՆԳՆԵՐ

Վրաստանի Սահմանադրության մեջ կատարված վերջին (2017 թ.)[13] փոփոխությամբ երկրի մայր օրենքից հանվեց երկքաղաքացիության արգելքը: Նշյալ իրողությամբ պայմանավորված՝ փոփոխություններ կատարվեցին նաև «Քաղաքացիության մասին» Վրաստանի օրենքի մեջ: Դրանցով փորձ է արվում կանոնակարգելու երկքաղաքացիության ինստիտուտը և սահմանելու երկքաղաքացիության պայմանները:

Փաստենք, որ ջավախահայության շրջանում քաղաքացիության ոլորտին առնչվող խնդիրները ծանրագույններից են: Հետխորհրդային ողջ շրջանում, իսկ վերջին մեկ տասնամյակում՝ առավելապես, բազմահազար ջավախահայեր ձեռք են բերել ՌԴ և ՀՀ քաղաքացիության անձնագրեր: Դա կապված է եղել արտերկրում (Ռուսաստանի Դաշնություն) աշխատանքային

հարաբերությունները դյուրացնելու հետ, իսկ 2000 թվականից, այն է՝ ՌԴ-ի և Վրաստանի միջև այցագրային ռեժիմի հաստատումից, 2008 թվականից՝ նաև դիվանագիտական հարաբերությունների խզումից ի վեր, ՌԴ կամ ՀՀ քաղաքացիության անձնագիրը պարզապես միջոց էր մեկնելու արտագնա աշխատանքի:

Ստեղծված պայմաններում Վրաստանի իշխանությունները պարբերաբար ընդունում են որոշումներ, որոնք մշտական լարվածության մեջ են պահում ջավախահայությանը: Նմանօրինակ որոշումներ կայացվեցին 2014 թ.: ՀՀ և ՌԴ քաղաքացիներին թույլ տրվեց երկրում մնալ տարվա մեջ 180 օր՝ 90 օրյա ընդմիջումներով: Վրացական իշխանությունները զուգահեռաբար զանգվածաբար մերժեցին (և շարունակում են մերժել) Վրաստանի քաղաքացիություն չունեցող հազարավոր ջավախահայերի՝ Վրաստանում կացության իրավունք ստանալու դիմումները: Անգամ գրանցվել են փաստեր, որ, օրինակ, Վրաստանի իշխանությունները մերժել են կացության իրավունքի վկայական տրամադրել անգամ անչափահաս քաղաքացիներին՝ այն պաշտոնական պատճառաբանությամբ, թե իբր այդ անձինք պետության համար վտանգ են ներկայացնում (այդպիսի փաստերը բազմիցս շրջանառվել են նաև մամուլում):

Խուճապային իրադրությունը փոքր-ինչ մեղմվեց նշված որոշման մեջ փոփոխություններ կատարելուց հետո, երբ որոշակիորեն վերացվեցին Վրաստանի քաղաքացիություն չունեցող ՀՀ և ՌԴ քաղաքացիների՝ Վրաստանում մնալու սահմանափակումները: Ներկայումս այդ ժամկետը մեկ տարի է, որը հաշվարկվում է Վրաստան յուրաքանչյուր մուտքի օրվանից: Հիշեցնենք՝ քննարկված խնդիրը վերաբերում է Վրաստանի քաղաքացիությունից զրկված և մեծ մասամբ ՀՀ կամ ՌԴ քաղաքացիություն ունեցող ջավախահայերին:

Վերոնշյալ կարգավիճակ ունեցողների կողքին ապրում են նաև տասնյակ հազարավոր ջավախահայեր, ովքեր պահպանելով Վրաստանի քաղաքացիությունը, ձեռք են բերել այլ երկրի (հիմնականում՝ ՀՀ, ՌԴ) քաղաքացիություն:

Վրաստանի Սահմանադրության և «Քաղաքացիության մասին» օրենքում կատարված փոփոխության համաձայն՝ Վրաստանի քաղաքացին, որն ստանում է այլ պետության քաղաքացիություն, Վրաստանի քաղաքացիությունը պահպանում է այն դեպքում, եթե մինչև այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելը վրացական պետությունից ստանում է համաձայնություն վրացական անձնագրի պահպանման վերաբերյալ: Փաստենք, որ հազարավոր ջավախահայեր նախքան վերջին օրենսդրական փոփոխություններն արդեն ունեցել են այլ երկրի քաղաքացիություն, քանի որ մինչ այդ Վրաստանի օրենսդրությամբ հնարավոր չի եղել նախապես թույլտվություն ստանալ պետությունից: Նոր որոշմամբ՝ այդ քաղաքացիները պետք է մինչև 2020 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը Վրաստանի արդարադատության մարմիններում «խոստովանեն» այլ երկրի քաղաքացիություն ունենալու փաստը և ստանան այլ երկրի քաղաքացիությունը պահպանելու (կամ հակառակը՝ Վրաստանի քաղաքացիությունը պահպանելու) թույլտվություն:

Ցավոք, այս փոփոխությունները Ջավախքում ընկալվել են որպես երկքաղաքացիության լիարժեք կիրառում: Մարդիկ կարծում են, թե Վրաստանի քաղաքացիները ազատորեն կարող են ստանալ այլ երկրի քաղաքացիություն և պահպանել Վրաստանի քաղաքացիությունը: Արդյունքում բազմաթիվ ջավախահայեր, այս փոփոխություններից խանդավառված, ինչպես տարբեր առիթներով, այնպես էլ ուղղակի դիմում տալով, բացահայտում են այլ երկրի քաղաքացիություն ունենալու փաստը: Արդյունքում, ինչպես Վրաստանի քաղաքացիություն չունեցողների՝ կացության իրավունք ստանալու համար տված դիմումների դեպքում, այլ երկրի քաղաքացիությունը պահպանելու (Վրաստանի քաղաքացիությունից չզրկվելու) դիմումները ևս զանգվածաբար մերժվում են: Բնականաբար, թույլտվության մերժման պարագայում այդպիսի «ինքնաբացահայտված» քաղաքացիներն արագորեն զրկվում են Վրաստանի քաղաքացիությունից:

Այս թյուրըմբռնումն իրականում կարող է հետագայում առաջացնել առավել մեծ հիմնահարցեր: Վրաստանի իշխանությունները, օրինակ, կարող են շատ քիչ մարդկանց թույլ տալ ունենալու այլ

<<Ջավախք>> Հայրենակցական-բարեգործական միության շաբաթաթերթ

երկրի քաղաքացիություն՝ այդ ճանապարհով բացահայտելով տասնյակ հազարավոր ջավախահայերի՝ այլ երկրի քաղաքացիություն ունենալու փաստը և զանգվածաբար զրկելով նրանց Վրաստանի քաղաքացիությունից, իսկ կացության իրավունք չտալով էլ՝ Ջավախքում ապրելու իրավունքից:

Ավելորդ չենք համարում նշել նաև, որ Վրաստանի կորցրած քաղաքացիությունը վերականգնելը գործնականում անհնար է, քանի որ այստեղ ևս ջավախահայերը բախվում են բազմիցս չարչրկված լեզվական խոչընդոտներին. Վրաստանի քաղաքացիությունը վերականգնելու համար պահանջվում է քննություն հանձնել վրացերենից՝ պատասխանելով վրաց լեզվին, պատմությանն ու օրենսդրությանն առնչվող 200-600 հարցի: Բնականաբար, սա անհաղթահարելի պատնեշ է, ինչի պատճառով էլ հազվադեպ են ջավախահայության՝ քաղաքացիություն ստանալու դիմումների բավարարման դեպքերը:

Ամփոփելով փաստենք. նոր օրենքով Վրաստանի քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև Վրաստանի քաղաքացիության հետ այլ երկրի քաղաքացիություն ունեցող հայերի ճակատագրի որոշման վերջնական իրավունքը վերապահվում է Վրաստանի իշխանություններին, և ջավախահայերը պետք է «իրենց լավ պահեն»՝ Վրաստանի իշխանությունների «բարի կամքը» շահելու և իրենց հայրենիքում կեցության իրավական երաշխիքներ ստանալու համար: ■

Օգտագործված Աղբյուրներ

1.Մինչ Սփյուռքի նախարարության կազմավորումը Վրաստանի (այդ թվում՝ Ջավախքի) դպրոցներին ՀՀ-ի կողմից դասագրքեր են տրամադրվել ԿԳ նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության Սփյուռքի հետ կապերի բաժնի միջոցով: Սփյուռքի նախարարության կայացումից հետո այդ գործառույթն անցել է նշյալ նախարարությանը, իսկ ԿԳ նախարարության Սփյուռքի հետ կապերի բաժինն այդ փուլում նախաձեռնում էր կրթական ոլորտին առնչվող համահայկական բնույթի միջոցառումներ (խորհրդաժողովներ, օլիմպիադաներ և այլն), որոնց մասնակցում էին նաև Վրաստանի (այդ թվում՝ Ջավախքի) հայկական դպրոցների ուսուցիչներն ու աշակերտները: Նախարարության լուծարմամբ Ջավախքի դպրոցներին հայագիտական դասագրքերով ապահովելու գործառույթը կրկին դրվեց ԿԳՄՍ նախարարության հիշյալ բաժնի վրա:

2. Հանձնաժողովի 2-րդ նիստը գումարվել է 2001 թ. հունիսին 29-ին՝ Երևանում (https://www.gov.am/am/news/item/223/): Սկսած 3-րդ նիստից (2004 թ., Թիֆլիս)՝ միջկառավարական հանձնաժողովները ղեկավարել են երկու երկրների վարչապետները:

3. Գործարար համագործակցության ընկերակցությունն ստեղծվել է ՀՀ երջանկահիշատակ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի օրոք և նախաձեռնությամբ
(https://www.gov.am/am/news/item/1456/):

4. Առևտրատնտեսական հարցերով համատեղ աշխատանքային խմբի նիստերը գումարվել են 2014թ. մարտին և դեկտեմբերին (https://www.mfa.am/hy/bilateral-relations/ge):

5. Հանձնաժողովի 10-րդ նիստը տեղի է ունեցել Երևանում (տես ՀՀ կառավարության 2019 թ. հունիսի 27-ի լրահոսը, https://www.gov.am/am/news/item/13873/):

6. Հանձնաժողովի 3-րդ նիստը տեղի է ունեցել Թիֆլիսում (տես ՀՀ կառավարության 2004 թ. հուլիսի 26-ի պաշտոնական լրահոսը, https://www.gov.am/am/news/item/1338/):

7. Հանձնաժողովի 4-րդ նիստը տեղի է ունեցել Երևանում (տես ՀՀ կառավարության 2005 թ. սեպտեմբերի 29-ի պաշտոնական լրահոսը, https://www.gov.am/am/news/item/1801/):

8. Հանձնաժողովի 5-րդ նիստը տեղի է ունեցել Բաթումում (տես ՀՀ կառավարության 2006 թ. հուլիսի 7-ի պաշտոնական լրահոսը, https://www.gov.am/am/news/item/2485/):

9. Հանձնաժողովի 6-րդ նիստը տեղի է ունեցել Երևանում (տես ՀՀ կառավարության 2007 թ. հուլիսի 7-ի պաշտոնական լրահոսը, https://www.gov.am/am/news/item/4365/):

10. Հանձնաժողովի 7-րդ նիստը տեղի է ունեցել Թիֆլիսում (տես ՀՀ կառավարության 2008 թ. դեկտեմբերի 9-ի պաշտոնական լրահոսը,https://www.gov.am/am/news/item/6809/):

11. Հանձնաժողովի 8-րդ նիստը տեղի է ունեցել Երևանում (տես ՀՀ կառավարության 2010 թ. հունվարի 26-ի պաշտոնական լրահոսը, https://www.gov.am/am/news/item/7753/):

12. Հանձնաժողովի 9-րդ նիստը տեղի է ունեցել Բաթումում (տես ՀՀ կառավարության 2011 թ. նոյեմբերի 19-ի պաշտոնական լրահոսը, https://www.gov.am/am/news/calendar/2011/11/19/):

13. Նոր Սահմանադրությունն ուժի մեջ է մտել Վրաստանի հինգերորդ նախագահ Ս. Զուրաբիշվիլու երդմնակալությունց անմիջապես հետո՝ 2018 թ. դեկտեմբերի 16-ին: Վրաստանի գործող Սահմանադրությունն ընդունվել է 1995թ-ին: 109 պարագրաֆներից կազմված Սահմանադրությունն այդ օրվանից փոփոխվել է 33 անգամ: Ամենամեծ փոփոխությունները Վրաստանի Սահմանադրությունը կրել է Վրաստանի երրորդ նախագահ Միխայիլ Սահակաշվիլու կառավարման տարիներին: Այդ ընթացքում Սահմանադրության մեջ 25 փոփոխություն է արվել:

Հայաստան – ՀՅԴ – Սփիւռք (5) (ժամանակակից շրջան – 4)

Մկրտիչ Մկրտիչեան

Հայ-թրքական համաձայնագրերու (փրոթոքոլներու) ճակատագիրը ծանօթ է բոլորին: Անոնց նախնական ստորագրութեան արարողութիւնը հեզասահ չընթացաւ: Նախատեսուած ժամուն պէտք եղաւ ԱՄՆի և որոշ չափով Ռուսիոյ արտաքին գործոց նախարարներու միջամտութիւնը՝ համոզելու համար ՀՀ արտաքին գործոց նախարարը ներկայանալու հանդիսասրահ. վերջին վայրկեանին Թուրքիոյ արտաքին գործոց նախարարը խօսք առնել ուզած էր համաձայնագրերու ստորագրութենէն ետք: Համաձայնագրերը ստորագրուեցան նկատելի յապաղումով:

Ուշագրաւ է սակայն այն, որ համաձայնագրերու ստորագրութենէն գրեթէ անմիջապէս առաջ Երևանի մէջ հեռատեսիլէն սփռուեցաւ նախագահ Ս. Սարգիսեանի մէկ յայտարարութիւնը անոնց մասին: Յայտարարութեան մէջ նախագահը բառացիօրէն կը կրկնէր Դաշնակցութեան ունեցած վերապահութիւնները համաձայնագրերու պարունակութեան վերաբերմամբ:

Նախագահին կողմէ համաձայնագրերը յղուեցան Սահմանադրական դատարան՝ ճշդելու համար անոնց սահմանադրականութիւնը: Դատարանը ըրաւ նոյն դիտողութիւնները, ինչ ըրած էին ժամանակագրական կարգով Դաշնակցութիւնը և նախագահ Ս. Սարգիսեանը: Անկէ ետք համաձայնագրերը անցան խորհրդարան: Այդտեղ տարիներ մնալէ ետք անոնք վերջիվերջոյ ետ քաշուեցան նախագահին կողմէ իր պաշտօնավարութեան աւարտէն անմիջապէս առաջ:

Թուրքիոյ հետ յարաբերութիւնների այսպիսի գէթ ժամանակաւոր աւարտը անտարակոյս կը կրէ սփիւռքահայ քաղաքական մտքի ազդեցութիւնը: Հեռու չեն անցեալի այն օրերը, երբ Հայաստանի նորաստեղծ հայրենաբնակ քաղաքական բեմը, յոգնած այլևս խորհրդային շրջանի՝ տասնամեակներ տևած ռուսական ճնշումներէն, իր հարցերու լուծման ելքը կը փնտռէր արևմտեան ուժերու հետ գործակցութեան մէջ: Իսկ շրջանէն ներս անոնց ներկայացուցիչը Հիւսիսատլանտեան դաշինքի (NATO) անդամ Թուրքիան էր: Ռ. Քոչարեանի օրով Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման՝ իբրև ՀՀ անվտանգութեան երաշխիքի պաշտօնական որդեգրումը, Դաշնակցութեան տևական ճնշումը այդ ուղղութեամբ, փաստօրէն, զգօն պահեցին ՀՀ իշխանութիւնները հայ-թրքական յարաբերութիւններու կայացման աշխատանքին մէջ:

Սերժ Սարգսեանը ընթերցում է Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի հռչակագիրը: Ծիծեռնակաբերդ, 24 ապրիլի 2015թ.

Միւս կողմէն, 2011 ապրիլ 23-ին նախագահական հրամանագրով կեանքի կոչուեցաւ Հայոց ցեղասպանութեան 100ամեակի պետական յանձնաժողովը, որ իր կազմով համահայկական բնոյթ ունէր: Ցեղասպանութեան 100ամեակը պատշաճ կերպով նշելու զանազան ձեռնարկներու տեսակն ու քանակը որոշելու և անոնց կազմակերպական աշխատանքները համակարգելու պարտականութենէն անդին՝ այս յանձնախումբը պատրաստեց և 1915ի սկիզբը հրապարակեց Հայոց ցեղասպանութեան 100ամեակի համահայկական հռչակագիրը, որ իր տեսակին մէջ հայոց ազգային կամքը արտայայտող միակ փաստաթուղթը հանդիսացաւ: Այս հռչակագիրը կը կրէ ՀՀի, Հայաստանեայց եկեղեցւոյ երկու կաթողիկոսութիւններու և Սփիւռքի մէջ ալ գործող քաղաքական կազմակերպութիւններու ներկայացուցիչներու ստորագրութիւնը:

Հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան մէջ երկրորդ անգամն էր, որ ազգային հարցի մը շուրջ համեմատաբար հեզասահ կերպով միակամ ու համերաշխ կեցուածք կը բիւրեղանար: Առաջին անգամուն՝ 1965ին՝ Հայոց ցեղասպանութեան յիսնամեակին, Սփիւռքի մէջ գործող քաղաքական երեք ազգային կուսակցութիւնները համաձայնութեան եկած էին՝ սկսելու Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման հասնելու արշաւը. քաղքենիացման վայրէջքի ճամբան բռնած սփիւռքեան համայնքները

ընդոստ սթափեցան: Միաժամանակ Երևանի մէջ տեղի ունեցան ցոյցեր, որոնք համահունչ էին Լիբանանի մէջ տեղի ունեցող ոգեկոչման հանդիսութեան: Հայութիւնը ազգային օրակարգի գէթ մէկ կէտի շուրջ, հակառակ քաղաքական անսպասելի պայմաններուն (Երևանի երիտասարդ ցուցարարներէն ոմանք անպատիժ չմնացին), սկզբունքային միացեալ դրօշ պարզեց միջազգային բեմին վրայ. Հայոց ցեղասպանութեան ճանաչում և գրաւեալ հողերու վերադարձ անոնց իրաւատիրոջ՝ հայութեան:

Այսպէս, ցեղասպանութեան հարցի շուրջ միջազգային բեմին անտարբերութեան պատճառած՝ հայկական ընդհանուր հաւաքականութեան հոգիին մէջ անթեղուած ներքին խռովքը մակերես ելաւ: Ատենին Հայաստանի առաջին հանրապետութեան անկման գլխաւոր պատճառներէն մէկը խորհրդային կարգերու և քեմալական իշխանութեան համագործակցութիւնը եղած էր: Այդ պատճառով նաև արմատապէս խանգարուած էր ներհայկական միասնականութիւնը. Հայաստանի համայնավար ներկայացուցիչները բաւական ուշ անդրադարձան կատարուած անիրաւութեան: Ցեղասպանութեան յիսնամեակով Հայկական հարցը երկչոտ և սկսելու համար սիրողական քայլերով կրկին իր գլուխը կը ցցէր միջազգային քաղաքական բեմին վրայ:

Սակայն այդ միասնականութիւնը, որ հաւանաբար պէտք է յատկանշուէր ազգային համապարփակ ծրագրի մը առկայութեամբ, ամբողջական չէր: Խորհրդային իշխանութիւններուն և սփիւռքեան որոշ ուժերու կողմէ Խորհրդային Հայաստանի գոյութիւնը կը նկատուէր որպէս Հայկական հարցի լուծում: Դաշնակցութիւնը հաւատարիմ մնացած էր անկախ պետականութեան գաղափարին: Խորհրդային Միութեան փլուզումով վերստեղծուեցաւ Հայաստանի անկախ պետական կառոյցը, որ ամրագրուեցաւ Արցախի ազատագրական պայքարի յաջող ելքով:

Հայոց ազգային ծրագրի շուրջ հայկական ամբողջական համախոհութեան կայացումը պիտի սպասէր ցեղասպանութեան հարիւրամեակին՝ համապատասխան պետական յանձնաժողովի հռչակագրով, երբ Հայաստանի Հանրապետութիւնը թեւակոխած էր իր գոյութեան 24րդ տարին: Այս հռչակագիրը թերևս ուշացած, բայց չափազանց կարևոր վաւերագիր մըն է, որուն տարողութիւնը ներկայի փոթորկոտ կեանքի ժխորին մէջ իր կարևորութեան համապատասխանող ուշադրութեան չարժանացաւ:

Այդ հռչակագիրը, ի շարս այլոց, կ'ըսէ.

«(Յանձնաժողովը) արտայայտում է Հայաստանի և հայ ժողովրդի միասնական կամքը՝ Հայոց ցեղասպանութեան փաստի համաշխարհային ճանաչման հասնելու և ցեղասպանութեան հետևանքների յաղթահարման հարցում, ինչի համար մշակում է իրական պահանջների

թղթածրար՝ դիտելով այն անհատական, համայնքային և համազգային իրաւունքների և օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ:

- - - - - - - -

Կոչ է անում հայորդիների գալիք սերունդներին՝ հայրենասէր, գիտակից և ուսեալ կեցուածքով պաշտպան կանգնել հայրենի սրբազան ժառանգութեանը, աննահանջ պայքարով ծառայել յանուն՝

– առաւել հզօր հայրենիքի՝ ազատ և ժողովրդավար Հայաստանի Հանրապետութեան,

– անկախ Արցախի առաջընթացի ու զօրացման,

– աշխարհասփիւռ հայութեան գործուն համախմբման,

– համայն հայութեան դարաւոր նուիրական նպատակների իրականացման»:

Հռչակագրի այս բաժինը կը պարունակէ հայութեան ազատագրական պայքարի զարգացումով, ժամանակի թաւալումով նպատակային բիւրեղացման հասած, թէն դիւանագիտական, բայց բաւական յստակ լեզուով ներկայացուած՝ հայ ժողովուրդի՝ հայրենաբնակ թէ սփիւռքահայ, ազգային կամքի արտայայտութիւնը: Հռչակագրին մէջ գործածուած բառերը (իրաւունքներու և շահերու վերականգնում, հայութեան դարաւոր նուիրական նպատակներու իրականացում) ճշգրիտ կերպով կշռուած են. պէտք չէ մոռնալ, որ գրութիւնը ստորագրուած է երկրի նախագահին կողմէ, այսինքն՝ իր բնոյթով, ապագայի ծրագիր ըլլալով հանդերձ, ան բնականօրէն առնչութիւն ունի նաև առօրեայ քաղաքականութեան զանազան բնագաւառներու հետ, ներառեալ՝ արտաքինի:

Ընկալուած է հռչակագրի պարունակութիւնը հայկական ամբողջ հասարակութեան կողմէ:

Այս հարցումին դրական պատասխան տալը զուրկ է իրապաշտութենէ: Ցեղասպանութեան 100ամեակի հռչակագիրը, ապագայի ծրագիր ըլլալով հանդերձ, ունի, սակայն, նաև ներկայի աշխատանքային ծրագրի բաժին: Ան կոչ կ'ուղղէ ապագայ սերունդներուն համահունչ ըլլալու անոր դրոյթներուն, ինչ որ կ'առաջնորդէ սերունդները ըստ այնմ պատրաստելու պահանջի: Արդ առկայ է կրթական մարզի վերաբերմամբ քաղաքական հոսանքներու միջև տարակարծութիւն, որ հայ-թրքական յարաբերութիւններու շուրջ տարակարծութեան՝ ապագայի մէջ փոխադրումն է պարզապէս: Վերջապէս կրթութիւնը երեխան ու պատանին դաստիարակի պատկերով ապագայ հանրութեան համար պատրաստելու արուեստն է, մէկ խօսքով՝ կրթական ծրագրի պարունակութիւնն ալ կախեալ է տուեալ հռչակագրին հանդէպ մեր վերաբերումէն, անոր մասին իւրաքանչիւրիս ունեցած դրական կամ ժխտական կարծիքէն: Ակամայ կը մտածես, որ շատ բան չէ փոխուած: Ատենին կար Հռոմի (ապա՝ Բիւզանդիոնի) և Պարսկաստանի միջև ընտրութեան հարց, դարեր վերջ՝ Օսմանեան և Ռուսական կայսրութիւններու միջև: Այսօր ալ՝ համաշխարհայնացած բեմին վրայ՝ Արևելքի և Արևմուտքի միջև: Ասիկա Վարդան Մամիկոնեանի և Վասակ Սիւնիի տևական պայքարն է, որ անխոհեմ ընթանալու պարագային, դժբախտաբար գրեթէ միշտ, աղետալի հետևանքներ կ'ունենայ: Առաջինը՝ Վարդանը, մեռաւ., երկրորդը՝ Վասակը, չապրեցաւ: Քաղուելիք դասը՝ առողջ համախոհութեան հրամայականն ու անյետաձգելիութիւնը ինչպէս կսէ Եղիշէ Չարենց՝ թէկուզ, գաղտնագիրով: Մեր օրերուն համախոհութեան գալէ դեռ շատ հեռու ենք՝ կ'երևի: Եւ այս՝ հակառակ այս ուղղութեամբ թափուած բոլոր ճիգերուն: Ի դէպ, Դաշնակցութիւնը գոնէ ցեղասպանութեան 50ամեակէն ասդին թէ՛ հայրենիքի, թէ՛ արտերկրի մէջ ընթացած է այդ համախոհութիւնը յառաջացնելու երկար ուղիով՝ ատոր համար յաճախ վճարելով քաղաքական ու քարոզչական պատկառելի գին:

Բայց համախոհութեան կայացումը անկարելի բան չէ, մանաւանդ որ մեր երկրի դրացիները այլընտրանք չեն արտօսեր. անոնց յարձակողականութիւնը հայութեան առջև մնացեալ բոլոր ճամբաները ինքնաբերաբար փակած է: Հայութեան միակամութեան ականատես եղանք 2016ի Ապրիլեան քառօրեայ պատերազմի ընթացքին, երբ հայկական բանակը իր զինուորական գործողութիւններուն ընթացքին, թիկունքին գէթ առժամաբար ունենալով միակամ հասարակութիւն մը, յաջող կերպով ծառացաւ ազերի ուժերու յանկարծակի լայնածաւալ յարձակման դէմ: Շատեր այն կարծիքին էին, թէ հայութիւնը, իր ներքին հարցերով մաշեցուցած ըլլալով իր միակամութիւնը, նոյն ձևով պիտի չհակազդէր թշնամիին դէմ, ինչպէս մօտաւոր անցեալին՝ 1988ին շղթայազերծուած ազատագրական պայքարի ատեն:

Յամենայնդէպս, ինչ ալ ըլլայ ներկայ իրավիճակը, Հայոց ցեղասպանութեան 100ամեակի հռչակագիրը մեր ժողովուրդի ժամանակակից կեանքի մէջ պատմութիւն կերտելու կոչուած հանգրուան է: Պէտք չէ վարանիլ յայտնելու, թէ այդ հռչակագրի մէջ յայտնուած մտածողութիւնը գործնականին մէջ Սփիւռքի մէջ խորհրդային եօթը տասնամեակի ընթացքին Դաշնակցութեան կողմէ պահպանուած ու պաշտպանուած՝ Հայաստանի առաջին հանրապետութեան մտածողութեան համահայկականացումն է, ինչ որ կար արդէն Առաջին հանրապետութեան կեանքի ընթացքին աւելի ընդհանրացած առումով, քան այսօր: Հետևաբար այս հռչակագիրը կը կրէ Սփիւռքի ազդեցութիւնը: Պէտք է մատնանշել նաև, որ, նախորդ դարու երեսունական թուականներու սկիզբը հայրենիքի մէջ դաշնակցական ընդհատակեայ կազմերու ինքնալուծարումին հակառակ, հայրենաբնակ անհատներ կամ խումբեր շարունակեցին սնուիլ դաշնակցական գաղափարներով, որոնք մեծ դժուարութիւններով անոնց կը հասնէին երկրէն ներս գաղտնաբար ներմուծուող գրականութեան միջոցով: ■

Մայիսի 9-ի շքերթը Ստեփանակերտում

Հայաստանի վերածնունդը

ԴՐՕՇԱԿ